



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4430

Uptonia geytelp.

1907p 3-11 74.

891.99-192

U-91

0 9p.

4430

2011-05

ՀՐԱՏՈՒՄԻՆ Ս. Մ.-ՍՈՂՈՐՈՆԵԱՆ



50\*

Ա Ն

Ա Չ Ա Յ Ն Ե Ր

Երբ որ Գրքի Գրքի


Թող արեան ձայնը, վրեժը ժիպայի,  
Արձագանկ գնի հաշտեան արտա՛մ.  
Բողոքն անշամի կուի մեզ կանչի,  
Որ ազատ շնչեմք մեր սիրուն երկրա՛մ:  
ՍԻՅԻՐ

891.542-19  
Ա-92

Թ Ի Յ Լ Ի Ս  
Եկե՛ք ազատ սպորտ «Հ Ե Ր Մ Ե Ա» ընկերության  
1907 (245)

Վերջին հարապետի մեծ վճարեալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՒՆՆԵՐԻ Ս. ՄԵԼԻՔ-ՍԱԳՆԱՍԻՆԵՆԻ



# ԱՐԵՎԵ ԶԱՅՆԵՐ

50



Երբ որ  
տղամարդիկն



Թող արեան ձայնը, վրեժը ժողայի,  
Արձագանք գնի հայուրեան արժամ.  
Բողոքը նեւածի կուռի մեզ կանչի,  
Որ ազատ ընչեմք մեր սիրուն երկրում:



ՍԻՆԻԲ

Թ Ի Յ Լ Ի Ս

Էյեֆսուզարտ սպարակ «Հ Ե Ր Մ Է Ս» ընկերութեան

1907

(245)

3644

4430

4430



### ԵՐԿՈՒ ԽՕՍԻՔ

Իզուր չէ ասուում, թէ իւրաքանչիւր երկրի ժողովրդական երգը ընթացիկ կեանքի հայելին է:

Այդ երգի ելևէջների մէջ անդրադառնում են ժողովրդի վիշտն ու թախիծը, դառնութիւնն ու երջանկութիւնը:

Ինչպիսի պատկեր է ներկայացնում ընթացիկ կեանքը, նոյնպիսի շեշտեր էլ հնչեցնում է ժողովրդական երգը:

Այդպէս է ամեն տեղ, այդպէս է և մեզանում—հայերիս մէջ: Վերջին տարիներում հայկական կեանքը՝ թէ թիւրքիայում և թէ Ռուսաստանում անվերջ արիւնհեղութեան ու աւերածութեան առարկայ է դարձել, ուստի և հայի ժողովրդական վերջին երգերն էլ շարունակ «արիւնոտ ձայներ» են հնչեցնում, միևնոյն ժամանակ գովելով ու փառաբանելով այն յեղափոխական հերոսներին, որոնք իրանց կեանքի գնով աշխատել են բռնակալութեան ու դաժանութեան հարւածները դիմագրաւել, սեփական արիւնով մեղմացնել ու ոչնչացնել:

Ահա այդ երգերը, գաղափարական հերոսների այդ գովքն ու փառաբանութիւնն է, որ հաւաքագրելով «Արեան Ձայներ» խորագրի տակ, առաջարկում ենք ընթերցողներին:

Գիտենք՝ շատ թերութիւններ ունի այս ժողովածուն, բայց յուսով ենք, որ ընթերցող հասարակութիւնը ներողամիտ կըլինի, աչքի առաջ ունենալով, որ մենք միայն հաւաքագրած հում նիւթեր ենք առաջարկում «Արեան ձայներով» և ոչ թէ քննադատական—գիտական մի աշխատութիւն:

Մենք տալիս ենք հում նիւթը, իսկ նրա վերլուծումը, նշանակութեան ու էութեան բացատրութիւնը թող կատարեն աւելի ձեռնհաս մարդիկ:

Ս. Մելիք-Սողոմոնեան

ՉԱՅԱՍՏԱՆԻ ՉԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Ի ՅԻՇԱՏԱԿ  
ՅՈՒՂԱԲԵՐ  
ՍԵՐՈՐՅԱՆ-ԻՆՃԻԿՅԱՆԻ  
Ի՝ 23-Ն ՇՈՒՆՎԱՐԻ 1929 Ք. ԹԻՖԼԻՍ

Հանրապետական  
գրադարան  
36411

+



**ԵԿԱՆ ՈՒ ԱՆՑԱՆ**

(«Չախորդ օրեր»-ի եղանակով)

Կարկուտ, ջրհեղեղ, շանթ ու կրակ եկան ու անցան.  
Փայռի վերայից աննպատակ եկան ու անցան.  
Արգար ու տոկուն մարդը մնաց իր տեղը անշարժ,  
Անթիւ սրիկայ, գող, աւազակ եկան ու անցան.

Թուխը ձագերը, իւր տնակը չը թողեց անտէր.  
Բազում գունի թռչնոց երամակ եկան ու անցան.  
Ապրեց տկարը և չը մեռաւ, ոյժ տւեց Սասաձ,  
Ցաւեր զանազան հաստ ու բարակ եկան ու անցան:

Քանդել ուզեցին որբի տունը, բայց մնաց հաստատ.  
Ջոկ-Ղոկ ցեղի բանւոր ու մշակ եկան ու անցան.  
Ջրկող, կեղեքող մարդիկը, տէս, Ջիւանի երգիչ,  
Մեռան ու կորան անյիշատակ, եկան ու անցան:



**Գ Ա Ր Ո Ւ Ն**

Կարկտձեց արտերը, երբ նորից բուսնին,  
Դաշտերը կանաչեն, ծառերը ծաղկին,  
Սարերը, ձորերը ծաղկով պճնւրէին  
Գուցէ ես հաւատամ թէ գարուն է ճիշտ:

Երբ որ ձիւնը դադրի և անձրև տեղայ,  
 Որոտայ երկինքը և ամպը գոռայ,  
 Երբ ծարաւ երկիրը յագի կշտանայ,  
 Գուցէ ես հաւատամ թէ գարուն է ճիշտ:

Երբ որ Մասիս սարին Աւետիս կուտան—  
 Արարատը կը հագնի նոր պատմութեան,  
 Երբ հեռացած թռչունները յետ դառնան,  
 Գուցէ ես հաւատամ թէ գարուն է ճիշտ:

Երբ որ պայծառ արեգակը իր արդար  
 Լոյսը կը տարածէ համահաւասար,  
 Երբ անխտիր կը ծիծաղեն հող ու քար,  
 Գուցէ ես հաւատամ թէ գարուն է ճիշտ:

Մարտի տանն է, դեռ արագիւր չի գայ,  
 Աւետաբեր սարեակը չի ճըւվողայ,  
 Երբ իմ ասածներուս ոչ մէկը չը կայ,  
 Դժուար ես հաւատամ թէ գարուն է ճիշտ:



ԵՐԿՈՒՍԸ ՄԵ՛Կ ԵՆ

Երբ որ լեզուն լուռ է, ոտք ու ձեռք կապած,  
 Հա բանտ, հա գերեզման—երկուսը մէկ են.  
 Այն որ մարդուն վերջը մահ կայ անկասկած,  
 Հա բարձ, հա կախաղան երկուսը մէկ են:

Անվախներուն բիւր ու հազար երանի,  
 Մարդ նրանք են, մարդկութեան մէջ պիտանի.

Կենդանին էլ անշուշտ պիտի մեռանի,  
 Հա մեռած, հա կենդան—երկուսը մէկ են:

Խելացի էակ է, մարդը բնական  
 Աստուած պարգևել է լեզու և բերան.  
 Բայց երբ ազատ խօսք չը կայ հրաման,  
 Բանաւոր թէ անբան—երկուսը մէկ են:

Եթէ քննենք, ի՞նչ է կեանքը. յիրանի,  
 Ամբար է հոգսերու և բուն է ցաւի:  
 Որովհետեւ Զիւանն էլ կը պառաւի  
 Հա պառաւ, հա Զիւան—երկուսը մէկ են:



ՀՊԱՐՏ ՏԻԿԻՆ

Աչքերդ խփեցիր, բերանդ բացիր,  
 Կոյրի պէս գնացիր անդունդն ընկար,  
 Սխալմունքիդ վերայ ողբալով լացիր,  
 Թուխ շորեր հագնելով սև ու սուգ մտար:

Ուզեցիր որ դառնաս սիգածեմ կաքաւ,  
 Դուրս եկար այլակերպ գորշ ագեղ ագռաւ.  
 Յաւիդ վերայ աւելացաւ մի նոր ցաւ,  
 Կոյր ու խուլ, խեղանդամ մի աղջիկ ծնար:

Անգութ Մորփէոսը վրադ քուն թափեց,  
 Ննջած ժամանակ հասակդ չափեց.

Գաճաճ կինը մրցութեան մէջ քեզ չափեց,  
Բոլոր աշխարհի մէջ խայտառակ եղար:

Արամազդը պատժեց քեզ, անգութ տիկին,  
Օղային ամրոցդ տապալեց գետին.  
Ազահութեան լիճը մտար գլխովին,  
Փոխան մաքրուելու կեղտոտ դուրս եկար:



Բ Ա Գ Ո Ի

Հարուստ, երջանիկ Բագու, յանկարծ ցաւագար դառար,  
Անհող, ուրախ ապրողդ ցաւի, սուգի մէջ մտար.  
Ախ, քու բաղդիդ թշնամին սատանի շորեր հագաւ,  
Իրար կոտորել տուեց, ժողովրդիդ մէջ մտաւ.  
Թուրք խուժանը սրտեղից զէնք ու փամփուշտ ունեցաւ,  
Յարձակեց հայոց վերայ, որպէս անմեղ ու խելագար:  
Այ ու անեակ չը նայեց, կոտորեց հանդիպողին,  
Մայրը մանուկը մոռցաւ, մանուկը իւր ծնողին.  
Աստուած տունը աւերէ, քանդէ պատճառ եղողին,  
Այրեցին, հրկեհեցին, էլ հայի տուն չը թողին.  
Գործերը յաջող գնաց զրպանահատին ու գողին,  
Անմեղ հայի բրտինքով վաստակը գնաց աւար:  
Սպանդանոց էր դառել Բագուի հրապարակը,  
Իրար մօտ ընկած էին, հայի, թուրքի դիակը.  
Ով որ կարող էր մարել, չէր մարում այս կրակը.

Հեռուն կանգնած դիտում էր չը շարժելով մահակը.  
Տներու մէջ փակւած դառն էր հայոց վիճակը,  
Իրսում հրացանները գոռում էին անդադար:  
Միամիտ ու անպատրաստ հայը չունէր ոչ մի բան,  
Բայց թուրքերը ունէին ատրճանակ, հրացան,  
Հայի մտքից չէր անցնում բնաւ երբէք յաւիտեան.  
Թէ թուրքին մի վնաս տայ, կամ վիրաւորէ նրան.  
Թուրքն էլ հայի հետ սիրով, հաշտ էր ապրում մշտական.  
Ով ցանեց սրանց մէջը ատելութեան սերմը չար:  
Թէ մեռած թէ վիրաւոր, երկուսիցն էլ անազին,  
Արտերը կոտորւած է թէ թուրքին և թէ հային.  
Որը եղբայրը կուլայ, որը որդին թանգագին  
Կինը մարդն է որոնում, տեսնելու չէ վերստին,  
Տայ Աստուած այս դէպքերը այլ ևս չը կրկնին  
Թուրքն ու հայը միասին հաշտ ապրեն եղբայրաբար:  
Օգնութեան կարօտ եղար, աւատ ողորմած Բագու,  
Բարեգործութեան համար միշտ բարձր կանգնած Բագու,  
Ոսկէ շողակի նման աշխարհից սիրւած Բագու,  
Այժմ տխուր ու տրտում հագսի մէջ ընկած Բագու.  
Չարդ ու բարիդ չիմացող միամիտ քնած Բագու,  
Աշխարհին լոյս ես տալիս, դու քեզ պահում ես խաւար:  
Հագար իննը հարիւր հինգ թիւը անցնի վերջնայ,  
Օրպակաս փետրւարի զէշ երեսը սեանայ,  
Դնդակ կարմիր ամիս ձեռքերը արիւնլայ,  
Այսպէս օր, այսպէս տարի, թող չը տեսնենք, էլ չը գայ:  
Զիւան խնդրէ Արարչից հաշտութեան նոր հոգի տայ,  
Մի նոր Փրկիչ ուղարկէ ամբախտ կովկասի համար:

ԹՈՒՐԻՔԸ ԵՒ ՀԱՅՐԸ

(շէքի)

Մի կայսեր հպատակ, մի երկրի զաւակ  
Ու մէկ օրէնքի տակ թուրքը և հայը  
Կանգնել են հակառակ մէկ մէկու ներհակ,  
Արձակում են գնդակ թուրքը և հայը:

Մէջ աեղը կայ մէկ չար խորամանկ ճարտար,  
Չար գործին դեկավար, ինքը մութ խաւար,  
Կարձել են խելագար, արեան սիրահար,  
Կոտորում են իրար թուրքը և հայը:

Իրարու գնդակող, սաստիկ ապտակող,  
Տները խորտակող, քանդող, կրակող,  
Անուն պախարակող և նշաւակող  
Կովկասում բնակող թուրքը և հայը:

Կուեցուց չար հոգին թուրքին ու հային,  
Ծափ տւեց առանձին, հրճուեց արտաքին,  
Եթէ չը հաշուեն, երկուսն էլ կընկնեն,  
Գիտին կը տապալ են թուրքը և հայը:

Ինչ կայ մէջը, Չիւան, երկու ազգութեան  
Յայտնի չեղաւ մէկ բան քննեցին այսքան  
Անվայել գործ տեսան երկու հարեան,  
Ինչո՞ւ թշնամացան թուրքը և հայը:



ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՀՐԵՇՏԱԿ

Հաշտութեան և սիրոյ բարի հրեշտակ,  
Սոսված աշխարհին խաղաղութիւն բեր.  
Արագ թռիք, արի, նոյեան աղաւնեակ  
Գալստեանդ սպասում ենք անհամբեր:

Կամար կապէ աղեղնակը լուսատու,  
Պայծառ աստղը, արուսեակը լուսատու.  
Թող մեզ իշխէ արեգակը լուսատու,  
Չենք ուզում որ լինի մութ խաւար գիշեր:

Գթա և ողորմեա, երկնային իշխան,  
Հաշտութեան հոգի տուր բոլոր մարդկութեան  
Ինչո՞ւ համար մէկը մէկին վնաս տան,  
Մարդը մարդուն համ եղբայր է համ ընկեր:

Թող բացւին քո, աղբիւրներդ լուսածով,  
Բոլոր մարդիկ ապրեն հանգիստ ապահով.  
Մնայ պատկառելի խաղաղ անխռով,  
Լայնածաւալ, հզօր, մեծ աշխարհը մեր:

Իրար յարգեն, սիրեն թէ ծեր թէ ջիւան,  
Մարդիկ ապրեն խաղաղ սիրով միաբան,  
Սոսվութեան ամպերը թող հեռանան  
Արդարութեան հոգին թող բարձրանայ վեր:



ՉԱՐ ԴԵՒԸ

Ապշերոնեան թերակղզու չար դեը  
Եկաւ մտաւ Արարատեան աշխարհը,  
Փոխեց խաղաղ ժողովրդի հին ձևը,  
Գլորեց պիղծ գայթակղութեան քարը:

Գարևոր բարեկամ թուրքին ու հային  
Թշնամի դարձրեց մէկը միւսին,  
Լանկթիմուրի վատ արարքը վերստին,  
Պարզեց թուրքերուն անիրաւ չարը:

Ջիւան տարածեցին իրանց թևերը  
Խորամանկ, մարդատեաց խարդախ սևերը,  
Ուրախացան չար հոգի, չար դևերը,  
Հանգիստ տեղ հասցրին իրանց ծրարը:



Տ Ր Տ Ո Ւ Ն Ջ

Մեծ գործի հետ ես, թէ քնել ես, Աստուած,  
Որ չես տեսնում, չես իմանում մեր ցաւը.  
Ուրուրները գրոհ կուտան գէնք առած  
Որ մէկի հետ կուրի խղճալի հաւը:

Ուշքը գրաւել է վեհապանծ արծուին,  
Արևելքում գոյացել է մի նոր ցին,  
Ժամանակ գտնելով գորտերը չնչին,  
Կուզեն որ ջախջախեն, խորտակեն նաւը:

Մեծանուն քաջ սարը դեռ թարմ է հողով,  
Փչել են քամիներ գլխին տաք ու հով.  
Նրա գործը անյաջողակ տեսնելով,  
Հրճոււմ է գիշակեր տգեղ ագռաւը:

Թէ ուզում է գտնել նախկին պատիւը,  
Պէտք է կշտացնէ իւր հաւն ու ճիւղը,  
Տասնապատիկ ոյժ կստանայ արծիւը,  
Եթէ որ նա փոխէ իւր հին հալաւը:



ՄԵՐ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Օտարներից գանգատւելու հայերս իրաւունք չունինք  
Որովհետև համերաշխ գործ, մի որոշ սկզբունք չունենք.  
Բարի բաներ արտասանող, մաքուր բերան-շրթունք չունինք,  
Խախուտ է մեր դրութիւնը, հաստատապէս հիմունք չունինք.  
Իրար հետ մեզ սիրով կապող լաւ կրթութիւն ուսմունք չունինք.

Հաւատ ունենք, յոյս էլ ունենք, ափսոս սիրոյ մասունք չունինք:

Եթէ քիչ խորը մտածենք-չուտ կիմանանք թէ ինչ բան ենք.  
Թէ այլ մեզի նախատում են, նախատւելու արժան ենք.  
Մեր տունը ինքներս ենք քանդում, որովհետև անձնասպան ենք.

Սուտ, անցաւոր փառքի համար ինչ ցածութիւն ասես կանենք.

Արտաքուստ փայլուն, գեղեցիկ, կմաղքով լի գերեզման ենք.  
Գործերս խօսքերուս պէս չէ, մենք բարի արարմունք չունինք:

Աշխարհի ամեն անկիւնից ստանում ենք բօթալի լուր,  
Այս ինչ հային սպանեցին, կամ թէ տունը ձգեցին հուր.  
Աւելանում են ցաւերս, տարէցտարի, օրն ընդհանուր,  
Մեր մամուլն էլ ուրախութիւն չունի, միշտ գրում է տխուր.  
Աւարաուռ գողերի դէմ անգամ մենք չենք վերցնում սուր,  
Կարծես սրտերս մեռած է, կամ թէ մենք թև ու թիկունք  
չունինք:

Ով որ ասես մեզ կը թոթլէ անայգեպան ծառի նման.  
Գայլերուն բաժին ենք դառնում սուսնց հովիւ գառի նման.  
Հազար մի վաճառորդ ունինք իւրալի պատառի նման.  
Ափսոս մենք մեզ չենք ճանաչում աչքը կապած ցաւի նման.  
Քայլերս միշտ խոտորնակ է գնում խեչափառի նման,  
Ճանապարհներս ուղղելու վարժուած ոտ ու սրունք չունինք:

Ով Զիւանի, համեստութեան տաճար էր հին Հայաստանը.  
Մեր գեղեցիկ սեռն էր պահում լեզուն, հայութեան նշանը.  
Բայց հիմա շատ ցաւալի է, փոխւել է փքսի բերանը,  
Քիչ է ճարում Այծեմնիկի և Կարինէի նմանը,  
Մեր կանանց վարքն էլ է փոխւել, կարծեմ էլ չեն  
ազաջուանը.

Անտես, բարի, սակաւապետ, համեստ մայր և հարսունք  
չունինք:



Մ է Կ է

Ո՞վ է հարցնողը, ո՞վ է քննողը,  
Մեղաւորն էլ մէկ է, արդարն էլ մէկ է.  
Ո՞վ է հասկացողը, ո՞վ է գննողը  
Իմաստունն էլ մէկ է, յիմարն էլ մէկ է:

Գիտունը սակաւ է, անգէտը բազում,  
Ծառերու վրայի պտուղները հում.  
Աշխարհից անտեղեակ ամբոխի աչքում  
Գետի քարն էլ մէկ է, գոհարն էլ մէկ է:

Անաչք մարդուն պէտք չեն ճրագ ու լապտեր,  
Նրանց մասին նա մնում է անտարբեր.  
Հաւասար են կոյրին ցերեկ թէ գիշեր,  
Առաւօտն էլ մէկ է, խաւարն էլ մէկ է:

Զիւան, իբրև սոխակ կերգէ ազուաւր.  
Կերպասի տեղ կերթայ ճերմակ կտաւր.  
Մէկ գնի են ծախում վատը և լաւը.  
Զուտ արծաթն էլ մէկ է, կապարն էլ մէկ է:



Ն Ա Խ Ա Զ Գ Ա Յ Ո Ի Մ

Ալեկոծւած է մեծ ծովը,  
Զրհեղեղից շատ երկիւղ կայ.  
Փչում է քամին, ցուրտ հովը,  
Ամեն տեղից շատ երկիւղ կայ:

Մարդկանց պէտք է զգոյշ մնալ,  
 Անպատրաստ ճամբայ չը գնալ.  
 Օձին չի լինի հաւատալ,  
 Սողուն ցեղից շատ երկիրդ կայ:

Չար մօր որդին կը լինի չար,  
 Անհեռատես տգէտ յիմար,  
 Խելացին կը մնայ դադար,  
 Խենթ ուղեղից շատ երկիրդ կայ:

Ահարկու է ձայնը, Ջիւան,  
 Վիրաւոր է առիւծ հսկան.  
 Պէտք է հանգիստ թողնել նրան,  
 Այն ուժեղից շատ երկիրդ կայ:



**ԻՆՉ ԱՍԻՆ**

Քանի կղկըթած ման եկայ, ինձ մեռած, դիակ է—ասին.  
 Երբ որ մի քիչ շարժեցայ, գող է, աւազակ է—ասին.  
 Իմ ստացած մեծ հարուածս արժանի ապտակ է—ասին  
 Պատւի համար մեռած որդուս իշու. նահատակ է—ասին:

Իրաւացի, արդար դատս պաշտպանող մարդ չը գտայ ես.  
 Իմ խորհուրդս ում որ ասի, հաւանող մարդ չը գտայ ես.  
 Չեղքս բռնող, իմ ցաւերուս դեղ անող մարդ չը գտայ ես.  
 Բոլորը ինձ՝ միտք պղտորող, անգուսպ ստահակ է—ասին:

Քամի տալով ինձ թուցրին մի քանի տաք գլուխ մարդիկ,  
 Ոտքերու տակ արորւեցայ որպէս անտէր վայրի ծաղիկ.  
 Ընկայ բորենու ճիրանը, քովս մի մարդ չեկաւ մօտիկ,  
 Դրան օգնել—ժամանակի հոգուն հակառակ է—ասին:

Վէրքս մեծերուն ցոյց տալու գործ դրի ես մեծ աշխատանք,  
 Իմ կրօնս և իմ լեզուս ինձանից ուղեցին փրկանք.  
 «Դեռ ինքն իրան նա չի կարող կառավարել, եթէ տեղ տանք»  
 Քաղաքագէտ, խելօք պսպիս, անգէտ է, համբակ է ասին:

Հին հագուստի մէջ մնացի, չը ճարեցի թաժա հալաւ.  
 Սպասելով լաւ օրերու, ճար չը մնաց, բանս բուսաւ.  
 Շատ երգեցի բղաւեցի, ոչ ոք ձայնս լսող չեղաւ,  
 Վերջը սնբախտ Ջիւանուս շատախօս, թութակ է ասին:




1828  
 11493

**Մ Ի Ա Բ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն**

Ինչ ազգ չունի սէր ու միաբանութիւն,  
 Ես չեմ յուսալ նրանից կենդանութիւն,  
 Չի ունենալ երբէք նա ազատութիւն.  
 Երբ չի տալին իւր մեծին հաւանութիւն.  
 Ունենայ էլ հարուստ գրականութիւն,  
 Տգէտներից չունի զանագտնութիւն:

Անմիաբան ազգն է այլոց միշտ ծառայ,  
 Նրա համար ազատութիւն բառ չըկայ.  
 Հալածանքի, թշուառութեան ենթակայ.



Անագնիւ է, համարուժ է խաբեբայ.  
 Վերջին օրն է, կորչելու է համարեա,  
 Ոչ մի տեղից չիք նրան պաշտպանութիւն:

Մինչև Ասուած ձեռք կը բաշէ նրանից,  
 Միութիւն ու սէր չը գտնուած տանից.  
 Կըսկսի քայքայել ինքն իրանից  
 Ու յետ մնալ շարքից ու կարավանից.  
 Զի յարգըրուիլ մերձաւոր հարևանից,  
 Թէև ունի մօտիկ ազգականութիւն:

Անմիութեան հոգին չար է և ժլատ,  
 Սատանայի գարմ է, չունի յոյս, հաւատ.  
 Ոչ քարոզ կը լսէ, ոչ բարի խրատ,  
 Կը թափառի սստանդական յուսահատ.  
 Այնպէս ազգի կործանումը մօտ է շատ.  
 Որի մէջ որ լինում է բաժանութիւն:

Զիւան, սէր է մարդկանց բերդը անառիկ,  
 Իրար կապող ոսկի շղթան գեղեցիկ.  
 Ինչ ազգ ունի միութիւն, սէր անուշիկ  
 Կը համարւի մարդկանց մէջը անդրանիկ.  
 Աշխարհիս մէջ կապրի ուրախ երջանիկ,  
 Ամեն կողմից կը լսէ երանութիւն:



Է Լ Չ Ո Ի Ն Ի Մ

Վայ հոգեկան մխիթարանք ես ունէի, էլ չունիմ.  
 Կայծ ու աշխոյժ, եռանդ ու ջանք ես ունէի, էլ չունիմ.  
 Հոգսերը ինձ ժանգի, ցեցի պէս մաշեցին սիրտս, հոգիս,  
 Ոսկու նման սխրալի կեանք ես ունէի, էլ չունիմ:

Վարք ու բարքս առաքինի, արգարոց համեմատ էր.  
 Մարդ էի՝ թէ սխալէի, խիղճս ինձ կը նախատէր.  
 Մէկ ժամանակ շատ լաւ էի, հաւատս անարատ էր,  
 Սուրբ ու մաքուր վառ խղճմտանք ես ունէի, էլ չունիմ:

Խղճս, օգնէ ջիւանուդ, տենչալի մարդասէր Յիսուս.  
 Խաւարի տանջանքներուց փրկէ, ազատէ հանէ դուս.  
 Հեռացան ընկերներս, թողին միայնակ խղճալուս,  
 Շատ շատերուց սէր ու յարգանք ես ունէի, էլ չունիմ:



Յ Ո Յ Ս

...Ինչքան երկինքը ամպէ, որոտայ,  
 Կայծակ, հուր, երկաթ, շանթեր արձակէ.  
 Թէ սաստիկ կարկուտ, շատ անձրև տեղայ,  
 Վերջ դարձեալ պայծառ արև կը ծագէ:

Թէ ծովը ծփայ կատաղի սաստիկ,  
 Իւր ալիքներով ափից դուրս չի գայ.  
 Թող իջնի թաթառ, հանէ փոթորիկ,  
 Թող փչէ հողմը ինչքան կամենայ,

Թող պատերազմեն ազգերն իրար հետ,  
 Թող մէկը միւսի արիւնը խմէ.  
 Թող խփեն իրար, գնդակ, մահու նետ,  
 Եղբայրն իւր եղբօք թող միսը ծամէ...

Կանցնի բոլորը, կուգայ ժամանակ.  
 Ամեն առարկայ իւր վերջը ունի,  
 Որդին կը նստի հօրը փոխանակ,  
 Նոր հոգի, նոր կեանք նորից կսկսուի:



ԼԱՆ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ

Կանցնեն այս օրերը, էլ յետ չեն դառնայ,  
 Մեզի կը ժամանեն գեղեցիկ օրեր,  
 Հոգիս գուշակում է բարի սպագայ  
 Եւ նրա հետ մէկտեղ երջանիկ օրեր:

Նեղութեան զիմացող տոկուն հայ մարդը  
 Բանի տեղ չի գնիլ կարկուտի ջարդը,  
 Փուշը մենք կը քաղենք, որդիքս վարդը,  
 Նրանք պիտի տեսնեն անուշիկ օրեր:

Զիւան, կը բացուի երկինքը կապուտակ,  
 Կը յաջորդի զւարճալի եղանակ,  
 Աստուծով այս վատ օրերու փոխանակ,  
 Պիտի տեսնենք լաւը հինգ պատիկ օրեր:

ԽԱՆԱՍՈՐԻ ՄԱՐՏԸ (1897 թ.)

Կարկուտ տեղաց Խանասորի դաշտումը,  
 Ֆիդային էր գաշնակցական՝ վրէժ լուծում հովտումը:

Սոսկաց քիւրդը՝ բնաթաթախ մարզիկցին,  
 Չէր երազում ջնջել իսպառ Ֆիդայիցը լուսաբացին:

— Եաման, Աստուած, Ֆիդան եկաւ ուր փախչենք.  
 Ասաց որդուն կրծքին սեղմած լեղապատառ քրդունին:

— Մի վախենար, հանդիստ կեցիր, բաշի ջան,  
 Կանանց երբէք ձեռք տալու չէ վրէժինդիր քաջ Ֆիդան:

Մի ժամայ մէջ Մարզիկ ցեղը ջնջեցաւ,  
 Խանասորայ կանանչ գաշտը կարմիր գոյնով ներկեցաւ...

Փչիր գեփիւն, դէպ Առաւուլ մենք թռչենք,  
 Իրբքեր բռնենք, գաթայ, հալւայ ձիւնի ջրով ճաշակենք...

Մերթ կուում է, մերթ բարձրանում քաջ Ֆիդան,  
 Եզակի է պատմութեան մէջ արշաւանքի տեսարան:

Չկար Կարօն. տխուր պատեց ամենքին,  
 Երանի է նրա հոգոյս, որ զոհ դարձաւ այդ կուին...

Քեզ ենք յանձնում, ով պաշտելի Առաւուլ,  
 Կրծքիդ մէջը ամուր պահիր անմահ զոհերն հայերուն:

Հայեր, յիշէք նւիրական այն օրը.  
 Յուլիս ամսի քսանհինգին կատարեցէք մեր տօնը:



ՊԷՏՕՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գարահիսար լերան կրծքին՝ նա էլ ընկաւ վիրաւոր,  
Կուրծքը պատռած, սիրտը խոցւած՝ չար թշնամու գնդակով:

Ժայռոտ լերան լերկ կատարից վար սլացիր, սև արծիւ,  
Թևերդ բաց, լայն թևերդ ու ջիւանին հով արնա...

Խոցւած սրտից մուգ արիւնը կաթիլ-կաթիլ կը ծորայ.  
Ա՛խ, ջիւանին կեանքն է հոսում ցաւոտ կրծքի լայն վէրքից...

Ժայռոտ լերան լերկ կատարից վար սլացիր, սև՝ արծիւ,  
Թևերդ բաց, լայն թևերդ ու ջիւանին հով արնա...



Ք Ա Յ Լ Ե Ն Ք

Յուսահատուել մեղք է, ընկեր,  
Արիացիր, ոգի առ, —  
Նայիր, փայլեց հեռում լապտեր,  
Մենք էլ կառնենք շուտ դադար...

Արիացիր, սիրտ առ, ընկեր,  
Շարունակենք մեր ուղին,  
Լսիր, կարծեմ՝ թէ գանգակներ  
Ղօղանջեցին սարերէն...

Ահա բացուեց աղօթարան,  
Վստահ, ընկեր, առաջ քայլենք,

Զինուոր ենք մենք ազատութեան  
Եւ անփորձ տեղ կը համենք...



ՀԱՅԴՈՒԿԻ ՆՇԱՆԱԾԻ ԵՐԳԸ

Հայաստանից եկած զինուոր,  
Սիրական, կեանքիս հատոր,  
Քեզ կսպասէի օրէց օր,  
Շողշողուն զէնքերիդ մատաղ:

Արկածալից կեանք խորհրդով,  
Լեռներ ես անցել շտապով.  
Արեգակն է այրել տապով,  
Սևորակ պատկերիդ մատաղ:

Կրգաս զոհերի երկրէն՝  
Պատմէ Մոկացի նսթերէն,  
Խօսիր Գիսակի խօսքերէն՝  
Արտաշարժ խօսքերիդ մատաղ:

Զով Մասունի հովէն կուգաս,  
Վանայ Ծփան ծովէն կուգաս,  
Անդրանիկի քովէն կուգաս,  
Սար-ձոր ընկած գլխիդ մատաղ...

Սերոր-փաշի գերեզման.  
Տեսել ես, իմ սիրական.

Տեսէլ ես ողջ Հայաստան,  
էգուցւայ ճամբիդ մատաղ:

Հայաստանից եկած զինուոր,  
Սիրական կեանքիս հատոր,  
Քեզ կսպասէի օրէց օր.  
Ապագայ յոյսերուդ մատաղ...



ՏՈՒՐ ՁԵՌՔԴ, ԵՂԲՍՅՐ

Տնւր ձեռքդ, եղբայր, ժամ է վարթելու,  
ժամ է՝ ժամ առաջ ոտքի ելնելու.  
Մօտ է վախճանը, հայերուս օրհաս,  
Լինել-չլինել՝ մեզնից է կախւած...

Տնւր ձեռքդ, եղբայր, հերիք համբերենք,  
Հերիք օգնութիւն օտարից հայցենք,  
Մենք ենք տանջւողը, մենք շարձարւողը,  
Մենք պիտի լինենք մեզի փրկողը...

Մեր վեհ հայրենիք դարերով ճնշւած,  
Դարեր շատ ու շատ մեր արեամբ ներկւած.  
Պահանջէ մեզնից արիւնով մաքրել  
Թշնամու արեամբ լեռներ ու դաշտեր...

Շտապիր, եղբայր, առ, ահա քեզ զէնք,  
Սորանով միայն փրկւելու ենք մենք,

Այս է գործ ածում մեր դէմ թշնամին,  
Այս պիտի լինի պաշտպան մեր անձին:

Այնտեղ է քո կեանք, այնտեղ է քո մահ.  
Ելիր ընդ առաջ, ելիր դու անահ,  
Արդարութիւնն է գործին նշանակ,  
Այնտեղ կկանգնէ նա իւր յողթանակ:

Շտապիր, քանի դեռ չէ անազան...  
Քեզ կը հետեի ամբողջ Հայաստան.  
Ազատութիւնն է գործին գրաւական,  
Այնտեղ կտտանաս պսակ պատուական:



ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Ինձ տեղ տւէք, Սիփան սարեր,  
Բռնաւորի լուծն եմ թողեր,  
Ազատութիւնս արիւնով զնած՝  
Պահէք ձեր ծոցն, ազատ սարեր:

Մասսից ազատ, Մասսից բարձր ես,  
Աշխարհից թանգ ազատութիւն.  
Կեանքի սէրն, կեանքի տէրն ես.  
Արժւի պէս բարձր ես թռնում:

Ազատ օգու՛մ, ազատ հո՛վում  
 Արժե՛ի պէս ազատ կըլլնի՛մ,  
 Բաց թե՛քս թափ-թափ տալով՝  
 Ախարտանցս քով կըթոնեմ:

Հայ ախպէրտինք, ձեր կուռ շղթան  
 Իմ երկաթէ սուր կտուցով,  
 Ես կը կտցեմ, կը քրծծեմ՝  
 Մէկ տեղ կերգենք ազատ կրծքով:

Ազատութիւն, ազատութիւն,  
 Կեանքի արև ազատութիւն.  
 Մասսից ազատ, արծւից ազատ,  
 Աշխարհի տէր ազատութիւն:

Արժե՛ի պէս բարձր ես թռնում  
 Մասսից բարձր, ազատութիւն,  
 Դու կեանքից վեր, դու լոյս արև,  
 Ազատութիւն, ազատութիւն...



ՄԱՍՆՈՅ ՁՈՐԵՐՈՒՄ

Մասնոյ ձորերում, կուր ձորերում,  
 Հայդուկն է ընկել խոր վէրքը սրտին,  
 Վէրքը վարդի պէս բացւած կարմրուն,  
 Ու ձեռն է զցել կոտրած հրացանին:

Արնոտ դաշտերում ծղրիտն է ծվում  
 Հայդուկն է քնել մահւան խոր քնով.  
 Հայդուկը հոգում երազ է տեսնում.  
 Հայրենի աշխարհն ազատ ապահով...

Տեսնում է այգում՝ հոփն է շրշնջում,  
 Փայլուն գերանդին գնդում է անուշ,  
 Ու փոցիս են քաշում սիրուն աղջկունք,  
 Հայդուկի վերայ երգելով անուշ...

Մասնոյ ձորերով ամպեր են գնում,  
 Հայդուկի վերայ արծիւն է գալիս,  
 Ախ, սև աչքերը արծիւն է հանում,  
 Հայդուկի վերայ ամպերն են լալիս...

Վե՛ն ազատութեան սէրը չէ մենակ,  
 Որ ինձ մղում է կուր վառ հանդէս.  
 Հրեղէն ոխն է, վրէժն է անյատակ,  
 Որ սիրաս է այրում ժանր թոյնի պէս...

Ախ թէ լինէի կայծակ, հրաբուռիս  
 Մուսյլ Տաւրոսի ճակատից վիժած,  
 Պիտի շանթէի, փշրէի պիտի  
 Թշնամու կուրծքը չար արիւնախանձ:

Բայց հոգուն խորքում օձերն են դեռում,  
 Վրէժի իժեր սև կծիկ-կծիկ.  
 Ու ուումը է սիրաս և պիտի պայթի  
 Թշնամու գլխին նա պիտի պայթի...



ՁԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Է՛հ, ջան հայրենիք, ինչքան սիրուն ես,  
Սարերդ կորած երկնի մովի մէջ,  
Զրերդ անուշ, հովերդ անուշ,  
Միայն բալէքդ արիւն — ծովի մէջ...

Քու հողին մեռնեմ, անդին հայրենիք,  
Ախ քիչ է թէ որ մի կեանքով մեռնիմ.  
Երնեկ ունենամ հազար ու մի կեանք,  
Հազար էլ սրտանց քեզ մատաղ անեմ...

Ու հազար կեանքով քու դարդին մեռնեմ  
Բալէքիդ մատաղ, մատաղ քո սիրուն.  
Մենակ մի կեանքը թող ինձի պահեմ,  
Էն էլ քու փառքի գովքը երգելուն...

Որ արտուտի պէս վեր ու վեր ճախրեմ  
Նոր օրւայ ծէգիդ, ազիդ հայրենիք,  
Ու անուշ երգեմ, բարձր ու զիլ գովեմ,  
Կանաչ արևդ, ազատ հայրենիք...




ՀԱՅՐՈՒԿ, ՄԻ՛ ՎԱԽԵՆԱՐ

Հայրուկ, մի վախենար քրդի գնդակից,  
Նա մահաբեր չէ քաջերիդ համար,

Քո «ջան ֆիդայի» անեղ անունից  
Քիւրդը սոսկում է ինչպէս դիւահար:

Առէք հրացան ու ելէք հանդէս,  
Տանջանքի մէջ է ձեր մայր-հայրենիք.  
Մի՛թէ չէք լսում՝ նա կանչում է ձեզ,  
Օգնութեան հասէք, հարազատ որդիք:

Ձեր հրացանը վրէժով լցրէք,  
Զարկէք թշնամուն, թշնամուն դազան,  
Դուք ձեր մօր սիրուն զարկէք ու ընկէք,  
Միայն թէ կեցցէ, կեցցէ Հայաստան...



ԿՈՒԵՑԷՔ ՏՂԷՐՔ...

Կուեցէք տղերք, կուեցէք քաջ-քաջ,  
Անվեհէր կանգնած թշնամու առաջ,  
Ցանկալի է մեզ միշտ ազնիւ մահը,  
Հեռու մեզանից ոտխի ահը:  
Այս անդամն էլ ցոյց տանք թշնամուն,  
Թէ ինչ է հայի ոյժն ու քաջութիւն:

Ահա քիւրդերը փախչեն սարսափած,  
Ահա դիակներ արեամբ շողախլած,

Կրակ տեղացէք, անդադար կրակ,  
Փնօք մեր գէնքերին, առատ է գնդակ:  
Այս անգամն էլ ցոյց տանք թշնամուն,  
Թէ ինչ է հայի ոյժն ու քաջութիւն:

Մեր տօնախմբեր, մեր նախնի քաջեր,  
Մեզի կսպասեն մեր սէգ եղբայրներ,  
Ազատ չենք ծնւած, գէթ մեռնենք ազատ,  
Եւ մեր սուրբ հոգին պահենք անարատ:  
Դէ՛հ, կուէք տղէրք մինչև շունչ վերջին,  
Արժանի լինինք փառաց պսակին:

— Մեռնենք յուսարով, մերն է ապագան,  
Մեռնենք, բայց կեցցէ, կեցցէ Հայաստան!  
Այսպէս յորդորեց և ընկաւ արին՝  
Թողնելով մեզնում յիշատակ բարի  
Ահեղ կուրի մէջ, աննման հերոս,  
Անմոռանալի, կտրիճ Մարտիրոս...



ԳՈՒՐԳԷՆԻ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(1899 թ. սպրեւի 24-ին)

Գլխարով ջուր է իջնում  
Մշոյ մշուշ սարերէն,

Ծիծեռները ծիւ-ծիւ եկան  
Գարնան դալը երգելէն:

Գարուն չը կայ հայի համար,  
Ծաղիկ, ծիծեռ մեզ պէտք չեն.  
Գերեզմանս հողին հաւասար,  
Թող փուշ բըսնի իմ վրէն:

Գնա ծիծեռ, թո՛ղ ինձ մենակ,  
Վէրքը սրտիս հողի տակ:

Բայց երբ տեսնես թշնամու գէմ  
Հայ ժողովուրդ սարի պէս,  
Ձէնքը ձեռին հպարտ կանգնած  
Կուրծք գէմ տւած ժայռի պէս:

Ա՛խ այն օրը արի ծւայ,  
Գարնան դալը նոր կանչէ,  
Հայոց գարնան, որ բիւր բարև  
Սիրտս խորէն դողանջէ... Հ. Գ.



ԱՒԵՏԻՔ ՄԱՆՈՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Էն արծիւ էր, թռաւ, գնաց,  
Մեր վրայով, մեր միջով,  
Ա՛խ էն մեր սիրտ, մեր ազիզն էր,  
Գնաց սարով, սար դարդով:

Ինոր դարձը, ան, մեր դարձն էր,  
Ու մեր սրտիցն էն գնաց,  
Ինոր դարձը խեղճի դարձն էր,  
Սեղճի սրտիցն էն գնաց:

Ո՞ւր գնացիր. ո՞ւր գնացիր.

Մենակ-մենակ գնացիր:

Հեռու տեղեր, արնոտ տեղեր.

Ոխը սրտիդ, հոգի ջան,

Ըսկար մենակ ու անընկեր

Դու ման դաշտեր, Աւօ ջան:

Ընկերներդ, ան, քեզ մոռցան,

Կեանքի ճամբով գնացին.

Քո սուրբ սրտի սէրը մոռցան,

Գերեզմանդ կորուցին:



### ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Սիրելի դաշտն, ան, ատրճանակ,  
Մանաւանդ մօտին, կեանք ես դու հայուն,  
Երբ քեզ ձեռք առնէ հայրուկ ընդունակ,  
Ցիր ու ցան կանէ թշնամու բանակ:


Դուք էք ֆիդայուն կեանք շնորհողը,  
Փրկիչ ու արև հանդիսացողը.

Թշնամուց վրէժ, սրտիս թախիծը  
Հուժող տաճիկից, ցաւ փարատողը:

Ժնկից եկած նւէր թանկագին,  
Կուող, անձնւէր այն քաջ ֆիդայուն  
Ներշնչէ հողի վեհ ազատութեան,  
Այս զէնքով փրկենք ամբողջ Հայաստան:

Ժնկից եկած մօտին հրացան  
Դեռ քեզ կրելու չեմ եղած արժան,  
Պարզ հոգով կերդնում, պող կուրծքիս սեղմեմ,  
Հայրուկի վրէժը քեզանով լուծեմ:

Սուրբ Դաշնակցութեան անվեհեր անւան  
Անշէջ կրակը տւիր ֆիդայուն,  
Սրտիկն այրւած, անձնւէր ֆիդան  
Կը փութայ զնալ դէպի Հայաստան:



### ՇԵԱՂՈՒ ՄԱՍԻՆ

Չորանար այն ձեռքը, որ քեզի դիպաւ,  
Քաջ Շխալի, գործակատար Ստեփան,  
Կոյր փորձանքը որ Յուդայից քեզ հասաւ,  
Տունդ թողեց անմխիթար, Ստեփան:



Երբ որ պատմութիւնդ անել սկսենք,  
Տէլու, ֆէնտ խօսքերդ ո՞րի հետ խօսենք,  
Եհու, ետ մատէտդ էլ ո՞ւմից լսենք,  
Ծիծաղաշարժ լեզուդ, ճարտար Ստեփան:

Քաջ անունդ պիտի յիշի անպակաս,  
Ընկերներուդ սրտերու մէջ միշտ դու կաս,  
Կեանքիդ թելը կտրեց մահը վաղահաս,  
Հաղորդութեան արժան չեղար Ստեփան:

Պատկերդ ահարկու, դու բարձրահասակ,  
Պարսկաստանի Սալմաստ գաւառի գաւակ,  
Չնչին մարդու ձեռքով եղար նահատակ,  
Հայրենիքի թունդ սիրահար Ստեփան:

Քու մահդ Զիւանուն սաստիկ ցաւ տւեց,  
Սիրելեացդ սրտին դառար ցաւ ու ցեց,  
Համարեա թէ ողջ թիֆլիզը ցնցւեց,  
Շատ մարդ ողբաց քեզի համար Ստեփան:



**ՂԱԶԱՆԵՑԻ ՍԱՐԳԻՍԸ**

Ղազախ գաւառի մէջ մեծ հրաշք գործեց,  
Որպէս Զէյթունցի քաջ Պապիկ Սարգիսը,  
Ապերախտ թուրքերուն լաւ խրատ տւեց,  
Անընկճելի և անառիկ Սարգիսը:

Հորիս-Մելիքով և քաջ Ղազարեան,  
Ողջ լինէին պիտի տային գովասան,  
Ղազախի հայերս—երկրորդ Օյաման,  
Խելաց ու քաջամարտիկ Սարգիսը:

Գնաց յատուկ հայոց զիւղը մտաւ,  
Փողովորդին զինեց, մեծ գործեր տեսաւ,  
Սև զիւղից մի քաջ հերոս դուրս եկաւ,  
Եղաւ հուժկու և ազդեցիկ Սարգիսը:

Խաւարի որդոցը ուժը սպառեց,  
Ակամայից նա մի քանի զիւղ վառեց,  
Բթամիտ խուժանին սարսափ պատճառեց,  
Ընկերներով մեր ռազմիկ Սարգիսը:

Երիտասարդ Գրիգորը համարձակ,  
Շամշաղինը պահեց երկար ժամանակ,  
Շխալի Ստեփան, Համօ և Արշակ,  
Ունէր երեք փայլուն աստղիկ Սարգիսը:



**ՄՕՏԻԿ ՅԱՒԵՐԻՑ**

Աստուած բարի տայ թուրք ցեղին,  
Խեղճ հային մարդասպան շինեց,  
Հրեշտակի պէս անմեղին,  
Ահուելի հոգեհան շինեց:

Նրան վառեց ազգի սէրը,  
Յիշեց իւր տկար աղբէրը.  
Ձի նստեց հայի տէրտէրը,  
Սուրբ խաչը հրացան շինեց:

Հայակեր անգուլթ որսկանը,  
Ոտքի հանեց թուրք խուժանը,  
Բազուն, խեղճ Հին-Նախիջևանը  
Արիւնի աւազան շինեց:

Սատանան երևան եկաւ,  
Բայց բռնեց, խիստ ծեծ կերաւ,  
Շատ մարդկանց արունքը մտաւ,  
Տները գերեզման շինեց:

Ձիւան նենգ, բանսարկուն ճարպիկ,  
Գնաց անգէտներուն մօտիկ,  
Չար հոգին ինքը եղաւ տիկ,  
Խենթ թուրքերուն բերան շինեց:



Հին Երգ

Հերիք ննջես, էլ արթնցիր, անուշիկ մայրիկ Հայաստան դու,  
էիր մէկ ժամանակ քաղցր հոտով ծաղկած բուրաստան դու,  
Թափառեալ որդիքդ ամեն մի տեղ տանջանքով զբաղւին,  
Քու մինչև երբ առողջ մարմնովդ պառկես գերեզման դու:

Արի, արի, արև, կեանքիս լուսով վառւած՝ ճրագ բազմած,  
Հայոց կեանքին, հայոց բաղտին հոգի տուող խրախճան դու,  
Տիեզերք-աշխարհք չորս կողմը քեզ սպասող անձինք կան,  
Արի, գոնեայ, նրանց ձայնը լսէ անգուլթ սիրական դու:

Դէ՛հ, վեր կաց, բաւ է տանջես սիրահարներուդ առողջ կեանքով,  
Դու քեզ ու քեզ մտածէ, որ ֆնացիր շատ բաւական դու,  
Ահա, Ձիւանուն քու գործը ֆնայ, տէր Աստուածը մաքրէ,  
Գիտեմ հարկաւ կուգաս վերջը իրաւ, արդար դատաստան դու:



Ա Ր Ե Գ Ա Կ

Ի՞նչ եղար, մեզ դուրս արի, հայոց արեգակ, ի՞նչ եղար,  
Թողնելով որդիքներդ խաւար մութի տակ, ի՞նչ եղար,  
Հինգ դար ու վեց տարի է հեռանալդ ճիշտ մեղանից,  
Ապրում ենք առանց լուս այսքան ժամանակ, ի՞նչ եղար:

Մասնաւոր շառաւիղդ մօտ տարիներս ցոյց տուիր,  
Ազգի մէջ բարձրացրիր աղմուկ աղաղակ, ի՞նչ եղար,  
Քու դիւցազուն, անարատ, քաջ հայերդ այսքան տարի  
Մահմեդի գաւակներուն թողիր հպատակ, ի՞նչ եղար:

Սառեցաւ մեր արիւնը ցուրտ հողմային պաղուլթիւնից,  
Եկ, հասիր լոյս ջերմարար, կենդանի կրակ, ի՞նչ եղար,  
Բարկանեան լեռներիցը նոր դուրս գալող արևի պէս,  
Մէկ դուն էլ հայոց արև ցոյց տուր նշանակ, ի՞նչ եղար:

Ափսոս ենք մենք, խղճայ մէկ ազնիւ լուսարար թագուհի,  
 Ընծայէ Հայաստանին արժանի պսակ, ի՞նչ եղար,  
 Կեանք կուտան ողջ հայերը, ջիւանին էլ ըեզի համար,  
 Դուրս արի պայծառ լուսով ազատ, համարձակ, ի՞նչ եղար:



Ս Է Մ Ա Յ Ի

Հա մէկ չնչին հասարակ քար, հա ժլատի պահած ասկին,  
 Որովհետեւ նրանից մի օգուտ չի լինի ոչ ոքին,  
 Ասում են թէ գետինը շատ ու շատ գանձեր ունի պահւած,  
 Քանի պիտանի չեն մարդկանց, թող երթան մնան ու մըլին:

Յարածամ երջանիկ ապրի սա աշխարհում առան մարդը,  
 Իրան սուղ քսակիցը միշտ մի մաս էլ կուտայ ուրիշին,  
 Ծովը շատ մեծ է, բայց ջուրը չի խմել եզը մինչ անգամ,  
 Անոյ՛ջ աղբիւրի համար մարդիկը կելեն սարի գլխին:

Նմանապէս ժլատի ունեցած գոյքը աղի ջուր է,  
 Խմողը համ չի առնիլ, դուր չի դալ ծարաւներու քմքին,  
 Զիւանի տկարին օգնող ունեւորը ամենայն ժամ,  
 Եթէ մեղք չը լինի կասեմ, կը գառնայ Աստուծու որդին:



ԱՐԻՍՏ. ԱՐՔ. ՍԵՂՐԱԿԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայ հոգևոր դասակարգի կաջառից  
 Հաղւագիւտ թանկագին մի ալ պակասեց,  
 Յաւիտեան հեռացաւ խօսնակը բառից,  
 Հոգեգգօն ճարտար սոխակ պակասեց:

Փրկչի հօտին անկեղծ հովիւ իսկական,  
 Մեղը ամբարող քաջ մեղու էր ժրաջան,  
 Ուշ կը ծնւի Արիստակէս Սեղրակեան,  
 Պարթևագուն երկրորդ Սահակ պակասեց:

Քիչ խօսող, շատ գործող պիտանի մարդ էր,  
 Ազգի մէջ հռչակւած անւանի մարդ էր,  
 Վեհապետ լինելու արժանի մարդ էր,  
 Հարկաւոր էր, այն ժամանակ պակասեց:

Բնաւ համ չը տեսաւ անհամ աշխարհից,  
 Բայց չը շեղւեց ուղիղ սուրբ ճանապարհից,  
 Անբաղդ հայոց ժողովրդի տաճարից,  
 Հոգի կրթող դաստիարակ պակասեց:  
 Զիւան



ԱՆԻՐԱԳՈՐԾԵԼԻ ԵՐԱԶ

Ա՛խ, հայրենիք, երբ կը տեսնեմ քեզի լաւ,  
 Ուրախ, գլարթ, ապահովւած, առանց ցաւ,  
 Ե՞րբ կստանաս քաղաքական մեծ համբաւ,

Որ դու հագնիս արդարութեան նոր հալաւ,  
 Չը մեռնէի, քեզ տեսնէի անգրաւ  
 Շուտ վերջանար հին ըեժիմը հայադաւ:

Մէկ տեսնէի Կարին նստած նոր իշխան,  
 Նոր տառերով գրէր արգար հրաման,  
 Տիգրանակերտ, Մուշ, Բայազէտ, դէպի Վան,  
 Ազնիւ զօրքեր ուղարկէին պահապան,  
 Քուրդ ու տաճիկ ձեռք մեկնէին հայութեան,  
 Ճանաչէին թէ սա է քաջ ազգ իրաւ:

Փառք այն աւուր, ո՞հ հազար փառք այն ժամին,  
 Հայն ու թուրքը իրար սիրել կը կամին,  
 Լոյս կը ծագէ այնժամ Հայկայ երամին,  
 Մէջ տեղից կը վերանայ չար թշնամին,  
 Ապերախտ չեն քաջ թոռները Արամին,  
 Միշտ կը պահեն իրանց ցեղը անպարսաւ:

Արդեօք պիտի տեսնեմ մի լաւ դատաւոր,  
 Տաճկա-Հայաստանում նստած փառաւոր,  
 Պիտի զարթնի լուսինը կիսաբոլոր,  
 Թե ու թիկունք կարծես խաչը զօրաւոր,  
 Այնտեղ իշխէ արդարագատ թագաւոր.  
 Ժպտայ մէկ օր Հայաստանի բաղբը սեռաւ:

Արդեօք կուգայ այն օրը մեզի համար,  
 Մեր փրկութեան հոգսը քաշենք անդադար,  
 Աշխարհումս մի բան չկայ անհնար,

Աշխատելով մարդ չը գտնի ճար,  
 Եթէ Աստուած լինի մէկին բարերար,  
 Չի վաւաւի այնպէս ազգը ոչ բնաւ:



Ա.Հ.Ա., ՄԱՅՐԻԿ, ԵՍ ԳՆՈՒՄ ԵՄ

Ահա, մայրիկ, ես գնում եմ  
 Ազգիս համար զոհւելու,  
 Քաջ ընկերներով միասին՝  
 Անգութ քրդին շարգելու:

Երբ որ, մայր իմ, Սասուն եկար,  
 Ինձի սրտեղ փնտռեցիր.  
 Գերեզմանիս վերայ գալով  
 Ի՞նչ ասեցիր ու լացիր:

Գերեզմանիս հողի վերայ  
 Ինչ անուշիկ հոտ կուգայ,  
 Այսուհետեւ, անուշ մայրիկ,  
 Ինձմէն քեզ օգուտ չկայ:

Գերեզմանիս հողի վերայ  
 Ցանէ ծաղիկ, իմ մայրիկ.  
 Ցանէ ծաղիկ, թափէ արցունք,  
 Երիտասարդ եմ մայրիկ:

Գերեզմանիս քարի վերայ  
 Խոշոր տառով գրեցէք—  
 Այսուհետև մանուկներ  
 Ազատութեան զոհեցէք:



**ՉԱՅՆ ՏՈՒՐ, Ո՛Վ ՖԻԴԱՅ...**

Չայն տուր, ով ֆիդայ, ինչո՞ւ ես տրտում  
 Լուռ ու մունջ նստած երկար մտածում.  
 Շարժեցէք շուտով սուսեր շողշողուն՝  
 Թափեցէք կրակ թշնամեաց գլխուն:

Պարզեցէք դրօշ վե՛հ Դաշնակցութեան,  
 Լինի առաջնորդ մեր ազատութեան,  
 Քանի այսպէս է ազգը խղճալի,  
 Զինեալ կը մնան ամբողջ ֆիդայիք:

Շտապենք, ֆիդայք, խմբւենք մի տեղ,  
 Դաշնակցութեան դրօշը ծածանւի այնտեղ—  
 Թափենք մեր արիւն իբրև ախոյեան՝  
 Թող սառաի Սուլթան Աբգուլ-Համիդ խան:

Եկէք միանանք, ով քաջ հայդուկներ,  
 Վրէժ են կոչում մեր նահատակներ,  
 Մօսին հրացանը ձեռքներին բռնած՝  
 Թունաւոր փամփուշտ կուրծքներին ձգած:

Հայ զինւոր եմ ես, սնձնագոհ ֆիդայ,  
 Դժբաղդ հայրենեաց անցեալին տեղեակ—  
 Մենք ենք սերունդը բնիկ վե՛հ Հայկեան,  
 Տոհմէն զիւցազանց, որդիք Թորգոմեան:



**ԶԻՆԻԱԾ, ՊԱՏՐԱՍՏԻԱԾ...**

Զինւած, պատրաստած, Զէյթունի քաջեր,  
 Սուրբ ազատութեան վկայք անվեհեր.  
 Վրէժով լցւած առիւծի նման  
 Քաջ-քաջ կուռում են թուրքի դէմ դաժան:

Կեցցէք դուք միշտ Զէյթունցիք.  
 Որ պիտ փրկէք հայրենիք,  
 Դուք Հայաստանի պարծանք,  
 Մեր կեանքիցն էլ ձեզ կը տանք:

Մանուկն օրօրոցում հանգիստ չէր պառկած,  
 Խնդրում էր մօրից՝ «բազուկներս բաց»...  
 «Ես չուզեմ մնալ այս օրօրոցում,  
 Մինչ իմ եղբայրներ լաց կոծ են անում»...

Կեցցէք դուք միշտ Զէյթունցիք  
 Որ պիտ փրկէք... և այլն (կրկնել):

Ի՛նչ ես կաշկանդել, քանդիր ինձ, մայրիկ,  
 Ես կուզեմ կուել թուրքի դէմ ճարպիկ,

Տուր ինձ հրացան և մի սուր դաշոյն,  
Ես կուզեմ ծծել կաթի տեղ արիւն:

Կեցցէք դուք միշտ Զէյթունցիք և այլն:



### ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀՐԱԻՒՐ

Ի գէն հայեր, ի սուր և ի հրացան,  
Տաճկա-Հայաստանից կոչում է մի ձայն.  
Լեռից լեռ թնդում է ահեղ հրաման.  
«Թռէք հայեր, թռէք՝ դէպի Հայաստան»... (Կրկնել):

Արևելք, արևմուտք, հարաւ և ճիւսիս,  
Իդրդաց ու թնդաց բաղցր աւետիս:  
Հայկայ քաջ զաւակաց առոյգ կուրծքերից  
Ազատութիւն հնչեց ամեն կողմերից:

Խումբ-խումբ հայեր դէպի Տաճկա-Հայաստան,  
Փրկութեան աւետիք առած ի բերան,  
Իմում են ցնծութեամբ իբրև հարսանիք,  
Ուխտած սուրբ արիւնով փրկել հայրենիք:

Տաճկա-Հայաստանը ոտքի է կանգնում,  
Ասիւծաբար վրէժ, վրէժ է կանչում,

Արիւնով ներկում են բոլոր դաշտերը,  
Արիւն է լոկ հոսում բոլոր գետերը:

Թշնամին զարհուրած փախուստ է դիմում,  
Անթիւ աւար և գանձ հայերին թողնում.  
«Յաղթութիւն, յաղթութիւն», գոչեցին միաձայն,  
«Թշնամին կորած է, կեցցէ Հայաստան».



### ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Դաշնակցական խումբ, գնանք մենք Մասուն,  
Մեր հայ եղբայրներ մեզ են ըսպասում.  
Անդրանիկը քաջ իւր ընկերներով  
Կուզէ պատերազմ, կսպասէ զարնան:

Մօտ է գարունը, շուտով կը բացւի,  
Հայի խօսքը քաջ, շուտով կը լսւի,  
Հայերն անվախ, հոգով միացած,  
Հրացան ուսերին մերն է «Նոր-տարին»...

Խմբապետները հոգով են կանգնած,  
Ֆիդայի ոյժով գնում են առաջ.  
Առաջն է կանգնած Անդրանիկը քաջ,  
Գոռում է գոչում, կուզէ պատերազմ:

Յիշէք, եղբայրներ, մենք շատ քնեցինք,  
Բաւական է մենք այսքան համբերենք.

Մայր-Հայաստանը ձեռքից հանեցինք,  
Հիմայ ոյժ ունենք, դարձեալ հետ կառնենք:



ԵՐԿ ՔԱՂԱՍԻ ՀԱՅԴՈՒԿԻ

Կովկասի քաջեր, խմբեր կազմեցէք,  
Քաջ Անդրանիկին օգնութեան հասէք.  
Առած իր շուրջը զինւորներ ութսուն,  
Մաքրէ ճանապարհ նա դէպի Սասուն:  
Սուլթան սարսափած, ճարը կտրւած  
Հազար ոսկի է գլխին խոստացած:

Հայ պատանիներ, շուտով շարժեցէք,  
Երբէք միք վախնայ, սուրեր շարժեցէք,  
Հասել է ժամը սուրբ ազատութեան,  
Կենալու ժամ չէ, շուտով քայլեցէք:  
Սիրենք միութիւն, չանենք վատութիւն,  
Ունենանք հայեր սուրբ ազատութիւն:


Օտար հողի մէջ չը մնանք հայերս,  
Հերիք է հային այս պանդխտութիւն,  
Թող չը ծաղրէ մեզ անգութ թշնամի,  
Մինչև մենք հասնենք մեր նպատակին:  
Սիրենք միութիւն... և այլն:

Քաջ Անդրանիկը անվախ, սուր առած,  
Հայաստան գնալ վաղուց էր ուխտած,

Այլ ու ձախ շարդել տաճկաց զինւորին,  
Քիւրդերի մատաղ բերել վանքերին,  
Դէհ, Շէքիր փաշայ, մտածիր հնար,  
Հազար ոսկիքով անես գլխիդ ճար:

Կովկասի քաջեր, առիւծի ճուտեր,  
Սիրէք ձեր սուտեր, առէք նիզակներ:  
Հայ օրիորդներ, պճնեալ տիկիներ,  
Ծախէք ձեր զարդեր, առէք նիզակներ,  
Հարուստ ձեր ոսկին տւէք մեր ազգին,  
Ձեր անգին անունը յիշեն սերունդներ:

Դէհ, հայ ընկերներ, հեծէք ձեր ձիեր,  
Բաց թողէք սանձեր, անցէք սար ու ձոր,  
Ահա կուի դաշտ, թշնամին անհաշտ.  
Մեր սուր թող ուտէ օսմանեան վաշտեր.  
Ասաւ քաջ Մուրադ, առած եմ խրատ,  
Կամ կուել ազատ, կամ մահ անարատ:



ՔՐԻՍՏԱՓՈՐԻՆ

Դու անցար, հերոս, դէհ հանգիստ բեզ քուն.  
Դու լուսադէմին մեռար լիայոյս,

Դու ճամբորդ ժիր դէպ ազատութիւն,  
Երբ դեռ հեռու էր, հեռու արշալոյս:

Տես ինչ հերոսներ՝ երգովդ ստեղծւած՝  
Փակեցին աչքերդ, որ հանգիստ առնուս.  
Հերոսների մէջ դու մեռար հերոս,  
Մարմնով դառար հող, հոգով արշալոյս:

Էրնէկ քո յոյսին, նա՛, որ չէր դողում,  
Երբ թոյլ տնքում էր մեր ճահիճն անյոյս.  
Այն օձեր էին և գորտեր սողում,  
Քանզի գալու էր անշուշտ արշալոյս...

Սակայն երբ ազգդ թմբկով ու փողով  
Դէպ՝ երբ ազատութիւն երթայ սրտայոյս,  
Դու կգաս այնտեղ յարութեան շողով,  
Բայց ննջիր... դեռ կայ մինչև արշալոյս...  
ՀՈՒՐԷՆ



ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԸ

Ա՛խ, իմ հայրենիք, անուշ հայրենիք,  
Կարօտ եմ քեզի անթառամ ծաղիկ.  
Կարօտդ կը քաշեմ ամեն ժամանակ,

Քո անուշ հօտին կարօտ եմ փափազ,  
Կարօտդ կը քաշեմ ամեն ժամանակ,  
Ձեմ մոռանայ քեզ, մի ժամ, մի ըռպէ:

Պիտի աշխատենք, որ քեզ նորոգենք,  
Քո մէջն եղած թուրքերին վանենք,  
Պէտք է շունենայ տաճիկն իրաւունք  
Թափել աչքերիցդ արիւն-արտասունք,  
Այլ մեր վրէժը նրանցից աւանք,  
Մեզ տւած տանջանքն կրկին յետ դարձնենք:

Ունենք մեզի զէնք, ունենք մենք հրացան,  
Կազմենք մեր խորհուրդ, առնենք մենք սահման:  
Քանի՛ մենք մնանք այլոց լծի տակ,  
Քանի՛ մենք ման գանք առանց ի դտակ  
Պէտք է սովորենք քանզի Տաճկաստան՝  
Որ լսողն ասէ. «կեցցէ Հայաստան»..



ՀԱՅՐԵՆԵԱՅ ՍԻՐՈՅ ՀԱՄԱՐ

Հայրենեաց սիրոյ համար  
Խմբեր պատրաստւած են քաջ.  
Հրացանները ուսերին  
Փամփուշաները ձախ ու աջ:

Հնազանդ կարգով շարւած,  
 Իրանք առիւծի պէս քաջ.  
 Խմբապետը հրաման տւեց  
 Գնալ դէպ յառանջ, յառանջ...

Ոսկեզօծ բաշտուղներով,  
 Հազի շորեր թանկագին,  
 Գնում էին դէպի Սասուն,  
 Օգնելու Անդրանիկին:

Հայ քաջերը դիրք մտան,  
 Թշնամուն պաշարեցին,  
 «Ամեն կողմից կրակ տւէք,  
 Կոտորեցէք», գոռացին...

Նաման, եկաւ ջան Ֆիդան,  
 Սարսափ տիրեց բանակին.  
 Փախչում էին դէպ լեռներ  
 Վախկոտ զօրքերն անագին:

Խաւարից լոյս ծագեցաւ,  
 Երևում էր մեծ յոյսեր.  
 Իաշնակցութեան ցանած սերմեր,  
 Աճում են նորա բոյսեր:

Մեր ազագայ սերունդից  
 Սպասում ենք մեծ յոյսեր,  
 Կարձակենք ազատ երգեր.  
 Տալիս է խրախոյսեր:



Ա Ն Դ Ր Ա Ն Ի Կ Ի Ն

Իբրև արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ,  
 Թնդացնում ես երկինք-դետինք տենչավառ.  
 Սուրբ անունդ պիտի յիշի դարեդար,  
 Հսկայ լերինք քեզ ապաստան, Անդրանիկ:

Քիւրդ ու տաճիկ երբ լսեն քո անունը,  
 Օձերի պէս պիտի սողան իրանց բուն.  
 Երակներէդ ազնիւ քաջի արիւնը  
 Չը ցամաքէ մինչ յաւիտեան, Անդրանիկ:

Հայոց կուսանք դափնեայ պսակ թող հիւսեն,  
 Քնքոյշ ձեռամբ քո ձակատը պսակեն.  
 Գոհարներով անվախ կուրծքդ զարդարեն.  
 Կեցցես յաւէտ դու անսասան Անդրանիկ:

Հայաստանի սոխակները քեզ համար  
 Թող դայլայլեն գիշեր-ցերեկ անդադար.  
 Անյաղթ մնաս դու քաջ կուռի սիրահար,  
 Հայրենիքի տէր ու պաշտպան Անդրանիկ:



ՆՈՐ ԿԵՍՆՔ

Երկար-ձիգ տարիներ հայ անդաստանը,  
 Չորացել է, առաս անձրև պէտք է մեզ,

Ծլել ու ծաղկելու մեր բուրաստանը,  
Գիտութեան լոյսիցը, արև պէտք է մեզ:

Մեզ պատել է սգիտութեան խաւարը,  
Փակում են մեր առաջ լուսոյ տաճարը,  
Ցոյց տալու, աղանին փառաց աշխարհը,  
Բերանում ձիթենու տերև պէտք է մեզ:

Ձանք ու ճիգ անելով լոյսին հասնելու,  
Այդ մասին ոչ մի բան չէ խնայելու,  
Այս աշխարհում մարդավայել ապրելու,  
Վերստին մեզ «նոր կեանք», պարզև պէտք է մեզ:

Ինչ ազգ չը զարգացաւ, խեղճ ու շւար է,  
Գոյութիւն ունենալ նրան դժւար է,  
Հին կեանքով ապրելը էլ անհնար է,  
Կեանքի փոփոխութիւն, նոր ձև պէտք է մեզ:  
Չամալի



ԱՆԿԵՂԾ ԽՈՐՀՈՒՐԴ ԸՆԿԵՐԻՍ

Հոգոյս հատոր, իմ հայ ազբէր, լաւ մտածիր այսուհետ,  
Քո սեփական միջոցներով կառավարելը այսուհետ,  
Նոր կեանք, նոր սիրտ, նոր հոգի առ, նոր եռանդով գործելու,  
Այլոց վերայ բոլորովին յոյս մի՛ դնիր այսուհետ:



Չէ որ անցեալ դառն փորձից խրատեցիր բաւական,  
Դործիդ մէջը սխալելուց զգուշացիր այսուհետ,  
Այս աշխարհի անխիղճ, անգուժ դարձած քները խօս տեսար,  
Օտարներու կեղծ խոստումից էլ մի՛ խաբւիր այսուհետ:

Դու քու ոյժդ չափէ, կշռէ և ըստ այնմ գործ արա՛,  
Հանգամանքից օգտւելով առաջ շարժիր այսուհետ,  
Սարք ու կարգդ ամեն կերպով, լաւ պատրաստած, գօտէ պլինդ,  
Քո Չամալիդ քեզ խնդրում է, գործ սկսիր այսուհետ:



ՉՐԻ ԱԶԳԱՍԷՐՆԵՐԻՆ

Վերջին տարիներս նոր մօղա ընկաւ,  
Լոկ խօսքով մարդն իրան ազգասէր ցոյց տալ,  
Պատգամ տւող, ճառախօսը շատացաւ,  
Սկսեցին իրանց դործին տէր ցոյց տալ:

Չրի ազգին սիրել, դրանից հեշտ բան,  
Դատարկ խօսքով հասնել խեղճին օգնութեան,  
Առանց կոպէկ տալու, թշւառին պաշտպան,  
Ընկածին սրտացաւ ու ընկեր ցոյց տալ:

Չամալ, բան կը շինւի միշտ աշխատանքով,  
Ոչինչ առաջ չի՛ գալ միայն խօսքերով,

Իբր թէ պատրաստ են մինչև իսկ կեանքով,  
Քաղաքարի զոհող անձնէր ցոյց տալ:



Մ Ի Ո Ի Թ Ի Խ Ն

Հայութիւնը վտանգւած է, հայ եղբայր,  
Ամեն կողմից սպառնում է մեզ վտանգ,  
Նոր-նոր հատուածները տալիս են նոր ծայր,  
Մենք մեզ լաւ պահելու պէտք է աշխատանք:

Հայութիւնը տեսել է շատ պատուհաս,  
Ճնշում ու բռնութիւն տարել անպակաս,  
Եթէ մէկգմէկու մենք չը տանք վասս,  
Մեզ չի կարող ջնջել ո՛չ մի շարշարանք:

Ձամալի, հարկ է մեզ կապւիլ մէկ հոգով,  
Ամեն բան կը շինւի սէր-միութիւնով,  
Թէ գործերս վարենք թայֆայութիւնով,  
Կոխովի անշարժ կառքը կունենանք:



Բարով եկար սիրուն կուռնկի եղանակով

ՌՂԵՐՁ ՄՈՒՐԱԴԻՆ ՂԱՓԱՆՈՒՄ

Կեցցես Մուրադ անունովդ,  
Բարով եկար քո խմբովդ,  
Ձարհուրեցան սարսափովդ,  
Կեցցես Մուրադ քո խմբովդ:

Դու որ եկար, անցար Ղափան,  
Կորաւ ազգանունը, Սուլթան,  
Պիտի յիշիս մինչ յաւիտեան,  
Կեցցես Մուրադ քո խմբովդ:

Դու քանդեցիր Աշուան գիւղը,  
Աւերեցիր Տանձաւէրը,  
Հէչ չէր պակաս խճճաւարը,  
Կեցցես Մուրադ քո խմբովդ:

Դու որ եկար անցար Ղափան,  
Ձեռիդ բռնած սուր հրացան,  
Ձախճախեցիր քիւրդի շղթան,  
Կեցցես Մուրադ քո խմբովդ:

Ղաթար գիւղը դու քանդեցիր,  
Օղջու ձորը աւերեցիր,  
Կին ու աղջիկ ազատեցիր,  
Կեցցես Մուրադ քո խմբովդ:

Լսողները ուրախանան,  
Քեզ պէս քաջերը բազմանան:

Քարն էլ չը մնաց գեղ Քարխանան,  
Կեցցես Մուրադ քո խմբովը:

Պարսկաստանից խումբ էր եկել,  
Ուժանիսը շրջապատել,  
Ձէնք ու դիակ թողել փախել,  
Կեցցես Մուրադ քո խմբովը:

Պարսկաստանցիք որ իմացան,  
Քո զահմիցը սարսափեցան,  
Շատ շուտ փախան, չը դիմացան,  
Կեցցես Մուրադ քո խմբովը:

Ուժանիսին հաւար հասիր,  
Թուրք խուժանին լաւ ցրեցիր,  
Արխաշ, Սուլտաշ աւերեցիր,  
Կեցցես Մուրադ քո խմբովը:

Երբ որ եկաւ Մուրադ ջանը,  
Աւեր դարձաւ Փարիջանը,  
Շատ շուտ փախաւ Շախսուվանը,  
Կեցցես Մուրադ քո խմբովը:

Որ դու ես մեր ազգի աղը,  
Հեշտ քանդեցիր Սաթուն բաղը,  
Սարսափի տակ Գրաթաղը,  
Կեցցես Մուրադ քո խմբովը:

Կոտորելես բէկ ու քրդեր,  
Հիմնայատակ քսան գիւղեր,

Աւարել ես անթիւ զէնքեր,  
Կեցցես Մուրադ քո խմբովը:

Օրհնած լինի քո հայր ու մայր,  
Որ ծնել են ազգի համար,  
Փառք ու պարծանք հայի համար,  
Կեցցես Մուրադ քո խմբովը:

Դու բաց արիր առուտուրը,  
Իջևանդ Առջակ ձորը,  
Երգ հնարող Ասատուրը,  
Կեցցես Մուրադ քո խմբովը:

Ընկեր Գալօն մեզ ես բաշխել,  
Քաջ Պապիկին հետը աւել,  
Սուրբ Գէորջայ բախում թաղել,  
Կեցցես Մուրադ քո խմբովը:

Մենք Ղափանցիք պարտական ենք,  
Հոգեհանգիստներ կատարենք,  
Գերեզմանին տապան զցենք,  
Ողորմի Սատաձ հոգուն ասենք:



ՆԵՐԿԱՅ ԿԵԱՆՔԻՑ

Ահուելի թուխ ամպեր երկինք պատել են,  
Կայծակ-կրակ, կարկուտ գալու է մէկ օր,

Երկու հսկայ բանակ ներհակ կանգնել են,  
Տեսնենք որք մայրը լալու է մէկ օր:

Մէկ կողմը բիւրք-բիւրոց սոված անխնամ,  
Միւս կողմը թւով բիշ, բայց ճոխ ու փարթամ,  
Ընդհարումը սպասում է ժամէ ժամ,  
Արդեօք որքն հարւած տալու է մէկ օր:

Ջամալ, անխեղճները աշխարհ տիրել են,  
Բռնանալով, հոգի-մարմին գերել են,  
Այլոց խաբել, իրանց փառքը հիմնել են,  
Խախուտ շէնքը ձեռքից գնալու է մէկ օր:



Ա Ն Փ Ո Ր Չ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ափսոս, որ մենք դեռ տհաս ենք,  
Գրաւվում ենք կեղծաւորից,  
Ու մշտական վեր չը դասենք  
Անպատիւը պատաւաւորից:

Յարգում ենք «ես եմ» ասողին,  
Գործողներուն, բամբասողին,  
Սուտ ու մուտ մեծ-մեծ խօսողին  
Շատ ենք սիրում չափաւորից:

Մէկի գործը դեռ չը քննած,  
Տեսնում ես ամեն տեղ գոված,

Փառաց ի փառս երկիրք հանած,  
Ճանչւած բարերար բոլորից:

Պարզը ասել ո՞վ կարող է,  
Թէ՛ այս ինչը միշտ գուփող է,  
Այլոց զրկելով ապրող է,  
Վախիլ պէտք է փողաւորից:

Մատնում են, ինչպէս որ Յուդայ,  
Իրանց պէսին բռնած վկայ,  
Բռնանում են խղճի վերայ,  
Չեն վախենում ահաւորից:

Ո՞վ որ դրան թակարդն ընկնի,  
Հոգով-մարմնով գերի կըլլի,  
Ինչ ունի-չունի տայ, չի պրծնի  
Այդպէս անգութ դատաւորից:

Ջամալի խօսքերդ փշոտ,  
Կը խայթէ վատ մարդուն կեղտոտ,  
Ուղղութիւնը խօսիք սրտոտ,  
Չը վախենալով ստորից:



Ո Ր Բ Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

Թշուռ որբ եմ, ունիմ վատ խնամակալ,  
Խղճուկ որբիս խաղալու էլ չի թողնում,

Անգութ անողորմ է, նենգ ու սխալ,  
Դուրս գալ, ազատ մանգալու էլ չի թողնում:

Մազի չափ սխալեմ, ինձ կրակում է,  
Բերանս չը բացած, նա ապտակում է,  
Բուռնցքով-մահակով, անխիղճ թակում է,  
Միշտ ծեծում է, բայց լալու էլ չի թողնում:

Ձամալ, ամեն որբի վիճակն էլ վատ է,  
Բայց կայ մեծ որ, մեղմ կերպով կը խրատէ,  
Հօրս ու մօրս անուն տալն էլ արատ է,  
Նրանց յիշել, սգալու էլ չի թողնում:



ՏԱՃԿԱՀԱՅԻ ԹՇԻԱՌՈՒԹԻՒՆԸ

Ա՛խ, տաճկահայ եղբայր, թշառ ցաւալի,  
Շատ տխուր է դրութիւնդ վիճակդ,  
Գիտեմ քաշած կեանքդ է շատ անտանելի,  
Խաւարել է քո պայծառ արեգակդ:

Բիւր տեսակ վշտերով սիրտդ է ճնշւած,  
Տունդ քանդւած, եկեղեցին պղծւած,  
Կայքդ յափշտակւած, կրօնդ անարգւած,  
Խլւած է պատիւդ, կի՛նդ, գաւակդ:

Բայց դու դարձեալ ապրի յուսով անվեհեր,  
Պապերդ էլ քաշել են շատ այսպէս օրեր,

Անգաղար աշխատի ցերեկ և գիշեր,  
Վերջը տեղը կաննի սուրբ նստատակդ:

Ձամալիս խնդրում է, չը յուսահատուիս,  
Վերադառնաս հայրենիքդ, հաստատուիս,  
Մի օր անտանելի լծից կազատուիս,  
Կը կատարւի վեհ իղձդ ու փափագդ:



ԱՆՄԵՂ ՀԱԼԱԾԱՆՔ

Հայը ի դուր հալածւում է շատերից,  
Այս է ընկած ազգի օրը-վիճակը,  
Գաղափար են կազմում քան իմ վատերից,  
Ամեն ազգ էլ ունի իւր վատ գաւակը:

Մեր աչքի մէջ եղած շիւղը տեսնում են,  
Իրանց աչքի գերանը միշտ պահում են,  
Մեծ ազգերը հազար սխալ գործում են,  
Բայց ծածկում է նրանց իրանց դմակը \*):

Ձամալ, հայը ինչո՞ւ նստանձ է շարժում,  
Նրանով որ աչքաբաց է իր գործում,  
Այս նեղ օրն էլ կեանք են տեսնում նրանում,  
Քարեր են գլորում անիւի տակը:

\*) Հայկական առած. այն է հարստութիւնը ծածկում է մարդու արատը:

ՀԱՅ ԱՇՈՒՂ

Մշտական ըու ազգիդ ցաւը դու երգեցիր, հայ աշուղ,  
Մելամաղձիկ տխուր ձայնով գեղգեղեցիր, հայ աշուղ,  
Սրտիդ խորքից ախ քաշելով հառաչելով, տխրագին,  
Շատ քարացած-անզգայ սիրտ փափկացուցիր, հայ աշուղ:

Վատերուն միշտ մտրակելով, լաւերուն միշտ գովելով,  
Դէպի բարին, դէպի լաւը գողոցեցիր, հայ աշուղ,  
Երբ վիճակէց խղճուկ հային հեռու տեղեր ցրելու,  
Ազգիդ հետքից շատ երկրներ թափառեցիր, հայ աշուղ:

Յուսահատւած, կորչելու մօտ, հայի սառած սրտերը,  
Ոգևորիչ յուսոյ երգով, նորոգեցիր, հայ աշուղ,  
Բայց բո կեանքդ շատ չարքաշ է, փորձով գիտէ Չամալիս,  
Անյայտութեան մէջ ու զրկւած թառամեցիր, հայ աշուղ:



Խեղձի ՕՐԸ

Ախ ու վախով կանցնի աղքատի օրը  
Մինչ մեռնելը, կասէ, Տէրն ողորմած է,  
Դարձեալ նրան միշտ ճնշում է հօրըր,  
Չասելով թէ՛ սա էլ մարդ արարած է:

Լի աշխարհում նա միշտ զրկւած ման կը գայ:  
Նրա աշխատանքին գին դնող չկայ,

Գիշեր-ցերեկ տխուր, սրտի մէջ կուլայ,  
Թէև կապրի, բայց կենդանի մեռած է:

Չամալի աղքատ չեն, որոնք կը մուրան,  
Նրանցից աւելի խեղճ աղքատներ կան,  
Ով որ ամաչում է, ունին գերդաստան,  
Առանց գործի շրջում է, տունը քաղցած է:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽ ՍԱՍՈՒՆ

Հայաստանի անկախ Սասուն,  
Քո ժայռերում կան շատ քաջեր.  
Հռչակւած է նրանց անուն,  
Հաւատարիմ բո պաշտպաններ:

Անդրանիկը կուում է (կրկնել),  
Թշնամուն կոտորում է,  
Չէ ուզում ստրկութիւն,  
Մինչ գտնի ազատութիւն:

Հայդուկները գէնք վեր առած  
Հայրենիքի սիրով վառւած,  
Աչքերում կրակ լցւած,  
Հոգով, սրտով են միշտ կանգնած:

Քո անառիկ դիրքերը  
Պաշտպանում են հայդուկները.

Նոցա հերոս Անդրանիկը  
Պաշտպանում է քո դիրքերը:

Հայրենիքի աէր ու պաշտպան,  
Ունիս փամփուշտ ու հրացան,  
Մօտ է հայի ազատութիւն,  
Հայաստանի անկախ Սասուն:



ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Միւնեաց երկրին մի աստղ իջաւ  
Լոյսը ծագեց ամեն կողմից.  
Երանի թէ շատ ունենանք  
Այսպէս մի ազնիւ ցեղից:

Թողեց կայք ու կարողութիւն,  
Այլոց պատիւ, իշխանութիւն,  
Միշտ երազում էր ազատութիւն,  
Ուղիղ ճշմարիտ սրտիցը:

Կեցցէ ազնիւ մի վարդը,  
Չարին պատրաստեց թակարդը  
Նայեց սուրբ գործի մակարդը,  
Թումանեանի ազնիւ ցեղիցը:

Քաջ բիւրօյից առաւ հրաման,  
Գործով կատարեց ամեն բան.

Նժոյգ, փամփուշտ ու հրացան.  
Արիւնարբու քաջ խմբեցան:

Դիմեցին դէպի Հայաստան,  
Սարսեցուց ամբողջ Թուրքեստան,  
Ինձ պիտոյ չէ Ռուսաստան,  
Կարօտ եմ քեզ Հայաստան:

Ձինւած խմբով ճամբայ ելան,  
Տէրը լինի՞ մեզ օգնական,  
Մեր հայրենիքի ազատութիւնը  
Կախւած է քաջ Մուրադիցը:



ԱԻԴԱԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ձիաւորի խմբից զատուայ մի անգամ,  
Չորս կողմիցս չունիմ մի այլ օգնական,  
Խումբ-խումբ տաճիկները դէպի ինձ կուգան,  
Ունիմ նովի սիստ, կռիւ կանեմ խիստ.  
Արիւն թափեմ ճիշտ, չեմ մնալ հանգիստ,  
Հայ ազգի սիրուն:

Տաճիկները չորս կողմս շրջապատեցին,  
Հրացանները մէկէն վրաս արձակեցին,  
Երբ որ քաջ Աւդալի անուն լսեցին,

Եղան ցիրուցան ոչխարի նման,  
Խփում ենք նրանց առիւծի նման,  
Այդ շուն թուրքերին:


Ես Աւդալն եմ չորս-հինգ դէպքի պատահած,  
Դեռ մեղայ չեմ գոչել ձեզ նման թուրքաց,  
Վաղուց եմ ես պատերազմի կարօտած,  
Արիք աջ ու ձախ դէպ յառաջ-յառաջ,  
Կռիւ կանեմ քաջ, ունեմ շատ պահանջ՝  
Այդ վատ շուն թուրքերից:

Աւդալ և Ռաշօն կուեցան քաջ-քաջ,  
Խփում են թուրքերին մէկ մէկուց առաջ,  
Ասում են, թուրքերից ունենք շատ պահանջ,  
Աւդալ և Ռաշօն կուեցան քաջ-քաջ.  
Հայոց ազգի սիրուն ունեցան պահանջ.  
Վառւած են սրտերը երիտասարդների,  
Թափեցէք արիւն հայ ազգի սիրուն,  
Այս մեր դաշտերուն:

Ռաշօն ալ գոչեց. «Աւդալ, եղբայր ջան.  
Կորուցինք ընկերներիս, ալ չենք գտնի Խան,  
Այս դաշտերը պիտի կոչւին միշտ Հայաստան.  
Օսմանեան զօրքերը արինք ցիր ու ցան:  
Առիւծի նման մենք մոնչացինք,  
Ոչխարի նման նորանց ջարդեցինք.  
Այսպէս սուրբ գործին  
Կեանքերս տւեցինք:

Երբոր ես լսեցի տղոց վտանգը,  
Վառւեցաւ, այրւեցաւ իմ կեանքը.

Դրդաց և թնդաց բոլոր աշխարհքը.  
Չայնեց Դաշնակցութեան գործ ու արարքը  
Սարսափեց Սուլթանը, դողաց Տաճկաստան,  
Կեցցէներ կոչին վեհ Դաշնակցութեան:



ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՅ

Մութ գիշերին անվախ ֆիդան  
Ազատօրէն ման կուգայ.  
Արի, գնանք Մայր-Հայաստան,  
Անդրանիկը գէմ կուգայ: (կրկնել)

Հայերուս մէջ Վասակներու  
Թիւը արդէն պակսում է:  
Հայ պատանին սուրը ձեռքին  
Նոցա մաս-մաս մորթում է:

Անուշաբոյր թարմ ծաղիկներ  
Հայ օրիորդը նւիրեց.  
Շուն շեխերին ջարդել փշրել  
Անդրանիկը վճռեց:



Ո Ր Ս Կ Ա Ն Ա Ն Պ Է Ր

—Որսկան ախպէր, սարէն կուգաս, սարի մարալ կը փնտռես.  
Ասան եարաբ, դու չտեսնիր իմ մարալիս, իմ բալիս:

Դարդի ձեռքից սարերն ընկաւ, իմ մարալս, իմ բալէս:  
Գլուխն առաւ, քարերն ընկաւ, իմ ջիւանս, իմ բալէս:

—Տեսայ, քոյրիկ, նախշուն բալիդ, կարմիր պսակ էր կապել,  
Սիրած եարի համբոյրի տեղ սրաին վարդեր էր բուսել:

—Որսկան ախպէր, սասան եարաբ, ո՞վ է հարսն իմ բալիս,  
Ո՞վ է գրկում չոր գլուխը իմ մարալիս, իմ բալիս:

—Տեսայ, քոյրիկ, սիրուն բալիդ, քարն էր դրել բարձի տեղ.  
Անուշ քնով տաք գնդակն էր՝ կրծքին սեղմել եարի տեղ:

Սարի մարմանդ հոփն էր շփում վառ ճակատին մարալիդ.  
Ծաղիկներն են վրան սգում, քո մարալիդ, քո բալիդ...

Ա. Իսահակեան



ՍԵՐՈՒ ՓԱՇԱՅԻ ԵՐԳԸ

Ով որ քաջ է, ինչ կը սպասէ,  
Արդէն ժամանակ է, թող գայ.  
Մահ-պատերազմի օրհաս է.  
Ո՞վ որ անվախ քաջ է թող գայ:


Կամ կուենք, պարպենք, վերջանանք,  
Կամ գէնքով փրկութիւն ըստանանք,  
Կուելով փրկենք Հայաստան,  
Ազնիւ մտածողը թող գայ:

Այս մեր Սասուն սարէ Սըփան  
Կուիւ ունէ միշտ անխափան,  
Կուելով փրկենք Հայաստան,  
Այս յոյս ունեցողը թող գայ:

Այս հինգ դար է մեզ կսպանեն,  
Բռնի կրօնքէն կը հանեն,  
Մեր կին աղջիկներ կը տանեն.  
Պատիւ ունեցողը թող գայ:

Երկաթէ մարդ, քարէ հոգի,  
Վրէժխնդիր լինի թուրքին,  
Անվախ քարի տակ չոքողը  
Անսխալ խփողը թող գայ:

Վերջապէս մենք ունինք կուիւ,  
Ձէնքով պիտի մաքրենք հաշիւ,  
Մեր հայրենեաց փառքն ու պատիւ.  
Սերոբ-փաշայլն սիրողը թող գայ:



ԳՈՒՐԳԷՆԻ ԵՐԳԸ

Մասնոյ լեռներում զինւած ութ աղայ  
Իրանց խմբապետ Գուրգէն և Ռուբէն.  
Մասուն երնելով զէնքեր վերցնելով,  
Մինչև ապրիլ լեռներ ման գալով:

Օրն հինգշաբթի Յրօնք զիւղ հասան,  
Տղայոց խումբը մարգի մէջ մտաւ.  
Այդ զիւղի քեօխովէն մըն էր մուսուլման,  
Իւր երկու որդին վալուն յուր տարան:

Հլու հրամանով հաւաքուաւ զօրքը,  
Թալրփ-էֆէնդին առաջնորդ ընկաւ,  
Օրը ուրբաթ Յրօնք գեղը հասան,  
Տղայոց խումբը մարգի մէջ մտաւ:

Թալրփ-էֆէնդին ըսաւ անիշուն.  
Ռուբէն կանչեց.— «Գուրգէն, զարկ էդ շուն».  
Հրացան բացեցաւ, կռնակին դիպաւ,  
Ու չար թշնամին գետին փուլեցաւ...

Այդ որ լսեցին խոտ ու գազ գազ բերին,  
Մարագի չորս կողմը կրակ վառեցին:  
Ո՛վ հայեր, հայեր, հասէք օգնութեան,  
Գուրգէն կը գոհւի ի սէր ազգութեան:

Խմբապետ Գուրգէն առիւծի նման  
Երկու ընկերով մարգից դուրս ելան,

Գնդակ պարպելով գէպի սար գնացին,  
Վատ թուրքի զօրքը ընկաւ յետևից...



ԲԱԻ Է՛, ԵՂԲԱՅՐՔ...

Բաւ, եղբարք, վիղը ձկեյ,  
Ողորմելի երևել,  
Ժամանակը հասել է  
Հայ դրօշակին ծածանել:

Հայոց լերինք թող թնդան,  
Հայոց բերանք թող գոռան,  
Հայաստանի դաշտերում,  
Հայոց քաջերի զիլ ուռան...

Արիւն վոթէ թող հայը,  
Աղաղակէ միշտ ուռան...  
Մեր թշնամին այսուհետև  
Մրտի վախէն թող դողայ:

Այսուհետև արտասուք  
Վախկոտները թող հեղուն,  
Հայքս արդէն պատրաստ ենք  
Ոթել ազնիւ մեր արիւն:

Ու չենք դադարիլ սթեղուց  
 Մեր հայ ազնիւ արիւնը,  
 Մինչև ազգը չըստանայ  
 Իրա ազատութիւնը...

Ախ ու վախը մենք մոռանանք,  
 Այժմ գոչենք մենք ուռա.  
 Հայք գոչեցէք միշտ ուռա՛  
 Որ թշնամին մեր դողայ...



✓ ԴԱՆԱԿԸ ՈՍԿՈՐԻՆ ՀԱՍԱԻ

Դանակը ոսկորին հասաւ,  
 էլի ասում են համբերէ,  
 Յաւիս վերա նոր ցաւ դրաւ՝  
 էլի ասում են համբերէ:

Թշնամին կոնգնած իմ մօտին,  
 Ձեռքը դրած է սրին,  
 Կուզէ հանել իմ հոգին՝  
 էլի ասում են համբերէ:

Ինձի ասում են համբերէ,  
 Տանաէրը բան կը բերէ.

Նայում եմ, կայքս կաւերէ,  
 էլի ասում են համբերէ:

Կանգնած է թշնամին դաժան,  
 Կատաղել է ինչպէս գազան,  
 էլ ինչ մնաց համբերութեան,  
 էլի ասում են համբերէ:

Սիրաթուս ասում են թէ կաց,  
 Կասեն մի անէ լաց ու թաց,  
 Կաշեմ ետքը բան չը մնաց,  
 էլի ասում են համբերէ:

Ս. Թ.



ԿՈՂՈՊՏԻԱԾ ԵԿԵՂԵՅԻ

Աւազակները օրը ցերեկով  
 Տուն ու տեղս բաժանեցին,  
 Հօմերով ջլունքներով  
 Դուռ պատուհանս կոտրատեցին:

Աւարառուք եկան շարան,  
 Յոյց տւեցին սրի բերան.

Հազար ու վեց հարիւր տարւան  
Սրբութիւնը աւերեցին:

Գանձատունս լի էր, առատ,  
Անթիւ փողեր, ոսկի արծաթ,  
Առեանգեր մուրհակներ հաստատ  
Առան տարան թալանեցին:

Ունէր բազում կալածներ,  
Գիւղեր, հողեր, ձօխ անտառներ.  
Հազարաւոր տարւան կայքեր,  
Զօռով ձեռքիցս խլեցին:

Այս ի՞նչ դարի հասանք, աստուած,  
Հին ցաւերից դեռ չազատուած.  
Տանս տխուր, տրտում նստած,  
Յանկարծ եկան մերկացուցին:

Մեր նախնիքը դարեր առաջ  
Ունեցել են ողբ ու հառաչ,  
Բայց այսպիսի անեղ հարւած  
Ամենևին չէին տեսած:

Ահա քեզ դար, նոր լուսաւոր,  
Որ ընկածին կանեն տկոր,  
    , կսպանեն ամեն օր,  
Զեն թողնում որ ազատ ապրենք:

Ես Հայրիկն եմ անմխիթար,  
Զունիմ հանգիստ, չունիմ դադար,

Զաւակներս, անմեղ արդար,  
Ա՛խ, չգիտեմ ուր մնացին:

Ս. Թ.



Ա Ն Է Ծ Ք

Ունիմ Աստուած, բայց չունիմ Տէր,  
Տարածներդ քեզ չի մնայ,  
Կստանաս փոխարէնը անխախտ՝  
Տարածներդ քեզ չի մնայ:

Շուտ կստանաս փոխարէն,  
Բռնած գործդ է անօրէն.  
Տուրը կտաս վարէն վերէն  
Գողացածներդ քեզ չի մնայ:

Մէջ տուն ունէի, քանդեցիր,  
Խեղճ զաւակներուս զրկեցիր,  
Դուռ ու պատուհանս ջարդեցիր՝  
Տարածներդ քեզ չի մնայ:

Շատ չըտեսց գործդ երկար,  
Տանջեցիր ինձ՝ դու էլ տանջւար,  
Շուտով փոխարէն ստացար,  
Գուփածներդ քեզ չի մնայ:

Զի կշտանայ գողացողը,  
Պատիժ կստանայ տանողը,

Մեծի անէծքը առնողը,  
Թալանածներդ քեզ չի մնայ:

Զրկարողացար շուտով մարսել,  
Տարածի քեզ է վնասել,  
Մկեցիք շուտով փսխել,  
Տարածներդ քեզ չի մնայ:

Մարեցիք իմ վառ աշտանակը,  
Սրտիս զարկիք սուր նիզակը,  
Մէջս գցեցիք վառ կրակը,  
Տարածներդ քեզ չի մնայ:

Մինչև անգամ հին հագուստներս,  
Գտար, տարար պահուստներս,  
Մարեցիք իմ վառ յոյսերս՝  
Տարածներդ քեզ չի մնայ:

Մ. Թ.



### ԽԱՂԱՂ ԴԱՇՏԻ ՈՐԴԻՔ

Խաղաղ դաշտի որդիք, լեռները ելնենք,  
Արօր գութան մոռնանք, հրացան առնենք.  
Խեղդած մեր բողոքը յայտնենք զէնքերով  
Եւ մեր արդար դատը վարենք արիւնով.  
Մեր կեանք, մեր մահ թող լինի ազատ.  
Ճնշած հայի որդիք հարազատ: (կրկնել):

Քան թէ ամեն վայրկեան կենդանի մեռնել,  
Ազատութիւն վճռել և ազատ մեռնել,

Հինգ դարերով մեռեալ սարուկ հայ ազգը  
Այսպէս պէտք է լուծէ եղբարց վրէժը,  
Մեր կեանք, մեր մահ և այլն...

Սարկութեան շղթան պարզ շառաչում է,  
Ազատութեան ճնշած ձայնը հառաչում է,  
Ազատ լեռներ լինին թող մեր ապաստան,  
Եւ ընդարձակ հողեր հայոց գերեզման,  
Մեր կեանք, մեր մահ և այլն:

Յառաջ դիմենք, զարնենք Համիդին,  
Ղրկենք հայ գիւղացուն, հասնի զաւակին.  
Իմաց տանք սուլթանին, անգութ բռնաւոր,  
Ծագէ հայ հերոսի համար պայծառ օր,  
Մեր կեանք, մեր մահ և այլն:

Յրևած խմբեր հասնեն Զէյթուն և Վան,  
Շտապենք, միանանք, կազմենք խումբ հայկեան.  
Հայի ազատութեան պարզենք դրօշակը,  
Կեանքը մահով կապած, դնենք նոր պսակ:  
Մեր կեանք, մեր մահ և այլն:



### ՀԱՅԴՈՒԿԻ ՎԵՐՁԻՆ ՈՒՆՏԸ

Թող չար օրհասը թափէ իմ գլխին,  
Ապագութ մահւան բոլոր սև շարիք,

Բայց քո սուրբ անուն մինչև վերջին շունչ,  
Ես չեմ մոռանայ, սիրուն հայրենիք:

Թող օրհասական բոլոր պատուհաս,  
Թափէ խղճիս վրայ իմ անգութ օրհաս,  
Բայց մինչև ես կեանքիս մաշած հետին կծիկ,  
Քեզ չեմ մոռանայ, անգին հայրենիք:

Թող գոմորական արիւնոտ մոխիր  
Թափէ իմ գլխիս միշտ ճակատագիր.  
Բայց մինչև չբամնեմ մահու դամբարան,  
Քեզ չեմ մոռանայ, ազնիւ հայրենիք:

Թող ինձ պատրաստէ անխիղճ թշնամին  
Կախաղան, և սիւն, կամ մի այլ գործիք,  
Բայց մինչև չը գցեն շիրիմ իմ մարմին,  
Քեզ չեմ մոռնայ, սէր իմ հայրենիք:

Թող թշնամութեան դժնեայ ծառի ձիւղ,  
Տայ ինձ իւր փշոտ թունալից պտուղ,  
Բայց մինչև կեանքիս վերջնական վայրկեան,  
Պիտի բեզ յիշեմ, սիրուն հայրենիք:

Թող կոյր ամբոխը անձրեւէ գլխիս  
Քար, հուր, շանթ, երկաթ և շատ չարիքներ,  
Բայց մինչ իմ բերնից չելանէ հոգիս,  
Քեզ չեմ մոռանալ, անտէր Հայաստան:

Թող ինձ հալածեն Վասակի թոռներ,  
Ասելով՝ ագէտ, յիմար և անբան.

Այդ ես կը տանեմ մինչ կեանքիս վախճան,  
Բայց քեզ չեմ մոռանայ երբէք, Հայաստան:

Թող իմ զիակս, մանրած մաս առ մաս,  
Տանեն սզալով դէպ մահու դարպաս,  
Յայնժամ կաշկանդւած քնով մշտական,  
Գուցէ քեզ մոռնամ, մայր իմ Հայաստան:

Բայց ոչ երկնքում լուսոյ որդոց հետ,  
Իբրև մի անմահ սուրբ հրեշտակապետ,  
Պիտի միշտ գոչեմ, կրկնեմ յաւիտեան,  
«Սիրուն հայրենիք, սիրուն Հայաստան»:



ԽԱՆԱՍՈՐԻ ԿՈՒՈՒՄԸ ԸՆԿԱԾՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Յուլիս ամսի քսանուինգին,  
Մօսին հրացան պատրաստ ձեռքին,  
Քրդի ոխը պահած սրտին,  
Դէպ Խանասոր դիմեց ուժգին:

Երեք հարիւր հայ քաջերով,  
Բոլորը զինւած մօսիններով,  
Շէրիֆ բէկին մեծ ջարդ տալով,  
Կարօն ընկաւ վերժ կանչելով:

Ազուլեցի քաջ պատանի,  
Հօրդ, մօրդ ո՞վ լուր տանի,

Քեզ պէսներին միշտ երանի,  
Դուք էք յոյսը Հայաստանի:

Ամեն աչքեր թող արտաւեն,  
Ամեն սրտեր թող կտրատեն,  
Խանի նման զոհեր տւին,  
Խեղճ հայերին սնց համբերեն:

Փչեց մեզ զով Առաւուրից,  
Հայերի սիրտն էլ այրեց.  
Խանի պէս քաջն մեզանից խլեց,  
Հայ քաջերի սիրտն էլ այրեց:

Դու ով ունիս, որ քեզի լայ,  
Գերեզմանիդ վրայ ողբայ,  
Թշնամիէդ վրէժ առնէ,  
Անբաղդ հայուն օգնող չկայ:

Խունկ ու մոմով գամ Խանասօր,  
Արցունք թափեմ ես ամեն օր,  
Քեզ հարցնելով մնացի մոլոր,  
Նստած կուլամ միշտ սգաւոր:

Արտասուքս հեղեղ դարձաւ,  
Պայծառ օրս խաւարեցաւ,  
Դաշտ ու ձորեր արիւն դարձաւ,  
Խանի պէս քաջը զոհեցաւ:

Առնեմ սուրս, եխեմ Առաւուր,  
Քիւրդեր մորթեմ ես ձախ ու աջ,  
Ես էլ հայ եմ պարտաճանաչ,  
Հայերի համար մեռնել քաջ-քաջ:

Ախ, երանի թող մեռնէի,  
Ազգս ազատած տեսնէի,  
Ուրախ զերեզման մանէի,  
Եւ հանգստութեամբ ննջէի...



ԹԻԿՈՒՆՔԻ ԼԱՅՆ

Թիկունքդ լայն, թևերդ ուժգին,  
Կռներդ ուժեղ, պինդ սողալատ,  
Սիրել զիտես, կուել չիտես,  
Դու անզգայ երիտասարդ:

Քոյրդ տանում են քիւրդերը,  
Եղբօրդ արիւնն են ծծում.  
Դու անտարբեր, սառն արիւնով,  
Հանգստութիւն ես փնտրում:

Ամօթ քեզի, հազար ամօթ,  
Որ գէնք չունես քո ձեռքին,  
Քո եղբօրդ կուի դաշտում  
Տապալում է թշնամին:

Չեռքդ սուր ինձ, երգենք այստեղ,  
Թողնենք փառքը աշխարհի,  
Գնանք, կուենք առիւծաբար,  
Ի սէր ճնշւած հայ ազգի:



ԿՌՈՒՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Բարով եկար, սիրուն կռունկ,  
Ի՞նչ լուր բերիր հայրենիքէս.  
Խօսիր ինձ հետ ազատօրէն,  
Կեանքս կնւիրեմ ես քեզ:

Տեսար մեր հայրենեաց տունը,  
Գեղեցիկ զարդարեամ գոյնը.  
Նորա սիրուն տանջում եմ,  
Աչքերիցս կտրաւ քունը:

Ազատ տեսար մեր լեռները,  
Հաղորդեցի՞ր դու իմ սէրը.  
Այն լեռներու պաշտպանողը,  
Արծւի կորին նետերը:

Տեսա՞ր մեր փոքրիկ բուրաստան,  
Վարդ, մեխակ, շուշաններ շատ կան.  
Եղեմական դրախտավայր,  
Նա կոչւում է Հայաստան:

— Այնտեղ ունիս եղբայր ու քոյր,  
Միջագ ի՞նչ կսպասէ իգուր,  
Արի առնեմ իմ թևերուն.  
Գնանք այնտեղ, ուրախացուր:



ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՅ

Ես ընկած եմ քիւրդերու մէջ,  
Արնաշողաղ վէրքով լցւած,  
Ինձ կարծել են մեռած,  
Թողել գնացել են.  
Կիսամեռ թշուառ ի՞նչ անեմ,  
Մնացել եմ անօգնական:

Երբ նայում եմ լուսնի լուսով,  
Հազարներով փուած գետին,  
Սատկած և վիրաւոր.  
Շարիֆ-բէկ քիւրդեր մըմնջում են միլա,  
Վախկոտ հեկալօներ.  
Տեսարանն ուրախալի էր.  
Թեթևանում էր իմ վշտեր:

Քիւրդ լաց-կոծների միջից  
Յանկարծ լաւեց. «Մայր իմ անուշ»...  
Ա՛խ, այդ ձայնն էր հայկական:  
Գնացի դէպ նորան, տեսայ ընկերս էր,  
Զինւոր էր նա, վէրքը ստացած,  
Արեան գաշտում ինձ նման:

Ձեռք մեկնեցի, մտերմիս ասի.  
«Նայիր բոլորդ, հոգի ստացիր»,  
Հայի յողթու թիւնը մեծ է, ջան ֆիդան,  
Փառք իւր Դրօշակին:  
Վիրաւորներս սիրտ առած,  
Հեռացանք արեան գաշախց:

էլի սաղ եմ քաջի պէս,  
 Տես իմ վերքերուս տեղերը.  
 Հաւատացէք հայ զինուորի ուղղութիւնը,  
 Որ չինայեց իւր ազգին իր արիւնը,  
 Ազատութեան զոհեր ենք մենք,  
 Ազատ կամքով, ազատ խղճով:



ԵՐԲ ԵՍ ՄԵԾԱՅԱՅ

Երբ ես մեծացայ, տղամարդ դարձայ,  
 Ու սիրտս զնգաց սիրոյ վառվառմամբ,  
 Ուզեցեայ սիրել աղջիկ սեռահայ,  
 Բայց դու գիրկս ընկար, անգին հրացան:

Ու բոց կարօտով գրկեցի ես քեզ,  
 Մղմեցի կրծքիս, անգին հրացան,  
 Իմ սրտի տէրը հարսնացուս դարձար.  
 Անենագ ընկերս, իմ սէր հրացան:

Երբ թշնամու դէմ կուրի եմ վաղում,  
 Դու կրծքիս սեղմած, անբաժան հետս ես,  
 Դու ես միշտ սրտիս մրրիկը յայանում,  
 Քեզնով եմ փնջում, որոտում վրէժ:

Եւ երբ գաղազած գլուխս դնեմ  
 Կուրի դաշտումը, կուզեմ, որ փորեն

Քեզնով ինձ մի փոս, կուրի ընկերներ.  
 Քեզ հետս թաղեն, իմ հարս, իմ ընկեր:



ԼԱՅ, ՄԷՐԻԿ ԶԱՆ

Հովերն առան սար ու ձորեր,  
 Անպերն ելան, մութն ընկաւ,  
 Անգին մէրիկ, հէրիկ յուսաս,  
 Քո շողշողուն աստղը ընկաւ,  
 Լաց, մէրիկ ջան, որ էլ չեմ գայ,  
 Վէրբը սրտիս տուն չեմ գայ:

Կաթիլ-կաթիլ ամպըն էր ցողում,  
 Սև ու պղտոր երկնքից,  
 Մաղիկ-մաղիկ վէրբը էր ծորում  
 Իմ անգուման սև սրտէս,  
 Լաց, մէրիկ ջան, որ էլ չեմ գամ,  
 Վէրբը խորն է, ճար չեմ կայ:

Անգութ կեանքում վէրբ ըստացայ,  
 Սրտանց սիրած ընկերէս,  
 Անխիղճ կեանքում վէրբ ըստացայ

Անուշ սիրած քոյրիկէս,  
Լաց, մէքիկ ջան, որ էլ չեմ գայ,  
Ազիզ բալէդ էլ չի գայ:



Կ Ո Ւ Ի Ի Կ Ա Ր Օ Տ Ը

Հ. Ա. Վ. Ք-եանին.

Անողոր բազըզը զարկաւ մեզ ուժգին,  
Ու մենք զատուցանք, մենք երկու ընկեր,  
Որոնք տարիներ մէկ տեղ են երգեր,  
Մէկ տեղ են լացեր արցունքը կեանքին:

Եւ անա այսօր ձայնդ հեռաւոր,  
Ձայնդ եղնիկի խոցւած, որբացած,  
Ժայռին ու ծովին իր սիրտը բացած,  
Կողէ իւր ընկեր սիրով վիրաւոր:

Ես այնպէս կղձամ ձայն տալ քեզ խորոտ,  
Ձայն մը, որ կտրէ սար, ձոր, դաշտ ու ծով,  
Հնչէ ահանջիդ յստակ հարւածով,  
Պատմէ, որ ես ալ տեսքիդ եմ կարօտ:

Կուզեմ ըսել քեզ և պտուալ նորէն,  
Որ ձեռք ձեռքի տանք ու գործենք այնտեղ,

Ուր կը փոթորկի տառապանքն անեղ,  
Ընկձւածներու, առած բրտօրէն:

Եղնիկ



Ե Ր Կ Ր Ի Չ Ա Յ Ն Ը

Երբ ես հոն էի, թոյլն ուժեղին քով,  
Արցունքն ու քրքիջ, ոճիրն ու խոր վիշտ՝  
Մին հայհոյանքով, միւսը խնդրանքով՝  
Կը պայքարէին իրարու հետ միշտ:

Կատաղի յորձանքն այդ խուլ պայքարին  
Կառնէր զիս իր մէջ ու գրոհ կուտար,  
Այնպէս կը փրփրէր, կը գոռար ուժգին,  
Որ կեանքս ու շունչս կառնէին դադար:

Եւ ժխորի մէջ շանթի պէս անեղ,  
Ճնշող, մեռցնող ձայն մը կորոտար,  
«Կորիւր», հեռացիր, ինչ ունիս այստեղ,  
Գնա՛, թափառէ, աստղի տակ օտար:

Քանի հեռացայ, այդ ձայնն ալ այնքան  
Կորուց իր շեշտը ախուր, ցաւագին,  
Կորուց իր ժխոր, քրքիջ դիւական,  
Երգ ու մեղեդի դարձան մեղմագին:

Բայց ահա՛ այսօր երկրի ձայնն անուշ,  
Միրելիներու համերգ երկնածիր,  
Փայտի ու լացի ակկօրդով քնքուշ  
Կը կանչէ, կուզէ տանիլ զիս երկիր:

Եղնիկ



ՀՈԳ ԶԷ ԹԷ ՄԵՌՆԵՄ

Հոգ չէ թէ մեռնեմ, մեծ յաղթանակի  
Կը ծագէ արև ազատ, հովերով,  
Նրա ցոլքերը՝ կարմիր, շեշտակի,  
Կը ցրեն մռայլ խաւարը շուտով:

Դո՛ւք, վեհ ըմբօսաներ, ձեռք-ձեռքի սուած,  
Կը փշրէք շղթան ստրուկ օրերի,  
Բռնակալութեան լուծը ջախջախած,  
Արիւն անցեալին չէք լինի զերի:

Եւ պարարտ հողի բեղմնաւոր կրծքին  
Կը փայլեն խաղաղ բահ, արօր, գուլթան,  
Ու կուշտ գեղջուկի պայծառ երգերին  
Խրոխտ լեռները արձագանք կուտան:

Եւ շէն գիւղերում ու աւաններում  
Կը հնչէ գարթ աղմուկ, աղաղակ,

Ամեն օճախից ծուխը դալարուն  
Կաւետէ կեանքի հեքը ներդաշնակ:

Եւ անտառների խորքից կուսական,  
Հոյակապ ու ժիր գործարաններից,  
Ջեր բանւորների բաղդաւորութեան  
Կը լաւի օրհնենքն անդուլ բերկրալից:

Արթնացած միաքն կը ծնի հանճար,  
Եւ ազատ խօսքը, յոյս ու բողբ անդորր,  
Կեանքը հաւասար, վաստակը արդար,  
Մարդը չի լինի դահիճն իր եղբօր:

Հոգ չէ թէ մեռնեմ, ազատւած երկրի  
Շունչը բարերար ոյժ կը տայ մարմնիս,  
Սուրբ ազատութեան գոռ ղօղանջների  
Շոփնդն անսպառ կը գգւէ հոգիս:

Ահա այդ ժամին ես նորից կապրեմ;  
Մեռած տենչերս նորից կը ծլեն,  
Մայր հողի գրկում վառ, փարթամ, վսեմ,  
Եւ շքեղ փնջով ձեզ այցի կելլեն:  
Արփենիկ



ՉԱՅՆ ՏՈՒՐ ԱՄԵՆՔԻՆ

Տես, փրկու՛մ են աւերակներիդ մոխրի կոյտերում,  
Վերջին չոր հացդ, վաստակիդ վերջին թերմաշ փալասներ,  
Փլատակներից՝ խաւար գիշերում սև բուն անդալքում,  
Քեզ վայ է տալիս, նստել են շուրջդ քաղցած ագռաւներ:

Նայիր, անհատիկ, ամուլ արտերիդ երեսից խոպան  
Շրջմուլիկ քամին՝ թևերը փռած ազատ կը պարի,  
Ծղրիտն է դարձել կանգնած ջաղացիդ միակ ջաղացպան,  
Կը ծղրայ անքուն-անգործ անիւիդ կերգէ ողորմի:

Նայիր, ժանգն ինչպէս իր հաստ շերտերով գութանիդ, բահիդ  
Անգործ օրերի ստոր կնիքի դրոշմ է դրել,  
Աւեր ախոռից երբեմն առոյգ կով ու եգներիդ  
Ուրախ բառաչը, գոհունակութեան մնջոցն է լռել:

Նայիր և շուրջդ, ինչպէս բռնութեան ծանր լծի տակ,  
Կիսաքաղց, լքած վխտում են մարդիկ, տենդոտ զայրոյթով  
Անյոյս սրտերում թոյնը վրէժի ու աննպատակ,  
Թշնամուն մոռցած, ձեռքերը ներկում եղբօր արիւնով:

Սթափւիր, թշւառ, ձայն տուր ամենքին՝ ով քո դառնութեան,  
Քո արցունքներին, քո մուսլ խաչին եղել է ընկեր,  
Չեռք-ձեռքի տւած՝ դուրս եկ կուի դաշտ, ուր որ մարդկութեան  
Մի այլ, նոր կեանքի կոչնակն է հնչում, վեհ աւետաբեր:  
Արփենիկ



ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ

Ա. Խ-ի յիշատակին

Էն սև գիշերում, դուման դարդերի,  
Փրփրած ծովում ընկաք ու մեռաք,  
Ա՛յ, իմ ազիգներ, դաղւած սրտերի,  
Եաման օրերի դուք յոյս երկնառաք:

Ծփուն ալիքներ՝ փրփուր թևերով,  
Ինչպէս սիրտ արին ու ձեզ կուլ տւին,  
Ա՛յ, իմ ազիգներ, որ էն մեծ ցաւով  
Ճանապարհ ընկաք, ալնապիշ ափին:

Խրոխտ փարոսը որ դուք վառեցիք,  
Վշտերու ծովի մութ դէմքի վերայ  
Լոյս է տարածւում: Անցնում են մարդիք,  
Ուր առաջինը դուք բացիք ճամբայ:

Ես ձեզի չեմ լայ, դուշմանը թող լայ,  
Էն դուլ օրերի գեանաքարը ընկեր,  
Իսկ ես, ազիգներ, ձեր ճամբէն ընկայ,  
Անլաց, անմուռնչ, հպարտ, անվեհեր:  
Արփենիկ



ԹՇԻԱՌ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Թշւառ ժողովուրդ, մոլեռանդ գերի,  
Փթած, խարխլած, անյայտ ոյժերի,

Որ այնպէս թափով խոնարհել գիտես,  
Խաչ ու մասունքի զօրութեանը անտես:

Որ այնպէս յուսով կեանքիդ փրկութեան,  
Գութ ես միշտ մուրում, մուրում յաւիտեան.  
Դեռ չը զարթնեցիր դարաւոր քնից,  
Յուսախաբութեան մոայլ ցնորքից:

Դու այնպէս, խղճուկ կեանքի շուկայում,  
Ձեռքից ձեռք անցար լռիկ, անդադրում,  
Բանտ ու աքսորի դու տաժանակիր,  
Եղար հարազատ, հլու որդեգիր:

Բայց հերիք անարգ, եսամոլ մարդիկ,  
Շինեցին իրանց շահի խաղալիք,  
Քո ցաւն ու քո բաղդ, թշառ մուրացկան,  
Միթէ այդ կեանքը սիրում է այդքան:  
Արփենիկ



ԿԸ ՀԻՒՍԵՄ ԵՐԳԵՐ

Բարձիր ուսերիդ քո բեռը կսկիծ,  
Ողբերն ու ճիչեր անհուն տանջանքիդ,  
Վհատ կասկածդ և սրտիդ անբիծ  
Բոլոր ցաւերը և խաչը կեանքիդ:

Թող կաթիլներով՝ ճնշման կապանքից,  
Կաթեն սրտիս մէջ տենչերդ մարած,

Տգէտ խաւարում, գլխիդ անձկալից,  
Ըմբոստ խլրաման ծիլերդ խամրած:

Ես քո սար-բերան հլու բեռնակիր,  
Կը սուղւեմ՝ վշտի անյատակ ծովում,  
Իսկ դու աշխարհում նորից արծարծիր  
Սուրբ ազատութեան իդէալի երդում:

Եւ երբ ցաւի տեղ այդ ազատութեան  
Տիրէ հրճւանքը երկրի երեսին,  
Փշրեն շղթաներ, բանտ ու կախաղան,  
Հնչեն շեփորներ նոր արշալոյսին:

Այնժամ լեռ-բեռդ անյատակ ծովի,  
Խորունկ խորքերում վշտիս հետ թաղած,  
Ես վեր կը թռչեմ, կը փարւիմ հովի,  
Ձլոտ թևերին՝ թեթև թև առած:

Կը հիւսեմ երգեր ազատ օրերի,  
Անմահ, ոգեշունչ, բողբոջ յոյսերից,  
Կերգեմ նոր հիմք—հաւասարների,  
Լոյսի ծնունդը՝ բղխած խաւարից:



ԿԵՅՅԵՆ ՇԱՐՔԵՐԸ

Կեղծիքին սովոր, բռնութեան յարմար,  
Դրւած է հիմքը մեր թշառ կեանքի,  
Եւ սարկութեան բարերն անհամար,  
Հիւսում են շէնքը մոայլ տանջանքի:

Բայց ահա ցնցեց տիտանը, հսկան,  
Ըմբոստացումի թափից թե առած,  
Պտացրեց գոռ շարքերն ու մահւան  
Չարկն իջեցրեց դահճին դառամած:

Կեցցեն շարքերը, մարտիկներն անգին,  
Կեանքի ու ինչքի հաւասարութեան,  
Կեցցեն շարքերը, որ ստոր փառքին  
Անգունդ են փորում, անարգ գերեզման:

Արփենիկ



ԹՈՒՄԱՆԻՆ ԵՒ ԻԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Մեր եղբայրները զինաթափւած  
Անօգնական են ընկած,  
Կազակներով շրջապատւած,  
Վայ մեղ, գերի ենք ընկած:

Մեր եղբայրներ զինաթափւած  
Սարի լանջում են ընկած,  
Գլուխները մարմնից կտրած,  
Քաջ միայն դուք էք քնած:

Գերեզմաններ—կանաչ դաշտեր,  
Դագաղի տեղ լեռ քարեր,  
Քահանի տեղ թփեր,  
Աղօթողներ, սև ամպեր:

Պմբապետներ թորգոմ, Որսորդ,  
Քահանաներ մեզ հաղորդող,  
Իրանք եղան առաջին զոհ,  
Հայոց քաջերն են կուռղ:

Մեր վրէժը պէտք է լուծէք  
Սրով, թրով, գնդակով,  
Եւ ոչ միայն լաց ու կոծով,  
Թշնամու դէմ կուելով:



ՇԷՊԱՆՈՒ ԵՐԳԸ

Նպատակիդ դու չը հասած, Շէխալի,  
Ցաւալի վախճան ունեցար, Շէխալի,  
Ապագայ յոյսերիդ նշոյլը գոնէ,  
Չը տեսած գոհեցար դու, քաջ Շէխալի:

Մանկութիւնից վառ էր քո սրտի կայծը,  
Քաջ յայտնի է շատերին քո արածը,  
Շարժեցիր թշնամուն դու չար նախանձը,  
Դարան մտան, քեզ գոհեցին, Շէխալի:

Քո պարզ ճիշտ խօսելը եռանդ տալիս էր,  
Ամեն մի նեղացած քեզ մօտ գալիս էր,  
Նոյն իսկ քո թշնամին քեզի լալիս էր,  
Ափսոս որ գոհեցար դու, քաջ Շէխալի:

Վիրաւորւած քաջ շահպազը մոնչում,  
Քաջ Շէխալի քեզի օգնութեան կանչում,  
Մութ գիշեր է, թշնամին չի ճանաչում,  
Վրէժըդ սրտիդ մէջ մնաց, Շէխալի:

Քաջ անունըդ հռչակեցաւ ամեն տեղ,  
Փոխարէն ստացար պատկներ շքեղ,  
Միջագին խնդրում է այն օրը անեղ  
Դատաստանիդ ներկայ լինի, Շէխալի:



ՇէխԱՒՈՒ ՂԱԶԱՆԻ ԵՐԳԸ

Ղազախի շուրջը ման կու գար  
Մի առիւծի քաջ կորիւն,  
Սուրը ձեռքին կոտորում էր  
Հազարաւոր թշնամուն:

Իսկապէս քաջ Շէխալին էր,  
Խեղճ հայերին միշտ պաշտպան,  
Հազարաւոր խուժանի դէմ  
Կանգնած էր միշտ հանդիման:

Սիրտը վրէժով բորբոքւած,  
Կոտորում էր ձախ ու 'աջ.  
Կարնեցի ընկեր Արշակը  
Վազում էր դէպի առաջ:

Հայրէնասէր հայդուկները  
Կուում էին երգելով,  
Քաջ Շէխալի իւր խմբովը  
Եւն հու ետ մադադ գոռալով:

Նոր ոյժ ստացան թուրքերը,  
Առաջ եկան թէև քիչ,  
Միջագին գիտէ Շէխալուն,  
Չեզ էլ կանէ բնաջինջ:

ՀՆԶԱԿԵԱՆՆԵՐԻ ՄԱՐՇԸ

Հեռաւոր երկիր նստած դու նժդեհ,  
Հայրենեաց բաղդին մօտուց տես տեղեակ,  
Քարոզ քաջարի նոր սկզբանց վեհ,  
Յեղափոխութեան ձայնատու հնչակ:

Նոր գաղափարի քո ցանած սերման,  
Ազնիւ պտուղներ հասուննան առատ.  
Կարին և Պօլիս որոտման նման  
Անդրանիկ շարժում ծնաւ քեզ հնչակ:

Չար բռնակալը հայոց կեղեքիչ  
Վախէն պահուեցաւ ոսկի գահի տակ,  
Խուլ Եւրոպայի թնդաց մեծ գահլիճ,  
Հայր ցնցուեցաւ, կարմրեցաւ հնչակ:

Այսօր քո սերմանց նոր պտուղը անա  
Հասած կարմրեն արեան նմանակ,  
Կենաց և մահու սուրբ ժամ մերձենայ,  
Կարմիր հրաւերից ակն ունիմք, հնչակ:

Կոչնակ հնչեցուր, հնչեցուր արակ,  
Թող հայք ոտք ելնեն, ծագէ մինչև ցայգ,  
Փշրեն ծանր շղթայք, ծագէ նոր արև,  
Ազատեմք հնչել ոսկեզօծ հնչակ:



ԿՈՉ ՄԻՈՒԹԵԱՆ

Ապերախտ ենք մենք հայերըս,  
Քեզի մոռցանք հայրենիք.  
Մեր սերունդը մեր ետևից  
Պիտի կարգայ նախատինք:

Եղեմական դրախտ էիր  
Դու մեզ համար, Հայաստան.  
Միթէ հիմայ դժոխք դառար  
Դու, սիրելի բուրաստան:

Սեփական շահերի համար  
Մոռացել ենք ազգութիւն.  
Եղբայր եղբոր դէմ ենք կանգնել,  
Այդպէս է արդարութիւն:

Գերութիւնը միթէ մեզի  
Վիճակւած է անսլայման.  
Մինչև երբ մենք ման պիտի գանք  
Այսպէս խեղճ, թափառական:

Երգիչ միջազը խնդրում է,  
Կապեցէք սէր միութիւն,  
Միայն սիրով պիտի գանենք  
Խեղճ հայերըս փրկութիւն:



ԲԱՒԱԿԱՆ Է ԳՈՒՆ

Զարթեցէք, հայեր, քնանք բաւական,  
Հնչում է փողը պատերազմական.  
Առնենք զէնքերըս, յառաջ սլանանք,  
Կուող քաջերի հետը միանանք:

Ամօթ է ամբողջ մարդկութեան առաջ,  
Բաւական է մեզ, լաց կոծ և հառաչ.  
Մեր արտասուքին մէկը չը գլթաց,  
Ծոյլին, վախկոտին չի գլթայ ասուած:

Ծնանք մեռնելու, էլ ի՞նչ կը սպասենք,  
Արքայութեան բաժին ունենք շասենք.  
Եթէ չը մեռնենք մեր ազգի համար,  
Մեղաւոր ենք մենք, չենք լինի արդար:

Վանենք մեր սրտից վախը և ահը,  
Զարդենք և փշրենք բռնութեան զահը,  
Մահը իմացողին համար չէ մահը՝  
Գաղափարի զոհ նա է անմահը:

Տ. Պ.



Հ Ր Ա Փ Ե Շ Տ

Մնաս բարեաւ, իմ հայրենիք,  
Իմ մանկութեան օրօրան

Քեզ պաշտել եմ ես վառ սրտով  
Եւ կը պաշտեմ յաւիտեան:

Թէև քաղաքս խլում է ինձ  
Նւիրական քո զրկից,  
Բայց երբէք չի կտրող ջնջել  
Սուրբ անունդ իմ սրտից:

Ուր որ երթամ, ուր որ ապրեմ,  
Թէգուզ օտար երկրի մէջ,  
Սիրել եմ քեզ, և այդ սէրը  
Կը մնայ անխախտ անվերջ:

Մնաս բարեաւ, իմ հայրենիք,  
Ինձ կէանք արև պարգևող.  
Մնաս բարեաւ, վերջին անգամ  
Համբուրում եմ քո սուրբ հող:



ՈՉ ՅՈՅՍ, ԱՅԼ ԳՈՐԾ

Ոչ, եղբայր, յոյսըդ ուրիշին մի դնիր,  
Ժամանակ է, առ զէնքերըդ, մի քնիր.

Ինչու աչքերըդ ուշ բացիր  
Եւ քու եղբարցդ համար լացիր.  
Արտասուքդ դեռ չը չորցած՝  
Դարձեալ սկսեցիր, լացիր:

Մայրըդ ծնաւ քեզի այս աւուր համար,  
Պատմեց պապիկդ քաջութիւնը անհամար.

Ձէ որ դու քաջի զաւակ ես,  
Ինչ որ հայրդ էր, դու խկապէս  
Վեհանձնութեամբդ շատ նման ես,  
Ոխը սրտիցդ ուր կը հանես:

Անբաղդ հայեր, արդեօք դուք ո՞ւմ գանգատիք,  
Դատաստան չը կայ, որ ձեր դատը դատիք.

Ո՛հ, գերութիւն մինչ քրք տանենք,  
Վախը սրտերիցըս վանենք.  
Մենք էլ մեռնենք մեր եղբարց պէս,  
Գէթ թշնամուց վրէժ հանենք:

Տ. Պ.



ԹԻՖԼԻՉԻ ԵՐԳԼ

Ուրախ գլարթ դու թիֆլիս,  
Ի՞նչու այդպէս ես ախուր.  
Վրաստանի մայր քաղաք,  
Մտածում ես դու ի գուր:

Ո՛չ մի ազգ քեզի չօգնեց,  
Բացի հայերիցը զատ.  
Չորս կողմից կրակ տւին  
Հայ քաջերը հարագատ:

Հնչակն ու քաջ դաշնակը  
Չեոք-ձեոքի տւած կուռւմ են.  
Թուրքերի վատ արիւնը  
Լին գառուցին իսկապէս:

Չորս կողմից մեր քաջերը  
Պաշարեցին դիրքերը,  
Հրացանի որոտից  
Մուրուեցան թուրքերը:

Բորչալուի թուրքերը  
Եզիզարովից գրդւած՝  
Թալանի յոյսով եկան,  
Վերագարձան շատ արտում:

Չորս կողմից հրահանգ կուտար  
Քաջ Տուրքախը դեկավար.  
Չեոքին ունէր հրացան,  
Շրջում էր անվախ, անդադար:

Դաշնակցութեան քաջերը,  
Մահը առած աջերը,  
Վրայ տւին Մէյդանին,  
Թուրք չթողին կենդանի:

Ժայռոտ Խարփուխի վերայ  
Կանգնած դաշնակցութեանը,

Պատրաստած հայերը  
Այրեցին մօլլի տունը:

Պաշապանեցին Թիֆլիզը  
Դաշնակցութեան քաջերը.  
Սարսափեցուց թուրքերին  
Մաուզէրի գնդակները:

Թուրքերաց դիակները  
Լցւեցան փողոցները.  
— Ասին, փախչենք Թիֆլիզից,  
Մեզ վերջ կուտան հայերը:

Միջազ ուխտէ առ ասուած,  
Հայը լինի ազատուած,  
Հայ հերոսը միշտ անվախ  
Ազատ գուրս գայ յաղթական:



ՄՇԵՑՈՒ ՄՕՐ ԱՂԱԶԱՆՔԸ

Թիֆի բորան մութ զիշերին  
Կըպտուէ ֆիդային.  
Պատրօնդաշն խաչփազ թալած,  
Չեոքին առած հրացան:

Ա՛խ, ձեզ մատաղ, ջանֆիդայիք  
Չեք մէր ձեզի թող մեռնի.

Մշու սուլթան սուրբ կարագետ  
Չեզի քեօմագ թող եղնի:

Դուք վախցուցիք բիւրդ անօրէն,  
Քշիք մեր սար ու ձորէն,  
Քեաֆը քրդու աչք վախեցաւ  
Չան ֆիդայու գլուխայից:

Ախ, ֆիդայիք, ձեր սագաղէն,  
Չեր խեա սարէք գիւ աղուն.  
Չեր խեա մըռնի, ձեր խեա ապրի.  
Ազգի մատաղ գիւ՛ աղէն:

Թող դէն թողնի խարօր ու մաճ  
Իմ մէկ ու ճար ազիդ լաճ.  
Քիչ մալ թող թուանքի խեա խաղայ,  
Էլ թող չը տայ քրդին խարճ:



ՄԵՆԵՔ ՊԵՏԻ Է ԿՈՒԻՆԵՔ

Մենք պէտք է կուենք և ոչ լաց լինենք,  
Ազգի կարօտսը գէնքով հետ խլենք.  
Այսքան դար լացինք, ո՞վ է լսողը,  
Մեզ ինչ շահ բերեց արցունքի ծովը:

Այլ ևս չլանք և ոչ լաց լինենք,  
Կրակաժ սրտով մեր գործը վարենք.

Անվեհեր քաջին սյս է պստկանում.  
Միշտ ազատ մեռնել կուի լայն դաշտում:

Մոլի և երկչոտ տաճիկը թող լայ,  
Երբ հայ քաջի դէմ կուի դուրս կուգայ,  
Մենք վախեցող չենք մահից, տանջանքից  
Եւ ոչ էլ մահու դաժան գնդակից:

Անէժք այն հօրը, չի մղում որդուն,  
Որ ազգի սիրուն նա թափէ արիւն.  
Ամօթ այն հային և բիւր նախատինք,  
Որ ազգի սիրուն չի գործում բարիք:



ԵՍ ՀԱՆՆՅՈՒ ՍՈՒՐՍ ՊԱՏԵՆԵՐ

Ես հանեցի սուրս պատեանից  
Արտասուքովս օժեցի,  
Տրամաւ անուշ սիրականս,  
Երբ իմ ողբս կարդացի:

Նա երգեցաւ իմ սրովս,  
Չը խնայել թուրքերուն.  
Այս պայմանով աշխոյժ քաջին  
Սուր, հրացան յանձնեցին:

Աստուած սիրէք, հայ աղջիկներ.  
Եկէք, խորհենք միասին.



Այսուհետև ալ չը սիրենք  
Կուից փախչող վախկոտին:

Խիստ զգուշի կերպով նայենք  
Ոսկու սիրուն մեռնողին,  
Համբոյրի տեղ թոյն կամենանք  
Թուրքից վրէժ չառնողին:

Ողևորւած կրկնեց քաջը.  
Ո՛ւմ կը սպասենք, վայ մեզի,  
Նա հեռացաւ մոնչալով,  
Ինչպէս կորին առիւծի:

Կը գայ զարուն. մենք կը սպասենք.  
Նոր կեանք, նոր բաղդ քիւրդի հետ.  
Մեր լեռներից պիտի հոսայ  
Արին՝ ինչպէս հողուն գետ:

Քեզի մեռնեմ Տիրան-Տիրան,  
Քաջ Զէյթունի սիրական.  
Հազար երանի ամեն հայ կնոջ,  
Մարդ կունենայ քեզ նման:

Բարկենիկիս օրօրենք ոտքով,  
Վառօղ մաղենք ձեռքերով.  
Շուն Սուլթանի հետ գործ ունենք,  
Իեռ Զէյթունը չի ապահով:

Տիրանի պէս քաջեր սիրենք,  
Արժանել էր մեր սիրուն.

Որը գիտէ սրով պահել,  
Կին չը յանձնել թուրքերուն:



ՀԵՐԻՔ Է, ՄԱՅՐԻԿ, ԴՈՒ ԻՆՁ ՓԱՅՓԱՅԵՍ

Հերիք է, մայրիկ, դու ինձ փայփայես,  
Հերիք է, մայրիկ, ինձ կը ծըրիզ սեղմես.  
Ես կուզեմ խմել ջրի տեղ արին,  
Ես կուզեմ կուել, ես կուզեմ մեռնել:

Հասակս քան տարուց անց կացաւ,  
Սիրտս վրէժով լիքը լցւեցաւ.  
Ձեմ ուզում տեսնել եղբայրս թշւառ,  
Ես կուզեմ կուել, ես կուզեմ մեռնել:

Լացով չենք կարող փրկել Հայաստան,  
Մայրիկ, ինձ պէտք է ձի, սուր, հրացան,  
Ձեռներս ծալած չեմ կարող նստել,  
Ես կուզեմ կուել, ես կուզեմ մեռնել:

Համիլըն ունի գործեր մեզի հետ,  
Մեզ կոտորում են, մեզ թալանում են.

Հերիք է, մայր լմ, կարոզ եմ լսել,  
ես կուզեմ կուել, ես կուզեմ մեռնել:



ԵԹԷ ԿԱՄԻՔ ՓՐԿԵԼ ԹՇԻԱՌ ՀԱՅՐԵՆԻՔ

Եթէ կամիք փրկել թշառ հայրենիք,  
Նախ պիտի կապենք մեր մէջ մի սիրտ ու հոգի.  
Եթէ կամիք անցեալ փառքին տիրանալ,  
Հարկաւոր չէ կուսակցութեան բաժանել:

Արիք, եղբայրք, միանանք,  
Բաւ համարենք մեր տանջանք.  
Ի սէր ճնշած հայ ազգին,  
Գործ դնենք մեր ճիգ ու ջանք:

Մեր պապերն էլ ներկայիս պէս գործեցին,  
Որ մեր տունը իրանց ձեռքով քանդեցին,  
Ուրիշների սուտ պարզելին շլացած,  
Որ մասնեցին մինչև այժմս գերութեան:

Արիք, երբայրք և այլն:

Մենք Հնչակեան, եղբայրք, դուք Դաշնակցական  
Մենք երկուսս էլ կուլանք վիշտը հայկական.


Արիք վճռենք, հոգով սրտով միանանք,  
Ձեռք ձեռքի տանք, ապա գործենք արշաւանք:

Արիք, եղբայրք և այլն:

Մի նպատակ և մի վսեմ գաղափար  
Մեզ կը սպասեն անհամբեր ու անդադար.  
Ուխտենք, եղբայրք, յայտնենք սրտի միութիւն,  
Միութիւնով պիտի գտնենք փրկութիւն:

Արիք, եղբայրք և այլն:

Զիւանի



Ն Ի Է Ր

Անուշաբոյր, թարմ ծաղիկներ,  
Հայ օրիորդն ինձ ընծայեց,  
Հեռու երկրից անկեղծ նւէր,  
Իր քայրերուն ուղարկեց:

Ասաց. «Տուր այդ փունջն ու ասա.  
Թէ չի անցիլ էլ երկար»

Կուրի դաշտում հարս ու փեսայ  
Կը հանդիպենք մենք իրար:

Կուր կուտանք, կուր արդար,  
Կուր վերջին ճգնական.  
Գօտեպնդւած, հերոսաբար,  
Ու կազատենք Հայաստան»:

Դուրս ցայտեցին արցունքներ տար  
Իմ աչքերից այդ պահուն,  
Լսում էի կարծես անյազ  
Ազգութեան պատգամին:

Եւ երգեցի տանել փունջն այն  
Դէպի կարմիր Հայաստան.  
Ուր վիրաւոր, հայերն համայն,  
Սպասում են փրկութեան:



ՍԵՐՈՒԻ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(1849-1899 թ.)

Բոլոր աշխարհում լսեց քո համբաւ,  
Առիւծ բաշարի, Սերոբ ջան,  
Հայոց աշխարհի:

Հայութեան անուն խիստ բարձրացուցիր,  
Քնացած սրտեր, աղբեր ջան,  
Դուներ բաց արիր:

Քաղցր հայրենիքդ բնաւ չի թողիր,  
Մինչև վերջին շունչ, աղբեր ջան,  
Պատերազմեցիր:

Սուրբ գործ սիրեցիր, խմբեր կազմեցիր,  
Անգութ թուրք և քիւրդ, ախպեր ջան,  
Սարսափեցուցիր:

Բաղէշ վիլայէթը ոտքի կանգնեցուցիր,  
Խեղճ ժողովրդին, աղբեր ջան,  
Հողի, յոյս տւիր:

Գիշեր և ցերեկ Ախլաթ լալիս է,  
Անդադար կը գոչէ, աղբեր ջան,  
(Սերոբ և Սօսէ):

Այժմ ննջում ես սև հողի տակին,  
Մեզի թողնելով, աղբեր ջան,  
Օգնել հայ ազգին:

Սերոբ աղբօր գործին հեռակնք,  
Վրէժ կը գոչէ աղբեր ջան,  
Հայեր, վրէժ առնենք:



ԴԵՐՈՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Դերոյեան Տիգրան, Մքօ և Արշակ  
Դուշ-Կորուսպաշ եղան նահատակ,  
Քաջ երիտասարդ Վասպուրականի,  
Դերոյեան Տիգրան, անուն ցանկալի:

Նա իւր խմբի մէջ հրեշտակի նման,  
Էնօր սև օրն էր քաջ Դերոյեանի,  
Համբիդի զօրքեր շրջապատեցին,  
Երեք հայ զինուոր սայլով բերեցին:

Բոլոր հայերուս սրտերն այրեցին,  
Չար կուտակալի փափագ լցուցին.  
Քաջ երիտասարդներ կուլան ու կողբան  
Եւ միշտ կը կանչեն Դերոյեան Տիգրան:

Էնա մատնիչներ  
Մէջ կուրուբաշա,  
Պիտի որ լինի  
Նման Վասակայ:



ՎԵՐՁԻՆ ԲԱՐԵԻ

Մնաս բարև, իմ հայրենիք,  
Իմ մանկութեան օրօրան,

ԵՐԳ ԱՇՈՏ ԹԱԹՈՒՆԻ



Ելլոգ քեօջքից հրաման տւեց զահիճ Սուլթանը,  
Մնաք բարեաւ, ազնիւ ընկերք, մօտ է կեանքի վախճանը:

Կարմրագոյն պատանքս բանտի պատէն մեխել են,  
Դիւապաշտպան անգութ Փարման գլխիս վերան կախել են:

Թող չլթաղէ ինձ թուբքն, թողնէ հողի երեսին,  
Թող կատարէ անգութ Փարման զազանական հանդիսին:

Ես պաշտել եմ գաղափար, ուխտել եմ գոհել ազգիս.  
Կախազանի — անգութ սարսափ չի փոխիլ իմ սուրբ վճիռս:

Բայց դուք, ազնիւ ընկերներ, ձեր սրտի մէջ գերեզման,  
Թող թաթուլին հանդերձներով, մահս յիշէք մշտական:

Արև լուսնի կարօտով, երկար տարու տանջանքով,  
Էրևած, վառւած իմ կեանքին, վերջ դրեց իմ թշնամին:



ԱՆԹԻԻ ԴԱՐԵՐ ԹԱՓԱՌԵՑԻՆՔ

Անթիւ դարեր թափառեցինք,  
Դարձեալ օտար հող մնացինք,  
Մեր անուշիկ Հայաստանէն  
Հեռու-հեռու բնակեցինք:

Հայ անունը ամենքի մօտ  
Դարձել է լուկ չնչին մի խօսք,  
Հայեր, հայեր, մտածեցէք,  
Ձեր խոր քնից ըսթափւեցէք:

Մասնայ քաջեր, ձեր գլուխներ  
Բարձրացրէք զերեզմանից,  
Տեսէք ձեր երջանիկ ազգը  
Թէ ինչ վիճակի է հասել:



Ա Ն Խ Ղ Ճ Օ Ր Է Ն

Անխղճօրէն մեզ դատում են,  
Սուիք Հայաստանի լեռներ.  
Եղբայրս ինձնից դատում են,  
Սուիք Հայաստանի լեռներ:

Իմ խնդրիս չեն դնում աղանջ,  
Ասում են սուտ է քո պահանջ,  
Այս հողերը ո՛ւմն էր առաջ,  
Սուիք Հայաստանի լեռներ:

Գուցէ յիշէք դուք այն օրը,  
Որ պապըս լծած արօրը՝  
Ցանում էր ձեր դաշտ ու ձորը,  
Սուիք Հայաստանի լեռներ:

Գիտեն իմ պապիս անունը,  
Բայց ստում են ուղղութիւնը,  
Գոնէ նրանց պատմութիւնը  
Սուիք Հայաստանի լեռներ:

Հիմայ ձեզ մնաց ամեն բան,  
Պէտք է դուք գաք վկայութեան,  
Ո՛ւմնով էք կոչւում Հայաստան,  
Սուիք Հայաստանի լեռներ:

Պայծառիս վիրաւորել են,  
Հողերուն հաւասարեր են,  
Մեր կայքը օտարք տիրեր են,  
Սուիք Հայաստանի լեռներ:



Ս Ի Ր Ո Ւ Ն Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ

Բարով ես եկել, ծիծեռնակ սիրուն,  
Ինչ լուր ես բերել պանդուխտ հայերուն,  
Գիտես որ մենք միշտ աչքներին յառած.  
Քեզ ենք սպասում ամեն մի գարուն:

Գլուխս ծռած լսեղճ ու հեղ,  
Աղաչում եմ ահա քեզ,

Եկել ես հայրենիքից,  
 Ինչ աւետիս բերիր մեզ. ...  
 Եկել ես հիւր, ասա մէկ լուր,  
 Մի սպասէ դուր,  
 Լեզուովդ սուր աւետիս տուր,  
 Մեզ ուրախացուր:

Ինչ լուր ես բերել, սիրուն ծիծեռնակ,  
 Դու հայրենիքից աստ եկած թռչնակ,  
 Ասա ինչպէս է իմ հայրենի տունը,  
 Խօսիր ինձ հետ ազատ, համարձակ:

Ասա, մի բան իմանամ,  
 Որ քեզանից գոհանամ,  
 Ուրախացուր սիրտըս իմ,  
 Տարակուսւած չը մնամ.  
 Դու սլացար սարէ ի սար,  
 Մինչ այստեղ հասար,  
 Դու ինձ համար բարով եկար,  
 Ասա մի խապար:

Ս. Թ.



ՈՐՍՈՐԴԻ ԽՄԲԻ ՅԻՇՍՏԱԿԻՆ

Ղարսից դուրս եկան, թաղբուր ժողկեցան,  
 Նոյն գիւղի մէջը քաջերը կարգով շարուեցան.

Գիշերւայ ժամի զանգերը ղօղանջեցան,  
 Քաջերը սուրբ հաղորդութիւն ստացան:  
 Քաջ թումանեանը խնդրեց թշնամիներին,  
 Չը լսեցին հերոսին, քաջերին զոհեցին:

Քաջերը կանգնեցին սուրբ սեղանի առաջ,  
 Երգեցին միասին սուրբ դրօշակ բռնած,  
 Քաջ խմբապետ թումանեանը առաջն էր կանգնած,  
 Չայն տւեց. եղբայրք, գնանք դէպ առաջ-առաջ:  
 Քաջ թումանեանը և այլն:

Շտապով գիշերն գիւղից դուրս եկան,  
 Արշալոյսը բացւեց. Բիւրիկ աղբիւրը հասան.  
 Անպիտան թշնամիները շուտով տեսան,  
 Երկու կողմերից օգնութեան հասան:  
 Քաջ թումանեանը և այլն:

Ղալայ Բողազից անշուշտ նկատեցին,  
 Թշնամիները քաջերին շրջապատեցին.  
 Օգնող չեղաւ, անօգնական մնացին,  
 Յոյսները կտրեցին, այնպէս զոհեցան:  
 Քաջ թումանեանը և այլն:

Քաջ Որսորդ Գէորգն չկարեց յոյսը,  
 Սուրբ դրօշ պարզեց տասնապետ Պետրոսը.  
 Գնդակով թաղում էին թշնամեաց յոյսը,  
 Անվեհեր կուում էր Քեօսայ հերոսը:  
 Քաջ թումանեանը և այլն:

Ծերունի քահանան բռնել էր խաչը,  
 Թումանեանից խնդրեց այսպէս Գուրգէն քաջը,

Կրակ բանանք դէպի թշնամու շարքը,  
Ձի կարելի, ասաց խորամխա քաջը:  
Քաջ թումանեանը և այլն:

Թումանեանը մտածում էր մեր վիճակը,  
Ասաց մի բանաք թշնամու վրայ կրակ,  
Սուկալի կը լինի կովկասի վիճակ,  
Թող մեր եղբայրները քննեն մեր վիճակ:  
Քաջ թումանեանը և այլն:

Թումանեանը ասաց մենք լինինք նահատակ,  
Կովկասը թող լինի ազատ համարձակ,  
Մնանք մինչևի յաւիտեան յիշատակ,  
Մի՛թէ չկամի հայը, որ լայ մեր տանջանք:  
Քաջ թումանեանը և այլն:

Ելէք, վրէժ գոչենք, անվախ եղբայրներ,  
Այն լեռը զոհւեցան առիւծի կորիւններ,  
Նոցա աղերսանքից լեռը ողբում էր,  
Ամօթ է, հայեր, թէ մոռնանք այն դիակներ:  
Քաջ թումանեանը և այլն:

Դէհ, հայեր, վերցնենք սուր և հրացան,  
Ուռն գոռանք թշնամուց բարձրաձայն,  
Թշնամին թող գողայ, երբ լսէ ուռան,  
Քիւրդեր ջարդելով մանենք Հայաստան:  
Քաջ թումանեանը և այլն:



### ԽԱՆԻ ԵՒ ՄՈՒՐՄԵՒԻ ԵՐԳԸ

(Ձիւի Սուլթանի եղանակով)

Հասակս քսան տարեկան,  
Հրացան տէք, բարեկամ,  
Մենք չենք ուզում ստրկութիւն,  
Մեզ խրախուսող մայրեր կան.  
Աւաղ, աւաղ, աւաղ:

Ինչո՞ւ ենք կեցեր խաղաղ,  
Խմբեր ունենք Պարսկաստան,  
Շուտով կանցնենք Տաճկաստան,  
Ունիս բազում հերոսներ,  
Կուգան քեզ Մայր-Հայաստան:

Հրացանը ուսիս կախեմ,  
Ես իմ կեանքս պիտ թանգ ծախեմ,  
Կեցցեն կտրիչ հայ հերոսներ,  
Թշնամու դէմ միշտ անվախ են.  
Աւաղ և այլն:

Սուլթան, գլխիդ դու միշտ վայ բեր,  
Քանի որ կան Խան, Մուրադներ,  
Կեցցեն նրանց թիկնապահներ,  
Մեր հայրենիքը չէ անտէր:  
Աւաղ և այլն:

Միջագ, երգովդ վրազէ,  
Որտեղ ճշմարիտ, հոն վազէ,

Թէկուզ հանեն քեզ կախադան,  
Ուղղութիւնը դու միշտ պարզէ:  
Աւաղ և այլն:



ՏՈՒՐԲԱՆԻ ԵՐԳԸ

Ուրեմն մնաք բարով, ազնիւ ընկերներ,  
Մեռնեմ ձեր հոգուն, երջանիկ քաջեր,  
Քո հողին մեռնեմ Տալօրիկ ազատ,  
Կեցցես դու յաւէտ, Անդրանիկ քո զարդ:

Քաջի համբոյրով տուաւ հրաժեշտ  
Անվեհեր Տուրբախ, ընկեր հարազատ,  
Բոպէ անցաւ, սլացաւ ուժգին,  
Վեհ Դաշնակցութեան սուրբ անւան արժան:

Երկինքը պատել էր գունդ-գունդ սև ամպեր,  
Արեգակ չը կար, մութ ու խաւար էր,  
Դժւար էր գատուել քաջ ընկերներէց,  
Հայ ազգի սիրած ու պաշտած տեղից:

Հեռից տեսնող էլ ու աշիրաթ  
Երնէկ կուտային քեաֆուր Տուրբախին.  
Ան ու սարսափով լցւած թուրք միլլաթ  
Կապուտ աչերից արցունք կը ցայտէր:

Նժոյգ ձի նստած ահուկի դէմքով,  
Երկինք ձայն տւեց վեհ քաջի արարք,  
Խնուսայ փաշէն լցւած էր դողով,  
Թռչում էր ցոլակ, ցայտում էր կրակ:

Անհամբեր սրտով Դաշնակի ճիւղեր  
Կարիչ Տուրբախի գայուն կը սպասեն.  
Փառք ու պարծանք են մեզ այսպէս քաջեր,  
Ուրախ լուր բերաւ ազատ Սասունէն:  
Միջագ



ԵՐԳ ԿԱՐՆԵՑԻ ԳԱՐԵԳԻՆԻ

Հայաստանի փառք ու պարծանք Գարեգինը Կարնեցի,  
Թիկունքը լայն, թևերը հաստ, ինքը կորիւն առիւծի:  
Հայաստանի վերքէն հմուտ՝ վերաբոյժ էր խելացի,  
Եղբայրք, լացէք ու ողբացէք այն քաջ հերոսի անձի:

Խմբով ելան Դալաբուլաղ, թշնամու դէմ կուեցին,  
Մի քաջ հերոս վիրաւորւած՝ Գարեգինին յանձնեցին:

Նա ուզում էր վիրաւորին հեռացնել արեան դաշտից.  
Չորս կողմիցը յարձակեցին և քաջին պաշարեցին:

Անիրաւ, վատ թշնամի, դու քաջ Ֆիդայուն լաւ ճանաչէ,  
Ուրիշից օգնութիւն փնտռող եւրոպայից ամաչէ:

Որքան կուգես մեզ հետ կուէ ամբողջ այլ զօրքերովը,  
Վստահ եղիր, որ քեզ յաղթող պիտի լինի քաջ Ֆիդան:

Նա ուխտել էր, պէտք է զոհէր իրա կեանքը Դրօշակին,  
Եւ ճշտապէս նա նւիրեց իւր կեանքը թանկագին:

Կուրծքին չորս գնդակ ստացաւ, վերք ունեցաւ ահագին.  
Կրկին հրացանն էր պարպում այն քաջ հերոս Գարեգին:

Միջագին եմ, պէտք է յիշեմ ձեզ նման միշտ քաջերին.  
Որ թափեցիք ձեր արիւնը Հայաստանի հողերին:

Ամբողջ հայութիւնը կանգնած է ձեր վրէժը լուծելու,  
Քնէք, Հայաստանի քաջեր, հանգիստ ձեր ոսկորներուն:



Ս Ա Ս Ո Ի Ն Յ Ի Ք

Հայաստանի քաջ Անդրանիկ գաւակներ,  
Ողջ հայերուն փառք ու պարծանք սասունցիք.  
Ձեր ոտքերուն մատաղ, սուրբ նահատակներ,  
Մեզ յոյս ու ապաւէն, մեզ կեանք սասունցիք,

Դէմ դրիք թշնամուն անվախ, քաջաբար,  
Չորս ամիս շարունակ կուելով երկար,

Չոհեցիք ձեր կեանքը հայութեան համար,  
Տւիք հայրենիքին փրկանք, սասունցիք:

Ամեն մէկդ մէկ-մէկ խուժեցի Յովնան,  
Առիւծի կորիւններ հայրենեաց պաշտպան,  
Կամ կը մեռնէք կամ կը մեռցնէք նրան,  
Ով որ ձեզ տայ վիրաւորանք, սասունցիք:

Քաջ Վարդանը նահատակեալ բանակով  
Ձեզ է դիմաւորում երկնից պսակով,  
Լուսաւորիչ, սուրբ Աննդով-Սահակով,  
Ձեզ տալիս է մեծ գովասանք, սասունցիք:  
Չիւանի



ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐՇԸ

Մեր զործերը, խորհուրդները հայրենիքի սէրն է,  
Մեր կայքերը, մեր կեանքերը մեր ազգին նւէրն է,  
Ժառանգը պապի և նորա կալւածների տէրն է.  
Այսքան տարիներ միշտ նեղութիւն տանողը մենք ենք.  
Էլ չենք դիմանար, թշնամու դէմ կանգնողը մենք ենք:

Մեր նախնիքը անկախ հողի մէջ կապրէին ազատ,  
Ով որ լսում էր հայ անունը, դողում էր հաստատ,  
Մարդիկը նրանք չէն, արիւնը նոյնն է հարազատ.  
Այսքան տարիներ և այլն:

Արիւն ու սուր է և կրակ է մեր Դրօշակը,  
 Մեռնելու համար վախ չունի մեր քաջ նահատակը,  
 Առիւծ կը լինի խեղճ հայր, երբ առնէ նիզակը.  
 Այսքան տարիներ և այլն:

Մենք չենք վախենայ թնդանօթից, եթէ ունինք ջանք,  
 Մեռնենք, կը գնանք արքայութիւն, այնտեղ է լաւ կեանք.  
 Ինչքան վախեցանք մեռնելուցը, կենդանի մեռանք:  
 Այսքան տարիներ և այլն:



Ա Ն Դ Ր Ա Ն Ի Կ Ի Ն

Դիշեր-ցերեկ աշխատում ես անգաղար,  
 Քո խեղճ ազգի քաջ պահապան Անդրանիկ,  
 Կեանքդ ընծայել ես ազգիդ համար,  
 Չեն մոռանայ քեզ յաւիտեան, Անդրանիկ:

Քո անունը օր-ըստ-օրէ բարձրացաւ,  
 Լսեց ձայնը, չար Սուլթանը սառսեցաւ,  
 Ձէնքիդ շառաչիւնը Եւրոպան իմացաւ,  
 Քեզի գոչեց քաջն Վարդան—Անդրանիկ:

Քաջեր ունիս դու քեզ մօտը, քաջ հսկայ,  
 Առիւծի պէս միշտ կուռում ես անխնայ,  
 Քո սրտի մէջ ահ ու երկիւղ հէջ չկայ,  
 Յոյց կուտաս գործ դու քաջութեան—Անդրանիկ:

Երկու հազար ոսկով մարդիկ ճարեցին,  
 Քո դէմ հազար մի թակարդ լարեցին,  
 Ինն հազար թիւրդեր քեզ պաշարեցին,  
 Որ հանեն քեզ կախաղան—Անդրանիկ:

Քիւրդխտան—Տաճկաստան էր որոտում,  
 Բարձրացուցիր դրօշակ Սասնոյ լեռներում.  
 Սիրաթա ինդրում է, ունենաս բազում  
 Ազնիւ քաջեր, դու ինքնանշան—Անդրանիկ:



ՄԵՆՔ ԱՆԿԵՂԾ ԶԻՆԻՈՐ ԵՆՔ

Մենք աեկեղծ զինուոր ենք, առանցի վիճակ,  
 Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ,  
 Պարսկաստանի խորքից եկել խիստ նամակ,  
 Գնում ենք բարով, կուշանանք տարով,  
 Արիւն, սուր ու հուր, պատերազմի դաշտ կսպասեն մեզի:

Դուշմանը մեզ տուաւ «Չան Ֆիդայ» անուն,  
 Այդ անւան համաձայն, տեսաւ զօրութիւն,  
 Մենք չենք ուզեր ազատ կամաւ բռնութիւն,  
 Ուխտել ենք կուել, այդ սիրով մեռնել,  
 Համոզւած ենք որ այդպիսով միայն կայ մեզ փրկութիւն:

Ստամբօլը պիտի լինի արեան ծով,  
 Ամեն կողմից կռիւ կսկսի շուտով,  
 Կոտորենք Բաշկալայ, անցնենք հեշտ կերպով,  
 Աջից Վարդանը, ձախից Իշխանը,  
 Գրաւենք Աղբակ, տարածենք սարսափ,  
 Փառք Դաշնակցութեան:

Բաշկալայ գաւառում, այն պատերազմին.  
 Աւելի մեծ սարսափ տիրեց Սուլթանին,  
 Քաջ Ձէյթունը յաղթեց վատ, չար գազանին,  
 Կեցցէ Ձէյթունը խրոխտ Սասունը կուսակցութիւնը,  
 Բաղդաւոր օրեր, պարծանք հայերուն:



**ՔԱՋ ԱՆԻՐԱՆԻԿԻՆ**

Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին  
 Ազատութեան Դրօշակ.  
 Կեցցէ հայրենիք գոչելով,  
 Բարձրացրին աղաղակ:

Թնդաց, որոտաց ձայներից  
 Ողջ աշխարհը հայկական,  
 Խումբ-խումբ կարգած հայ զաւակներ  
 Հասնում էին օգնութեան:

Գուրգէն, Վահան, Հրայր (Դժոխք)  
 Քաջ Անդրանիկը ղեկավար,  
 Տալուրիկի լեռներում  
 Շրջում էիր անդադար:

Սարսափեցան քիւրդ ցեղերը,  
 Մինչ պալատը Սուլթանին  
 Հրամայեց շուտ կործանել  
 Դիրքերը հայդուկներին:

Ահա անգութ քիւրդ ու տաճիկ,  
 Սարսափելի տեսարան.  
 Ժամանակ է վրէժ լուծել,  
 Գոչեց ձայնը հայկական:

Կրակ տեղաց հայ քաջերի  
 Բնակավայր գիրքերից.  
 Դայլայլեցան քիւրդ խուժաններ  
 Ահուելի գնդակներից:



**ԴԱՇՆԱԿՅՈՒԿԱՆՆԵՐԻ ՄԱՐՇԸ**

Հայ երիտասարդներ, շուտով շտապեցէք,  
 Բոպէ շատ թանգ է, առաջ քայլեցէք,  
 Օտարք հայերին կասեն վախկոտ են,  
 Քաջութեան դրօշակը պարզեցէք:

Միթէ մենք Վարդանի ցեղից չենք.  
 Մէկս հազարի դէմը կը կուենք,  
 Մի ժամանակ մենք շղթայւած էինք,  
 Հիմա ազատ ենք և ունինք շատ զէնք:

Օղնութեան հասան քաջ Խան ու Մուրադ,  
 Ճիշտ հայու զաւակ, ծնունդ անարատ,  
 Մոկացի Գրիգոր և երկու Արշակ  
 Գնդակ թափում են կարկուտից արագ:

Քաջ Թումանեանը, Որտորդ Գէորգը  
 կազմել պատրաստել են իրանց խմբերը,  
 Դաշնակցութեան դրօշակի ահից  
 Սարսափահար փախչում էին փառ թուրքերը:



ՍԵՐԵՄՁԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վերբերով լի ջան ֆիդայ եմ,  
 Թափառական տուն չունեմ,  
 Եարիս փոխարէն զէնքս եմ գրկել,  
 Մի տեղ հանգիստ քուն չունեմ:

Արիւնտ երկիր, սուգ ու շիւան,  
 Ինձ դուրս կանչեց փակ կեանքից.  
 Տանջած հայրենիքի սէրը  
 Չը վախեցուց ինձ վտանգից:

Ես կոչեցայ ջան ֆիդայի,  
 Դարձայ գինւոր գողափարի.  
 Թող իմ թափած արեան շիթեր  
 Օրինակ դառնայ հայ գինւորի:

Մակերոնեայ իմ եղբայրս  
 Իմ խաչովս պսակեց,  
 Եղբայրական սիրուն զէնքով  
 Գազան Սուլթան խորաակեց:

Ահա հանգիստ հող կմտնեմ,  
 Յոյսս դուք էք ընկերներ,  
 Շարունակէք մեր սուրբ գործը,  
 Դաշնակցութեան վեհ քաջեր:

Կախաղանից երբ որ քամին  
 Ինձ տարբերեց ձօձալէն,  
 Յիշէք Պետրոս Սերեմշեանին՝  
 Թուրքից վրէժ գոռալէն:




ԹՈՂ ԵՐԳԷ ԲԼԲՈՒԼ

Թող երգէ բլբուլ Մշու դաշտերում,  
 Թող վարդեր բացեն Սասնոյ լեռներում,  
 Թող մեր թշնամիք սարսեն, սարսափեն,  
 Գազան քիւրդերն ձաքեն, արաքեն:

Մշու դաշտերը ծաղկունքով բացած,  
 Հայու սերունդը կը պահէ Աստուած,  
 Ինչքան որ կուգեն թշնամիք թող գան,  
 Սասնոյ լեռներէն ի՞նչ պիտի ստանան:

Ինչո՞ւ չը ծաղկէ ծաղիկն սնխնայ,  
Այդ թշնամուցը ո՞վ կը վախենայ,  
Թող հայ աղջիկը երգէ վառվռուն,  
Սուր զէնքը ձեռքին շարդէ քիւրդերուն...

Ս. Թ.



ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Ե՛լ, ֆիդայի, առ զէնքերդ,  
Գնա՛ դէպի Իսլամին,  
Չօրքեր ցրէ, բանակ կոարէ,  
Ճաքեցուր չար Սուլթանին:

Ցոյց տուր, որ Սերոբ փաշայի  
Յաջորդն ես դու, յոյս հայի.  
Կռիւ, սարսափ, ահ ու վրէժ,  
Մահը դարձիր Թիւրքիայի:

Անյաղթ քաջեր հետը առած,  
Ամպրոպ կուգայ օգնութեան.  
Ձուխտակ զուճրիներն էլ հեռներին՝  
Շէֆ Անդրանիկ քեզ զուրբան:

Երկու Արշակներ միասին,  
Քաջ տղամարդ Մաշադին,

Ուխտ ու պայմաններով ձեռքին,  
Մէկն էլ հօր Մուրադին:

Ել սարերը, արծւի մօտ,  
Տաք երեսիւ հով դիպցուր,  
Նոր սիստեմի հետ դինամիդ,  
Գնդան պետին քով դիպցուր:

Գործեր գործիր, որ ամաչէ  
Կռապաշտ հայ հարուստը,  
Անամօթն գուցէ զգայ  
Թշուառ հայի կորուստը:

Գործեր գործիր հեռու տեղից,  
Ձարմանալու լուր առնեն,  
Ընթերցողներ բացականչեն,  
— Շէֆ Անդրանիկ, քեզ մեռնեմ:

Սիփան



ՄՈՒՇԵՂԻ ԵՐԳԸ

Խնուսից գալող հայ զինւորները քաջ,  
Արեան դաշտից եկած և պարտաճանաչ,  
Հին-հին վրէժներ առնել էր նոցա պահանջ,  
Քաջի պէս վազեցին թշնամու առաջ:

Մօտ թևով տասն ու չորս և իրանք անվախ,  
Ղեկավար՝ Տիգրանն էր, գործում էր անկախ,

Անմահ Մուշեղ հերոս, Շապուհ և Մելիք,  
Համագասպ, Մարտիրոս կանգնած էին դիրք:

Թաթօն ընարեց Մօսոյ, Շապուհ և Մխիկ,  
Անւանւեցան սրանք խմբեր թոռացիկ,  
Խարփուխ թաղի դիրքերումը միշտ անքուն,  
Այրեցին, ջարդեցին անգութ Մօլի տուն:

Վրաստանի շքեղ թիֆլիս քաղաքը  
Չէր ճանաչում կանխաւ իրա որդոցը,  
Երբ նրանք Մուղնու թաղում կանգնեցան,  
Այն ժամանակ հայերն ուրախացան:

Թէպէտ քաջ Մուշեղին նրանք գոհ տւին,  
Անգութ թշնամեացը շուտով յաղթեցին.  
Կը լինի ազատութեան գրաւական,  
Նրանք պատիւ բերին հայ Դաշակցութեան:



Թ Ո Ղ

Թող ինչպէս ընկել եմ, այնպէս վեր կենամ,  
Դիմակաւոր ընկեր, խրատդ պէտք չէ:  
Թող իմ հօրս, պապուս ճամբովը գնամ,  
Հաւատ ունիմ, քո նոր հաւատդ պէտք չէ:

Այն գոյնով կը մեռնիմ, ինչով որ ծնայ,  
Չեոք մի տար իմ վերքիս, թող այնպէս մնայ:

Մի կտրատիր ծառիս ճիւղերը, գնահ,  
Վնասատու կռախ մկրատդ պէտք չէ:

Միայն դու Զիւանուն եղբայր անւանէ,  
Միւս ծրագիրներդ մտքիցդ հանէ,  
Իմ փրկած տունս ինձ բաւական է,  
Քեզի լինի, բարեկամ, պալատդ պէտք չէ:



ԹՈՂ ԿՈՐՉԵՆ ՏԱՃԻԿՆԵՐԸ

Թող կորչեն տաճիկները  
Հայաստանի սուրբ հողէն,  
Իսլամական անարգ լուծը  
Թող ջնջւի Հայաստանէն:

Բաւական է, որքան նոքա  
Հայի արիւնը ծծեցին,  
Հայի ջանքով, աշխատանքով  
Պետութիւն պաշտպանեցին:

Հայի հացը, հայի ջուրը  
Բաւական է՝ տաճիկն ուտէ,  
Եւ գարշելի պիղծ բերանով  
Հայութիւնը անարգէ:

Աչքերի տեղ աչքեր հանենք,  
Ատամի տեղ ատամներ,  
Մեր մէկ հաւը զողացողին  
Ամբողջ տունը թալանենք:



Խ Ա Ն Ի Ե Ր Գ Ը

Լուսին չը կար, մութ գիշեր էր,  
Մի խումբ կերթար արագ-արագ,  
Տեսանք, որ քաջ խանի խումբն էր,  
Զինւած էին բոլոր նրանք:

Կեանքերը ազգին նւիրած,  
Կտրիճ խանն առաջ ընկած,  
Գնում էին Տաճկաց սահման,  
Թռչում էին ինչպէս կրակ:

Հրացանները ուտերին՝  
Դրօշակը պարզել էին.  
Գնում էին ուրախ, գլարթ,  
Ազատութիւն երգում էին:

Մութ անտառից անցնում էին,  
Ամեն մէկը առիւծ էին.

Նժոյգ ձիաներ նստած,  
Մերկ սրերը քաշել էին:

Երբ քաջ խանը ելաւ Բասեն,  
Թնդանօթներ արձակեցին.  
Հայ քաջերի մօտիններից  
Գնդակները գողգողացին:

Երբ քաջ խանը հրահանգ կուտար.  
— Արիք, առիւծներս իմ քաջ.  
Մտան թշնամու խիտ շարքեր,  
Կոտորեցին ձախ ու աջ:

Երբ քաջ խանը ուռայ գոռաց,  
Թշնամիքը մոլորեցան,  
Հաղարաւոր տաճիկների  
Գլուխները ջախջախեցան:

Զերմ եռանդով կուռւմ էին,  
Սրտերումը կար շատ պահանջ,  
Փախչում էին տաճկաց զօրքեր,  
Զէին կարող կանգնել առաջ:

Կեցցէ խանը իւր խմբովը,  
Սարսափ թողեց Բասենումը,  
Երեք օր ու գիշեր կուեց,  
Աչքերիցը կտրեց քունը:

Հայաստանի հողի վերայ  
Քաջը թափեց իւր արիւնը,

Միջագ, յիշէ չը մոռանաս  
Կտրիչ Խանի քաջ անունը:



Ձ Ի Ն Ի Ո Ր Ի Ն

Հայաստանից եկած զինուոր,  
Պատմէ ինձի հայրենիքից,  
Անդրանիկի զինուորները  
Վրէժ լուծում են քիւրդերից:

— Ուրախ եղիր, դու հայ տղայ,  
Ունիս պաշտպան — քաջ Անդրանիկ,  
Մուրադի պէս հոտոտ ծաղիկ,  
Էլ ի՞նչ է ուզում հայրենիք:

Վիթխարի պէս կտրիչ Սեպուհ,  
Պողպատի պէս բազուկները,  
Կայծակի պէս կտրիճները,  
Էլ ի՞նչ են ուզում հայերը:

Գէորգ Չաւուշն ու Հրայրը,  
Հազարաց զօրքի գէմ կանգնած,

Թուրքաց զօրքին փախցուցին Վան,  
Էլ ի՞նչ է ուզում Եւրոպան:

Երկու առիւծ՝ Պօղոս, Տիգրան,  
Չեոքերը բռնած հրացան՝  
Թշնամուն արին ցիր ու ցան,  
Արդեօք պատիւ չէ՞ Դաշնակցութեան:

Մոկացին ու Աւետիսը  
Սարսափ ձգեն Թիւրքեստանը,  
Կոտորեցին ողջ բանակը,  
Ազատւած չէ՞ Հայաստանը:

Ֆէրհատ, Արշակն ու Մէշէղին  
Կուռում էին միշտ անխախտ,  
Թշնամուն զարկին մեծ փլաս,  
Ուրախ չէ՞ս դու, երգիչ Միջագ:



Ս Ս Ս Ո Ւ Ն Ա Յ Ս Ա Ր

Առանց վախի, առանց անի,  
Քաջերի բուն Սամնայ սար,  
Քեզնից հրդեհ կը պատահի,  
Կրակի բուն, Սամնայ սար:

Եկաւ ողջ Արաբըստանը,  
Որ նւաճէ Հայաստանը,

Քեզ չըյաղթեց Չինգիզ խանը,  
Կեցար կանգուն, Սամնայ սար:

Հայաստանը երբ կանաչեց,  
Թշնամին տեսաւ, ամաչեց.  
Եւրոպան քեզ լաւ ճանաչեց,  
Առար անուն, Սամնայ սար:

Քիւրդի, թուրքի դահիճները,  
Թունաւորող կտրիճները.  
Սարի միջի կտրիճները,  
Դու և Զէյթուն, Սամնայ սար:

Վերցաւ խաւար գիշերը,  
Փայլեց երկնային լապտերը,  
Կսպասեն տաճկահայերը  
Քեզնից գարուն, Սամնայ սար:

Զիւանի



ԵՐԳ ԶԻՆԻՈՐԻ


Սուրբ Դաշնակցութեան անկեղծ զինուորներ,  
Բաւ է համբերէք, անձնագոհ բաշեր,  
Հասել է ժամը չար Սուլթանի անկմանը,  
Միացած ուժով դուրս գանք դէպի դաշտ:

Բռնապետութեան գահը տապալենք,  
Մեզ ճնշողներին մաս-մաս կոտորենք,

Գոչենք մենք կեցցէ ազատ երկրում,  
Փշրենք շղթաներ բռնութեան դրկում:

Մահ, ազատութիւն ուխտենք, եղբայրներ,  
Որտեղ կայ ճնշում, թոչենք մենք այնտեղ.  
Իրօշակ պարզենք սուրբ Դաշնակցութեան,  
Մինչև որ փրկենք թշուաւ Հայաստան:

Ամեն տեղ ճնշում, լաց ու աղաղակ,  
Դարերով ճնշած ստրուկ հայ ազգը,  
Սրբութեամբ պահենք Հայկայ անունը,  
Թափենք մեր վերջին կաթիլ արիւնը:



ՆԱԻՐՈՒԶԻ ԵՐԳԸ

Դաշնակցութեան քաջ խմբերը Պերնա գիւղում միացան,  
Խմբապետն էր քաջ Նաւրուզը, բաժանեց քաջաց հրացան.  
Երգեցին դրօշակին բահանայով միասին,  
Շարժեցաւ խումբը յառաջ, երկու սահմանից անցաւ:

Արշալոյսը նոր բացուում էր, տեսան թշնամեաց զօրքեր,  
Քաջ Նաւրուզը հրահանգ տւեց—յառաջ եկէք տասնեակներ,

Ամեն մէկս հազարի դէմ պիտի կուենք, եղբայրներ,  
Կարնեցի քաջ Դերենիկն ասաւ.— բռնէ լաւ դիրքեր:

Դերենիկն ու Արտաշէսը, ինչպէս կորին եղբայրներ,  
Բասէն դաշտու մէջը լցրին թշնամու շատ դիակներ,  
Քաջ Սերսբը և իւր որդիք, ինչպէս ազնիւ էակներ,  
Նահատական քաջերն այնտեղ, մեղի մնաց վրէժներ:

Հայաստանի հողի վերայ դրօշակ ծածանւեցաւ,  
Նրեսուն ժամ ճակատամարտ հազարաց դէմ կուեցաւ,  
Հայ քաջերի գնդակներից շատ տաճիկ գորուեցաւ,  
Ես, Միջագ, կրպարծենամ ունիմ փամփուշտ հրացան:



ՉՄԵՌՆ ԱՆՅ ԿԱՅԱԻ

Չմենն անց կացաւ, գարուն էր արդէն,  
Ծաղկունք բացւեցան, բլբուլք թող երգեն,  
Հայոց քաջերի ժամ է հարսանեաց,  
Ահեղ պատերազմի ձայնը որոտաց:

Ձէնքի շաշիւնէն թնդում է երկիր,  
Հերոս, հայրենեաց օգնութեան հասիր:

Ծաղկեցան այգիք, ծաղկեցան դաշտեր,  
Վրէժ գոչէցէք, անվախ քաջ հայեր,

Փայուեր թող դողան, քարեր պատուեն,  
Իսկ դուք, քիւրդ ու տաճիկ, սւր պէտք է փախչէք:

Ձէնքի շաշիւնէն և այլն:

Քանի դարերից ծանր շղթաներ  
Այժմ կը փշրեն մեր հայ հերոսներ,  
Իսկ դուք, դաւաճան, սւր պէտք է փախչէք,  
Որ հայ հերոսի սրից ազատուէք:

Ձէնքի շաշիւնէն և այլն:



ԱՆՏԷՐ ԿՈՒԼԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ

Սև ամպերը Հայոց երկինք պատեցին,  
Պայծառ արևն ու լուսին խաւարեցին,  
Աստղերն ընկան երկնքից երկիր, չքացան,  
Նստէր անտէր, արիւն կուլայ Հայաստան:

Կայծակ խփեց, այրեց սրբավայրերը,  
Հայապատկան գեղատեսիլ դաշտերը:  
Արծաթափայլ գետերն ամենն սևացան,  
Նստէր անտէր, կուլայ Հայաստան:

Ովկիանոսն ալ ալեկոծւած կատաղեց,  
Կլանում է խղճուկ հային, սւր փախչի,  
Ո՛չ յոյս մնաց, ո՛չ ապաստան, ո՛չ պաշտպան,  
Նստէր անտէր, արիւն կուլայ Հայաստան:

էլ մենք ի՞նչու արդեօք կասենք թէ հայ ենք,  
Որ ամեն ժամ թշնամեաց դէմ չկուենք,  
Պէտք է կուել կամ չքանայ հայութիւն,  
Կամ ազատել գերութիւնից Հայաստան:



ՆՊԱՏԱԿԻՍ ԳԷԹ ՄԻ ՄԱՍՐ ԿԱՏԱՐԻԷՐ

Նպատակիս գէթ մի մասը կատարւէր,  
Եարալի բլբուլ եմ,  
Հայրենիքիս ազատ տեսնեմ ու մեռնեմ.  
Եար արի, տուն արի, շուտ արի բլբուլ,  
Սարերի գիւլն եմ:

Ա՛խ, իմ դարդս շատացել է, չեմ կարող,  
Եարալի բլբուլ եմ,  
Դարդի ձեռքից մը շուրն ընկնեմ ազատեմ,  
Տուն արի, շուտ արի, եարալի բլբուլ եմ,  
Սարերի գիւլն եմ:

Ա՛խ, անբախտ հայդուկիս, Տէր իմ, դու խղճայ,  
Եարալի բլբուլ եմ,  
Մի թողնիր՝ թուրքի գնդակով գուր գնամ կորչեմ.  
Եար արի, տուն արի, շուտ արի բլբուլ եմ,  
Սարերի գիւլն եմ:



ՄԻ ԳԵՂԵՅԻԿ ՊԱՐՁ ԳԻՇԵՐ ԷՐ

Մի գեղեցիկ պարզ գիշեր էր,  
Երկինքը լի աստղերով,  
Եւ լուսինը մեզմ փայլում էր  
Կաթնանրման իւր լուսով: (կրկնել)

Նա նայում էր լո՛իկ, մնջիկ,  
Իբրև մի կոյս գէպի վան,  
Նորա աչքին երևում էր  
Բիւր ցաւալի տեսարան: (կրկնել)

Նա տեսնում էր անթիւ քրդեր,  
Առած սուր, թուր, հրացան,  
Կոտորում են, կողոպտում են,  
Աւերում են Հայաստան: (կրկնել)

Եւ կարծես թէ երկնքիցը  
Ասում էր այդ լուռ վկան.  
Վրայ հասիր, հայ ազգասէր,  
Ձեռքից գնաց Հայաստան: (կրկ.)



ԴՈՒ ԶՈՎ ԽՆԴՐԵՍ...

Դու գո՞վ խնդրես, մայր իմ անուշ,  
Ե՛կ, մի՛ դողար, մօտեցիր հոս,

Անլաց աչօք դիտէ զորդիդ  
Ու իւր վէրքերն արիւնահոս:

Թուրքաց մայրեր թող լան, ու դուն՝  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Ինչպէս երբեմն օրրանիս մէջ,  
Կակուղ ձեռքով փայփայելով,  
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր,  
Իբրև հրեշտակ նւագելով:

Զիս հանգչեցուր ի հող, ու դուն՝  
Ուրախ լուրեր...

«Նորեկ որդւոյս կենացն արև  
Զեզի համար փայլի, հայեր»,  
Այսպէս յայնժամ դու կերգէիր,  
Օրօրոցիս նստեալ քովեր:

Անոնց համար շիջաւ, ու դուն՝  
Ուրախ լուրեր...

Վերջին համբոյր մը տամ քեզ, մայրիկ,  
Հատուցանես զայն սիրելւոյս,  
Վերջին անգամ գրկեմ մեր հող,  
Ուր արդ կիջնիմ ի ծոցն անլոյս:

Խաչ մը տնկէ վրաս, ու դուն՝  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:



Ե Ր Ա Զ

Ես լսեցի մի անոյշ ձայն, —  
Իմ ծերացած մօր մօտ էր.  
Փայլեց նշոյլ ուրախութեան,  
Բայց ափսոս որ երազ էր:

Կարկաշահոս աղբիւր այնտեղ  
Թաւալում էր մարգարիտ.  
Նա յստակ էր որպէս բիւրեղ,  
Այն երազ էր ցնորամիտ:

Եւ մեղեդին ախուր, մայրենի,  
Յիշեց մանկութեանս օրեր. —  
Մօրս համբոյրն ես զգացի, —  
Ա՛խ, ափսոս որ երազ էր:

Կրծքին սեղմեց կարօտագին,  
Աչքերս սրբեց — շատ թաց էր,  
Բայց արտասուք գնում էին,  
Ախ այդ ինչ՞ու երազ էր:



Ա. Ն. ԲԱՅԻՆՅԱՆԻ ՄԻ ՆՈՐ ԱՍՊՍՐԷՉ

Ահա բացւեցաւ մի նոր ասպարէզ.  
Խմբւեցէք, զինւորք, Սասուն երթալու,

Մայր-Հայաստանը սպասում է մեզ  
Անգուլթ քիւրդի դէմ կռիւ սղելու:

Ձէնքեր առնենք, կռի դաշտ վազենք,  
Անվեհեր կանգնենք շար բռնութեան դէմ,  
Հայկական դրօշ ձեռքներս առած.  
Անգուլթ Սուլթանին հասցնենք հարւած:

Մարտնչենք այնպէս, ինչպէս սասունցիք.  
Եւ այդ շնորհով փրկենք Հայաստան,  
Խրախոյս առէք, ով խմբապետներ,  
Վրէժ են գոչում մեր նահատակներ:

Հրաւեր կը կարդան, ով քաջ հայդուկներ,  
Ջարգել աներկիւղ թշնամու դիրքեր,  
Արդէն փայլում են հայի դրօշակներ,  
Մօտին հրացան, ահուելի գնդակներ:



Մ Ա Յ Ր Ի Կ Ի Ս

Հայրենիքէս հեռացեր եմ,  
Խեղճ պանդուխտ եմ—տուն չունիմ.  
Ագիգ մօրէս բաժանւեր եմ,  
Տխուր-արտում—քուն չունիմ:

Սարէն կուգաք, նախշուն հաւքեր,  
Ախ, իմ մօրս տեսեր չէք:

Ծովէն կուգաք, մարմանդ հովեր,  
Ախրը, բարե բերեր չէք:

Հաւք ու հովեր եկան կըշտիս,  
Անձէն դիպան ու անցան.  
Պապակ—սրտիս, փափագ—սրտիս,  
Անխօս դիպան ու անցան:

Ախ, քու տեսքին, անուշ լեզւին  
կարօտցեր եմ, մայրիկ ջան,  
Երնէկ, երնէկ, երազ լինեմ,  
Թռնեմ մօտդ, մայրիկ ջան:

Երբ քունդ գայ, լուս զիշերով,  
Հոգիդ գրկեմ, համբոյր տամ,  
Սրտիդ կըսնիմ վառ կարօտով,  
Լամ ու խնդամ, մայրիկ ջան...



ԴԱՐԴՍ ԼԱՑԷՔ, ՍԱՐԻ ՍՄՐՈՒԼ

Դարդս լացէք, սարի սմբուլ,  
Ալւան-ալւան ծաղիկներ.  
Դարդս լացէք, բազի բլբուլ,  
Ամպշող երկնուց գով-հովեր...

Երկինք-գետինք գլխուս մթնան,  
Անտուն-անտէր կուլամ ես.

Եարիս տարան, ջանիս տարան,  
Հոնգուր-հոնգուր կուլամ ես...

Ա՛խ, եարս ինձ հանեց սրտէն,  
Անճար թողեց ու գնաց...  
Սրտիս սաւգէն—խորունկ եարէն  
Անդեղ թողեց ու գնաց...

Դարգս լացէք, սարի սմբուլ,  
Ալւան-ալւան ծաղիկներ.  
Դարգս լացէք, բաղի բլբուլ,  
Ամպշող երկնուց զով-հովեր...



ԵՐԲ ՀԵՌԱՅՍՅ ՀԱՅՐԵՆԻՔԷՍ

Երբ հեռացայ հայրենիքէս՝ դառայ ես մի խելագար,  
Մի մասնաւոր վերք ունէի, նա մեծացաւ եղաւ սար.  
Չունիմ հարազատ բարեկամ, բոլորին եղել եմ վատ,  
Խնդրում եմ քեզանից, Արարիչ, դու արա վէրքիս ճար:

Իմ ժտերիմ լաւ ընկերս բոլորովին խոյս տւեց,  
Ինձի երեխայ կարծելով մի աննշան յոյս տւեց,  
Աւելացուց իմ վէրքերը, խոր արմատից բոյս տւեց,  
Փութն ինձ, օգնութեան հասիր, սիրելի հարազատ մայր:

Ապերախտից ինչ կը սպասես, նա չի տալիս քեզ օգուտ,  
Նա իրա գրպանն է քաշում, որովհետեւ է անգութ,

Տարիներով քաղցած մնայ, թշնամուն ինչո՞ւն է փոյթ.  
Մի խաբւիր նրանցից, սիրելիս, քեզ կը զարնեն քարէ քար:

Մնացել եմ խեղճ ու շար, չեմ կարող օգնել ազգիս,  
Ոյժ ու զօրութիւնը գնաց երկաթի նման բազկիս  
Գիշեր ցերեկ արիւն-արցունք թափում եմ ես, Միջազիս,  
Թագաւորաց թագաւորը ցաւերը ինձանից տար:



Շ Ո Ւ Շ Ո Ւ Ե Ր Գ Ը

Պատերազմը սկսեցաւ անվախ Շուշի քաղաքում,  
Հայ քաջերը կրակ տւին իրանց ամուր դիրքերից,  
Սարսափեցաւ թուրք խուժանը Իշխանի խրոխտ ձայնից,  
Ո՛չ մի մարդ չէր կարող ազատել առիւծի ճանկերից:

Քաջ Իշխան և Մարգար քաջերը պարտաճանաչ  
Դաշնակցութեան դրօշակը տանում էին միշտ յառաջ,  
Ամեն կողմից խումբ-խումբ հայեր հասնում էին օգնութեան,  
Յեւ մղեցին թուրք խուժանին զինուորները Դաշնակցութեան:

Քաջ Իշխանը և Մարգարը պատերազմի սիրահար,  
Հայ քաջերի առաջն ընկած շրջում էին անդադար.  
Հազարաւոր գնդակի դէմ կանգնած էին քաջի պէս,  
Մեր թշնամեաց արիւնը լիճ էր դառել իսկապէս:

Կեցցեն Շուշուայ քաջերը, թող պարծենան հայերս.  
Երկինք-գետինք ձայն էր տալիս, թնդացուց մեր ուռմբերը,

Միջագն եմ ձեր, խնդրում եմ կապեցէք սէր, միութիւն,  
Սիրեցէք սուր, զէնք, փամփուշտ, որ գտնէք դուք փրկութիւն:



ԱՔՍՈՐԱԿԱՆԻ ԵՐԳԸ

Ախ, հայրենիք, քեզնից զրկւած,  
Օտար աշխարհ եմ գնում.  
Սիրուն հողդ, սիրած, գգւած,  
Սիրտս միջումդ եմ թողնում:

Ես իմ կամքով չեմ հեռանում,  
Ախ, պաշտելի Հայաստան,  
Չար ստիճն է ինձ ուղարկում  
Դէպի օտար Ռուսաստան:

Դէհ, կաց բարև, իմ հայրենիք,  
Իմ մանկութեան օրօրան,  
Ես չեմ մոռանայ ըս երախտիք,  
Ազգիս պարծանք, Հայաստան:

Ուր էլ գնամ, ինչ տեղ լինեմ,  
Լաւ թէ վատ պայմաններում,  
Դարձեալ թևեր կառնեմ թռչեմ,  
Քո դառ ցաւիդ անապատում:

Ճշմարտութեամբ ես կը զինեմ  
Դէպ արձանը բռնութեան,

Եւ այդ լուսով կը խորտակեմ.  
Նախատինքը գիտութեան:

Շղթայակապ երբ դուրս բերեն,  
Մետելի բանտից, որ դուրս տանեն  
Դէպի հիւսիս մութ սարերին,  
Սառնամանեաց մէջը տանջեն:

Տեսնողները գուցէ ասեն.  
Տեղն է գող աւազակին.  
Գուցէ շատերն էլ լաւ գիտեն,  
Որ զո՞հ եմ աւազակին:

Բայց ո՞չ գող եմ, ո՞չ աւազակ,  
Յափշտակող քինաբար,  
Եւ ո՞չ մատնիչ ինչպէս վասակ  
Ուրացող վեհ գաղափար:

Տներ քանդող աւազակի  
Դէմը կուող մի զո՞հ եմ,  
Արև աւող հայրենիքի  
Լոյս տարածող զինուոր եմ:

Թափառական



ԳԷՈՐԳ ՉԱԽՈՒՇԻ ԵՐԳԸ

Թուրքը լսաւ անունդ Չաւուշ  
Իէմքդ սիրուն, լեզուդ անուշ.  
Կեանքիդ մէջ հանգիստ չունեցար,  
Թշնամեաց դարձուցիր ապուշ.  
Սասունն է քո ապաստան,  
Վրէժ է քո դատաստան:

Հայոց համար սպարապետ,  
Անդրանիկին ընկեր վարպետ,  
Սասունը կանգուն պահեցիր,  
Օգնող է քեզ սուրբ Կարապետ.  
Սասունն է քո և այլն:

Կոտորեցիր քանիցս վաշտ,  
Թուրք արիւնով ներկեցիր դաշտ.  
Անվախ հերոս թուրքաց դէմը  
Մինչև վերջը մնացիր անհաշտ:  
Սասունն է քո և այլն:

Անվախ հերոս ես ճշտապէս,  
Հայք պիտի յիշեն մշտապէս,  
Քաջաց քաջն ես, Գէորդ սարգար  
Վարդանի տիպ ես իսկապէս:  
Սասունն է քո և այլն:



ԵՐԳ ԱԼԱԳԵԱԶԻ

Սև մութ ամպեր ճակտիդ դիզւան,  
Գուժան հագար, Ալագեազ,  
Սրտուժս արև հէջ չի ծագում,  
Սիրտս էլ դուժան, Ալագեազ:

Չառ փէշերդ անցայ, տեսայ,  
Առանց դարդի մարդ չը կայ,  
Է՛հ, իմ դարդս, ջան Ալագեազ,  
Իմ դարդիս պէս հէջ չը կայ:

Է՛յ, Մանտաշի մարմանդ հովեր,  
Իմ դարդս որ ձերն էղնէր.  
Ձեր նուշ-անուշ ծաղկանց հոտը  
Թոյնի, տօթի կը փոխւէր:

Է՛յ, Մանտաշի նախշուն հաւքեր,  
Իմ դարդս որ ձերն էղնէր,  
Ձեր էդ զառվառ, խաս փետուրներ  
Կը սեւնային քանց գիշեր:

Է՛յ, վախ կոտորան իմ թևերս,  
Ընկայ գիրկդ, Ալագեազ,  
Ա՛խ, մեծ սրտիդ սեղմեմ սիրտս,  
Լամ, արուն լամ, Ալագեազ:



Ե Ր Գ Մ Ո Ն Ա Կ Ի

Սիրուն սոխակս, գիտեմ արթուն ես,  
Կարօտ եմ ձայնիդ, որտեղ երգում ես,  
Աւանդ որտեղ երգում ես: (կրկն.)

Մշտապէս կասեմ՝ սիրունիկ վարդ ես,  
Էլ չեմ սպասիր, ուր է իմ զարդը.  
Աւանդ, ուր է իմ զարդը: (կրկն.)

Ինձ մոռացար, ինձ ուրացար,  
Ո՞րտեղ սլացար.  
Թողիր ինձի անտէր, անձար,  
Ո՞րտեղ հեռացար:

Վարդի թուփերին ագռաւն է կանգնել,  
Որ նրա տեղը ապառաժ քար է: (կրկն.)  
Ինքը ծերացած, ձագերը փոքրիկ,  
Յետոյ կը մեծանան մայրերին կօզներն: (կրկն.)

Աւանդ, որտեղ ես, արի. աւանդ քո սիրտն է բարի.  
Աւանդ, ընկերներ ճարի:  
Ինձ մոռացար, ինձ ուրացար: (կրկն.)

Սոխակ խօսքերս սրտուժդ գրէ,  
Քո հայրենիքիդ կեանքդ նւիրէ,  
Աւանդ կեանքդ նւիրէ: (կրկն.)

Այն պարտէզը, որ քեզ կը պատկանի,  
Թողեր ես անտէր, քանի մէկ տարի.  
Աւանդ, մի սգար պարտէզ, աւանդ քեզ կուզայ հանդէս,

Աւանդ չես մնար այդպէս:  
Ինձ մոռացար և այլն:

Սոխակը վարձաւ դէպի հայրենիք,  
Տեսաւ իւր տեղը նստած հայրենիք,  
Աւանդ, նստած հայրենիք:

Ջարդեց, փշրեց ագռաւի բոյնը,  
Վերանորոգեց հայրենի բոյնը: (կրկն.)

Վարդը հասաւ իւր նպատակին,  
Իւր կարօտն առաւ.  
Ագռաւը ընկաւ նախանձը սրտին.  
Շուտափոյթ մեռաւ:



ԿՈՎԿԱՍԻ ԵՐԿԻՆՔ

Գեղեցիկ կովկասի երկինք, շուտով պարզելու չէս դու,  
Խաղաղ, դազար դրուժեան մէջ մի կերպով լինելու չէս դու,  
Առաջ սև էին ամպերդ, հիմա կարմրել են սաստիկ,  
Անիրաւ երկրի նման, նոր-նոր արիւն փոթելու չէս դու:

Չէ որ դու Աստուծոյ գահն ես, կապուտակ պարզ սիրուն  
երկինք.

Ունիս համբաւ, ունիս հռչակ, ունիս բարձր անուն, երկինք,  
Ողորմած և զորովագութ, բարեսէր զգայուն երկինք,  
Մի հատ մեծ հաշտարար որդի մեզ համար ծնելու չէս դու:

Ձիւանուս պարզ հայելին դու, խաւար ամպամած ես դարձել,  
Գեղադէմ լուսաւոր երկինք, սև հագել, մթնած ես դարձել,  
Հոգեհան անուելի գէմքով քաղոցի Աստուած ես դարձել,  
Գերանդին բռնել ես ձեռքիդ, կանաչ արտ հնձելու չես դու:



ԱՐԱՐԱՏ ՄԵԾ ՍԱՐ

Ո՛վ սեպակատար Արարատ մեծ սար,  
Ո՛ւմ էիր առաջ և հիմա ունի ես,  
Դաշտ Արարատեան բարութեան ամբար,  
Ո՛ւնի էիր առաջ և հիմա ունի ես:

Ծաղկանցով չքնաղ սիրուն Արագած,  
Դու ծաղիկ հոտով ինձ արիր հարբած,  
Չորս կողմդ նայում, աղբիւր ու ջուր ես,  
Ո՛ւնի էիր առաջ և հիմա ունի ես,

Ո՛վ շքեղազարդ դու սիրուն Անի,  
Դու մայրաքաղաք հայոց պիտանի,  
Պատմիր դու ինձի, շինողդ սիրես,  
Ո՛ւնի էիր առաջ և հիմա ունի ես:

Այգի անտառով լի երկիր Կովկաս,  
Մինչի երբ այլոց ձեռքի տակ մնաս,  
Հայոց սեփական բնիկ երկիրն ես,  
Ո՛ւնի էիր առաջ և հիմա ունի ես:

Ո՛վ Տաճկաստանի Փոքր ու Մեծ Հայք,  
Տիգրան, Արամի երկիրը և կայք,  
Տաճիկն է տիրում տես հիմա ուր ես,  
Ո՛ւնի էիր առաջ և հիմա ունի ես:

Ա՛խ, թէ հայերս իրար կսիրենք,  
Տես ձեզի դարձեալ ինչպէս կսիրենք,  
Թէ գաւակացդ գէնքով կզինես,  
Մերն էիր առաջ և էլի մերն ես:



ՊԱՐԶԻՐ ԱՂԲԻՒՐ

Պարզիր աղբիւր, պարզիր քեզնից ջուր տանեմ,  
Պարզիր, պարզիր, բէգի տղին ջուր տանեմ:

Աղբիւր, գիտե՛ս քիւրդը մեզի ինչ կանէ,  
Կը կողոպտէ, կը շարշարէ, կսպանէ:

Կար ժամանակ, որ մենք էլ ազատ էինք,  
Մեր սեփական թագաւորներ ունէինք:

Դահ ու փառքից, ազատ կեանքից զրկեցինք,  
Արիւնարբու թշնամու ձեռք մատնեցինք:

Դէհ, շո՛ւտ, պարզիր, բէգի տղին ջուր տանեմ,  
Պարզիր, պարզիր, խան-Մուրադին ջուր տանեմ:



ՁԷՅԹՈՒՆԻ ԵՐԳԸ

Խնդացէք վեհ բնութեան զարդեր,  
Նախշուն ընքոյշ ծաղիկներ,  
Ուրախացէք, սիրուն վարդեր,  
Պայծառ երկնից աստղիկներ:

Անառիկ Ձէյթուն,  
Իւր անյաղթ քաջերով,  
Վրէժ է գոչում  
Անվախ առիւծներով:

Երկինքը մեր գլխին պարզեց,  
Լացը փոխեց հրճւանքի,  
Ստրուկ հայր արգէն ցնցուեց,  
Չեռքը մեկնեց նա գէնքի,  
Անառիկ և այլն:

Խորհրդաւոր քնից զարթնեց  
Հայ պատանին քրանաթոր.  
Աչքը բացեց և ինչ տեսաւ  
Նա, քաջերին զինաւոր:  
Անառիկ և այլն:

Ամեն մի հայ պարտք համարեց  
Իւր սուրբ դատը պաշտպանել,  
Ազատ, անկախ ու անվեհեր  
Թշնամեաց դէմ մարտնչել:  
Անառիկ և այլն:



ՄՇԵՅՈՒ ԵՐԳԸ

Չուր երբ մնանք գէլու գոներ,  
Երթամ գտնիմ զիմ խեղճ գառներ.  
Սուքեմ զիմ պախչայիս ծառներ,  
Չարթիր, լաօ, մոնիմ քզի:

Խեղճ Մշեցին մեռաւ լալով,  
Օտար երկրներ ման գալով,  
Մեռաւ թուրքի պարտքը տալով,  
Չարթիր, լաօ, մոնիմ քզի:

Գրող տանի քուրդ Հասոյին,  
Որ չսպանէր Չօջ Ափոյին.  
Ի լաճ մացեր Արաբոյին,  
Չարթիր, լաօ մոնիմ քզի:

Դէն իրիշկէ, գալողն ո՞րն ա,  
Քաջ Արաբօ բաղդաւորն ա,  
Կարմիր երիցանց զինւորն ա,  
Չարթիր, լաօ, մեռնիմ քզի:



ՄՈՒՇԵՂԻ ԵՐԳԸ

Քաջ Անդրանիկի այրող կայծակի.  
Առիւծ Մուրադի ընկերն ես, Մուշեղ.  
Հայոց անձնէր, կտրիճ խմբակի,  
Փայլուն փարոսը, լապտերն ես, Մուշեղ:

Հայրենիքդ Մուշ, լեզուդ քաղցր անուշ,  
Ինքդ գեռահաս, ոյժդ անպակաս,  
Պասիիդ Վարդանայ պատկերն ես, Մուշեդ:

Թողած ատեն ու տեղ, հայրենիք, ծնող,  
Վսեմ, սուրբ գործին, սրտանց հետևող,  
Զինավարժութեան հմուտ ու յաջող,  
Կրակն էլ մտնես, դուրս կեղնես յաղթող:  
Անյաղթ քաջի պէս դուրս կու գաս հանդէս,  
Կուում ես անվախ, խփում աջ ու ձախ.  
Սասնոյ դիւցազն, Մհերն ես, Մուշեդ:

Բերդադաքում հրաշք գործեցիր,  
Մարտնչող խմբին նորից կեանք տւիր,  
Մեծից ու փոքրից սիրւած անխտիր.  
Փողովրդի ճիւղ ինքդ քաջ ու ժիր,  
Թաթարներու բով չեղար ամօթով.  
Տէրը տայ քեզ կեանք, դու հայի պարծանք,  
Գոհ ենք Արարչից, որ մերն ես Մուշեդ:

Լևոն ու Մարգար, Շամիր, քաջ Իշխան  
Հայ պատւի համար նահատակ եղան,  
Երանի նրանց, քաջի պէս մեռան,  
Ի ու էլ ստացար ծնկէդ մէկ նշան.  
Բայց չմահացար, դեռ կապրիս երկար.  
Քեզ շատ են յարգում, քաջերի շարքում  
Բարձր տեղ ունիս, միշտ մերն ես, Մուշեդ:

Քաջն Վարդանի, հերոս Իշխանի,  
Ի ու քաջ զինակից զինուոր պիտանի,  
Արցախ գաւառում եղար անւանի.

Պատւական մօրդ հագար երանի,  
Ծնել է իստակ քեզ նման գաւակ.  
Անխարդախ գործիչ,  
Լուռ ու մունջ, անձիչ:

« Խուճբդ մարուր կաթի,  
Ի ու սերն ես, Մուշեդ:

Զիւանի



Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Իմ պաշտելի քաղցր հայրենիք,  
Հողիդ, ջրիդ ես մատուց,  
Քանի տարի բեզնից հեռի,  
Կարօտակէզ քաշեմ անխ...

Հալով աչքերս կուրացաւ,  
Զրկւեցայ քո քաղցր տեսքից,  
Լեզուս բերնումս չորացաւ,  
Քո սուրբ անունն երգելից:

Ախ, ածնելի, սուրբ հայրենիք,  
Երկիր բարի պողաբեր,  
Անունդ քաղցրիկ և սիրելի,  
Իրախտ, եզեմ ցանկալի:

Քեզնից հեռի չունեմ հանգիստ,  
Մուգ է ինձի ամեն ժամ,

Քուռը աչքիցս հեռացել է,  
Ինձ չարչարում յարածամ:

Ձի կարող ինձ ուրախացնել  
Հարստութիւն, փառք աշխարհի,  
Ատելի են ինձ ամեն ինչ,  
Երբ քեզանից եմ հեռի:

Ախ, իմ բարի, գթած Աստուած,  
Լինելու է մի օր, մի ժամ,  
Որ ես հասնեմ իմ բաղձանաց,  
Գրկեմ սուրբ հողն իմ հայրենեաց:

Մօտ է կեանքիս թելը կտրելուն,  
Հասել է իմ վերջին ժամ,  
Հայրենեացս մեռնել կարօտ,  
Կաղաչեմ մի տար Աստուած:

Ախ երբ կլցւի բաղձանքիս վերջ-  
Տեսնեմ իմ սուրբ հայրենիք,  
Տեսնեմ ծնողք ու սիրելիք,  
Ապա հոգիս հանգիստ տամ:



ՀԱՄԱԶԱՍՊԻ ԵՐԳԸ

Ծագեց արև ազատութեան,  
Փախէք ամպեր երկնքից,  
Համազասպը իւր խմբովը  
Կուգայ Խաչէն գաւառից:

Գալիս էին բազմաթիւ զօրքով  
Ազիգեօզալ Բէգովը.  
Յանկարծ ընկաւ Ասկեարանը  
Հերոսների ուռկանը:

Թուրք խուժանը սարսափահար  
Փախչում էին. իսկ գլխակոր,  
Թողնելով իրանց յետևից,  
Դիակներ հարիւրաւոր:

Խաչէն գաւառը սրբեցիր  
Թարաքեամայ թուրք ցեղից.  
Ժողովրդին հանգիստ տւիր,  
Թուրք չի անցնում այնտեղից:

Հայերիս տէր Դաշնակցութիւն,  
Քաջեր ունիս սրտալի.  
Ամբողջ աշխարհ հռչակեցաւ  
Համազասպը պանծալի:



ՈՉ ՈՔ ՄԵՉ ԱՅՆՊԷՍ ԶԷ ՀԱՐԻԱԾԵՐ

Ոչ ոք մեզ այնպէս չէ հարուածեր խիստ մահացու վերքերով,  
Յատուկ մենք ենք մեր թշնամին թոյն աւերիչ ձեռքերով.  
Նախանձ, ամբարիշտ բամբասող, գինին ձեռքերուս ազգասէր,  
Զւարճանում ենք թուրքերու անպատուաբեր երգերով:

Մենք իրար չը գիտենք սիրել եղբայրական շերմ սիրով,  
Թշնամի ենք մեր լաւ մարդկանց հալածասէր չար սրտով.  
Ազատ, անկախ ապրել բառը հասկանում ենք վատ մտքով,  
Ազատութեան հակառակ ենք անմիաբան բարքերով:

Մենք միասին գործել չգիտենք, կուսակցական ենք ծայրայեղ,  
Հին նախարարների ոգին մեր մէջ եռում է ահեղ,  
Հայրենիքից ընթանում է ահռելի արեան հեղեղ.  
Կոյր ենք, չենք տեսնում, ապրում ենք հին ստրուկի վարքով:

Փոխան ազգի սուրբ պատմութիւն, Շահ-Իսմայիլ, Այսմաւուրք,  
Աւետարանից խօսողին կասեն Փարմասիօն կամ թուրք.  
Մայրաքաղաք պաշտող հայ գիտնականն է իդէալից զուրկ,  
Գաւառներում չկայ խրատող ու ապրում են ագէտ մտքերով:

Մեր թշնամիք նեղ սրտով մեզ հրէայ են ասել,  
Բայց սխալ են, հրէաներ գիտեն իրար շատ սիրել.  
Մենք հակառակ ենք իրարու, հարստահարող ու զրկող,  
Մասնիչ ենք մէկգմեկու թուրքին հաճելի կրքերով:

Օտարը մեղաւոր չէ, իրար փնաս պատճառողը մենք ենք,  
Մէկ մէկու ջան ասած բառը, չոսի ճառողը մենք ենք.

Մեզ մորթող քիւրդն ու թուրքը չեն, վաճառողը մենք ենք,  
Այդ գիտնալով գործում ենք, սև գրօշ ձեռք բերելու յոյսերով:

Զուենիք տէրտէր և ուսուցիչ լաւ վեհափառ հովապետ,  
Որ կուինք մեզ դարաւոր վերք պատճառող ախտերի հետ.  
Գաւառներում կին ու աղջիկ ապրում են անգրագէտ,  
Անգրագէտներից մարդիկ ծնւում են փթած իղձերով:

Երգիչ Սօջառ չեմ տեսած հայ հարուստից մի լաւ բան,  
Դեռ չի մեռած կտակ անեն օգուտ խղճուկ հայութեան.  
Դառնում են երեցփոխաններ, գողնում, գեղծում անպայման,  
Մեռնելիս մի սուտ կտակով թաղում են մեծ փառքերով:



ՄՇԵՅՈՒ ԳԱՆԳԱՏԸ

Ողորմացիր, տէր իմ, գութով նայիր մեզ,  
Մինչ երբ թողնիս նկուն տխուր հայ ազգիս.  
Հինգ հարիւր տարի է կաղաչենք քեզի,  
Զարիւր մէկ օգնութիւն տխուր հայ ազգիս:

Քեզ պաշտեցինք, մեզ շղթայով փակեցիր,  
Մեր բերդերն ու ամրոցները փակեցիր,  
Կարծես գերութեան հետ մեզ պսակեցիր,  
Տւիր ստրկութիւն տխուր հայ ազգիս:

Առար քաջ Տրդատի ձեռքէն թագ ու թուր,  
 Ենեւով սարն ասաւ աշխարհն է իզուր,  
 Այն օրից մինչ այժմ խեղճ հայն է տխուր,  
 Տւիր թոյլ բնութիւն թշուառ հայ ազգիս:

Առ միշտ արիր Մեհրուժանին սիրական,  
 Պարսկաց զօրքեր ուղարկեցիր Հայաստան,  
 Զարեանդի մօտը մեծ հարւած տուաւ,  
 Անիրաւ չար Շապուհն խղճուկ հայ ազգիս:

Խեղճ Խօջան եմ, երկար ողբալով լացինք,  
 Մեր սխալը յետոյ, յետոյ զգացինք,  
 Թողինք ցնորք, աղօթք, զէնքի դիմեցինք,  
 Գուցէ տաս յարութիւն խղճուկ հայ ազգիս:



ԵՐԵՎ ՁԱՅՆ

Երեք ձայն կայ, շատ է սիրում ահանջս.  
 Ոսկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն,  
 Այդ երեքն են մշտական իմ պահանջս,  
 Ոսկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն:

Ձուրը կեանք է, ոսկին զօրաւոր, յաղթող,  
 Սիրունից կը լսես կենսատու ներբող,

Արդեօք մարդ կայ այդ երեքը չը սիրող,  
 Ոսկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն:

Գրպանդ ունենաս ոսկով լի քսակ,  
 Մօտդ մի չքնաղ կոյս, դիմացդ գետակ,  
 Երեքին էլ լսես զիշեր ժամանակ,  
 Ոսկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն:

Ձիւանի



Ի Ր Ա Ի Ո Ի Ն Ք

Թող ես մշակ լինեմ, դու եղիր իշխան,  
 Պատւիս ու կրօնիս, հացիս մի դիպչի.  
 Թէ կուզես հաշտ ապրենք, բարի հարեան,  
 Պատւիս ու կրօնիս, հացիս մի դիպչի:

Անհատական իրաւունքս է ամեն ժամ,  
 Իմ պարտքն է աշխատեմ, ոչ ոքի չը տամ,  
 Թէ կուզես իրար հետ մնանք բարեկամ,  
 Պատւիս ու կրօնիս, հացիս մի դիպչի:

Անպատիւ մարդու մօտ չի լինի հաւատ,  
 Պատիւ չեղած տեղը հաց չը կայ առատ,  
 Կը ցանկանաս որ չանեմ քեզանից գանգատ,  
 Պատւիս ու կրօնիս, հացիս մի դիպչի:

Քնաւ չեմ նախանձի քու ճոխ սեղանին,  
 Քու ոսկուն, արծաթին, քո գանձարանին  
 Այս երեքով կտայրի աշրդ-Ջիւանին,  
 Պատւիս ու կրօնիս, հացիս մի դիպչի:



ԱԶԳ ԻՄ, ՈՐՔԱՆ ՆԿՈՒՆ ՄՆԱՍ

Ազգ իմ, որքան նկուն մնաս,  
 Սիրտս քեզնից չի գատւի,  
 Հազար տեսակ չարչարանք տաս,  
 Սիրտս քեզնից չի գատւի:

Քեզ չեմ մոռանայ յաւիտեան,  
 Հարազատ մայր իմ Հայաստան,  
 Թէկուզ զբախտն էլ ինձի տան,  
 Սիրտս քեզնից չի գատւի:

Քեզանով եմ ես երջանիկ,  
 Իմ սիրելի, իմ անուշիկ,  
 Ծոցիդ մէջը հանգչիմ մայրիկ,  
 Սիրտս քեզնից չի գատւի:

Ջիւանին եմ, քեզ բարեկամ,  
 Քանի ողջ եմ, ամենայն ժամ,

Հնդկաստանին էլ տէր դառնամ,  
 Սիրտս քեզնից չի գատւի:



ԽԱԻԱՐԵԼ ԵՄ ԻՆՉՊԷՍ ԳԻՇԵՐ

Խաւարել եմ ինչպէս գիշեր,  
 Իմ չորս կողմս է փոթորիկ.  
 Չունեմ ես սէր, չունեմ ես սէր,  
 Ես սիրում եմ իմ հայրենիք:

Այնտեղ անթիւ անբախտ մայրեր,  
 Որդեկորոյս ծնողներ,  
 Եղբայրագուրկ անթիւ քոյրեր,  
 Թափում են յորդ արցունքներ:

Ինձ մի սիրի՛ր, ինձ մի սիրի՛ր,  
 Ես շատ ու շատ փրկւել եմ.  
 Ա.ու թաշկինակդ սրբի՛ր աչերդ,  
 Ես քեզ սիրել չեմ կարող:

Մնաս բարե, իմ աչքի լոյս,  
 Սէրդ լինի ինձ խրախոյս.  
 Այդ արտասուքը ես պիտ թափեմ,  
 Որ իմ ցաւերս սփոփեմ:

Ախ, տէք ինձ քաղցր մի քուն,  
 Կեանքից հեռու սլանամ,  
 Այն աշխարհը, ուր խնդուիլին,  
 Ուր սէրն է միշտ անթառամ:



ԱԼԻԻՐԻ ՄԷՅԳԱՆ

Խեղճ պլուկած հաւ ես դառել, գեղեցիկ ալիւրի մէյդանս,  
 Ողջ թիֆլիսի պարէն տուղ, բարիքների շտեմարան,  
 Ուր են կշտիգ խանութները, աւերակ դարձել են, չկան,  
 Չարամիտ թուրքերու ձեռքով կրակի բոցի զոհ եղան:  
 Մէջի եղած ապրանքները գողացան, բոլորը տարան,  
 Չեղքեր ծոցը դրած խեղճ աէրերը արիւն կուլան:

Մարդասպանութեան չար հողին Գոնձակից մինչ թիֆ. հասաւ,  
 Առած պատուէրի համեմատ թուրքերի հոգու մէջ մտաւ:  
 Կովկասի մայրաքաղաքը չազատեց, հնար չեղաւ,  
 Ձինեց կտրիչ գաւակները, պատերազմի շորեր հագաւ,  
 Ով որ կուի ընդունա էր, տապեց ձեռքը զէնք առաւ,  
 Հարուստ աղքատ կանչում էին տէք մեզ սուր, հրացան:

Նոյեմբերի քսաներկուսին երեկոյեան ժամի ութին,  
 Մէջիթի կամուրջի մօտը աղմուկ բարձրացաւ անազին.  
 Հաւաքարից դէպի բազաք եկող երիտասարդ հային  
 Թուրքերը ուղեցան սպանել, կրակ բացին, վրայ տւին:  
 Հայերի վրայ յարձակողը՝ թուրքերը եղան առաջին  
 Գարշելի թունաւոր մաղձը կրկին երևան հանեցին:

Շարունակեց պատերազմը, այստեղից սկսեց բանը,  
 Երկու կողմից ամպի նման գոռաց անգուլթ հրացանը:  
 Պատերազմի ասպարէզ է դարձել ալիւրի մէյդանը,  
 Քաղաքը անտէր էր մնացել, ժողովուրդն էր իր պաշտպանը,  
 Անտարբեր նայում էր զօրքը ապշած, բաց արած բերանը,  
 Գործի մէջ խառնւելու չկար վերելից հրաման:

Դաշնակցական և Հնչակեան քաջերը, ձեռքը ձեռքի տւած,  
 Կուռւմ էին առիւծի պէս, կանչում էին հայի Աստուած,  
 Ձինւած ֆէդէրալիստները խկապէս եկան օգնութեան,  
 Հայերու հետ եղբօր նման կուի ասպարէզ մտած:  
 Սօցիալ-Դեմօկրատները խաղաղութեան ուղին բռնած  
 Երկու կողմին էլ աշխատում էին հաշտութեան:

Վերջը զօրքն էլ միջամտեց, պատերազմին եղաւ ներկայ,  
 Ասաւ հայերին հետ քաշէք, պէտք է մենք կուենք հիմա,  
 Գլխաւորի հրամանով դուրս եկաւ մի սպայ,  
 Կարծում եմ թիֆլիզեան գնդից զօրք վերցրեց մի բօտա,  
 Բարձրացաւ մեր հայ քաջերու ունեցած դիրքերու վրայ,  
 Մի քանի յարձակում գործեց թշնամուն բռնելով նշան:

Բօբչալուից դէսից դէնից աւաքւած խուժան յիմար  
 Կուշտ եկան, անօթի փախան, թիֆլիսը շուեց պաշար,  
 Բաւական մեծ գոհեր տւին, իղձերը մնաց անկատար,  
 Կորան, սև ու սուգը մտան թելադրող մարդիկը չար,  
 Համարեա թէ թիֆլիսի մէջ հայ կայ մօտ հարիւր հազար,  
 Իսկապէս հայաշատ տեղ է, ոչ Գոնձակը, և ոչ Նախիջևանը:

Ձիւան խնդրէ ջարդ ու փշուր լինի չարի օրօրոցը,  
 Չար մարդը չը մեծացնէ չարի առաջնորդ որդոցը:  
 Յունաց եկեղեցու կայքին դիպաւ արի վառ հնոցը,

Լափեց բոլոր խանութները մինչ երկինք բարձրացաւ բոցը.  
Հրդեհն էլ բան չը թողեց, Ասին դարձաւ մեր փողոցը,  
Չգիտեմ ուր պիտի երգեմ, ոչ տեղ մնաց, ոչ սրճարան:



ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանը ընկած, կործան,  
Չի կտրուում նորա կական,  
Չկայ մէկը լինի պաշտպան,  
Բայց միշտ կասենք, որ մենք հայ ենք:

Վանքեր աւեր, բերդեր քանդած,  
Սուրբ տաճարներ հողով ծածկած,  
Հայի խղճուկ որդիք ցրւած,  
Բայց միշտ կասենք, որ մենք հայ ենք:

Սուրբ հարց երգոց դեռ նոցանում  
Քու բուն իրա վնջն է կանչում,  
Աւեր բերդեր, տաճարք ողբում,  
Բայց միշտ կասենք, որ մենք հայ ենք:

Նախնեաց շիրիմք հաւասար հողին,  
Չկան Վարդան և Գարեգին,  
Ոչ հետևողք նոցա շաւղին,  
Բայց միշտ կասենք, որ մենք հայ ենք:

Ամայի են դարձել դաշտեր,  
Ցամաքել յտակ վճիտ ջրեր,  
Անգութ տաճիկ նոցա տիրեր,  
Բայց միշտ կասենք, որ մենք հայ ենք:

Քաղցից հայեր միշտ կոտորւին,  
Սով է տիրում Հայաստանին,  
Չուղենք օգնել խղճուկ հային,  
Լոկ խօսքերով կասենք հայ ենք:

Կը վայելէ ուղիղ հային  
Այսպէս թողնել իւր հայրենիք,  
Չըհոգայ թշւառ օրւայ մասին,  
Իատարկ խօսքով կրկնել հայ ենք:

Երբ սփոփենք նոցա ցաւեր,  
Երբ փարատենք նորա վշտեր,  
Քրդի ձեռքից հայն ազատենք,  
Ապա ասենք, թէ մենք հայ ենք:



ՄՕՐՍ ՎԵՐՁԻՆ ՀԱՄԲՈՅՐԸ

Տւեց համբոյր վերջին անգամ  
Իմ հարազատ ծնող մայր,  
Ես սէր գնամ, որտեղ ման դամ,  
Բանտ է աշխարհն ինձ համար:

Ես այն օրից թափառում եմ  
Անօթևան թռչնի պէս,  
Օտար երկրում տանջւում եմ,  
Կեանքս արդէն եղաւ կէս:

Դեռ չեմ դրել ես տուն ու տեղ,  
Ընտանեկան յարկի տակ,  
Թափառում եմ անտուն անտէր,  
Անհրաժեշտ երկնի տակ:

Արշալոյս



ՀԱՅ ԱԶԳԻ ՈՐԴԻՔ

Հայ ազգի որդիք, էլի համբերենք,  
Թշնամու արած մինչև երբ ներենք,  
Դանակի ծայրը հասաւ ոսկորին,  
Վտանգը մօտ է մեր մայր աթոռին:

Նա դաւաճան է, ով այս օրերին  
Կուրծքը դէմ չի տայ թշնամու սրին,  
Լաւ է վաղ մեռնել, քան այսպէս ապրել,  
Եւ կամ թշնամուն հիմքից կործանել:

Չարքաշ այս կեանքը այլևս պէտք չէ,  
Մեր թշնամին էլ, որ չի ամաչէ:  
Չազդեց եւրոպին մեր լաց ու հառաչ,  
Մնում է դուրս գալ թշնամու առաջ:

Ահա տեսնում ենք թուրքը կոյր գործիք,  
Աւերել կուզէ տուն տեղ հայրենիք,  
Չէ որ Վարդանի մենք արիւնիցն ենք,  
Էլ ինչի լուենք, ինչու համբերենք:

Կոչնակ, դու հնչէ երկրի ծայրից ծայր,  
Հայեր իմանան վագեն Աւարայր,  
Այնտեղ մենք պարզենք դրօշն հայկական  
Տարածենք լուրը սուրբ ազատութեան:



ԱՆԻՐԱԻ ՁԿՆՈՐՍԸ

Անիրաւ վատ ձկնորսը մտաւ գետը որսալու,  
Պաշարելով ամբողջ գետը, ուզեց բոլորը պարպելու,  
Բայց չէր տեսաւ գետի ափին մի աճազին վիշապ կար,  
Երբ որ տեսաւ քաջ վիշապին, սկսեց նա փախչելու:

Այդ ձկները շատ քիչ էին, չունէին տէր տիրական,  
Մնացել էին խեղճ ու մոլոր, յուսահատւած անպաշտպան.  
Յանկարծակին մի լոյս ծագեց, վիշապն հասաւ օգնութեան,  
Երկնքիցը կրակ թափեց, չարժանացաւ կուլ տալուն:

Այդ խեղճերի սրբավայրը կոտորեցին, քանդեցին,  
Բազում մարդով մօտեցան, աւերեցին վառեցին,  
Չէին կարծում թէ յետ տալ կայ, գողացան ու թալանեցին,  
Կէս ճամբայ մնացին, չը կարողացան տանելու:

Երգիչ Սիրաթ քաջ վիշապ դար ու կէս շարունակ  
Տարաւ յաղթութեան պսակը, թափելով անշէջ կրա-  
նրանով էլ մեր գործերն յանկարծ գարձաւ աջողակ,  
Այնուհետև սկսեց մէկիկ մէկիկ յետ տալու:



ՐԱԶՆ ԵԿՍԻ ԼԱՓԻՆ ՏԱԼՈՎ

Արազն եկաւ լափին տալով,  
Ժեռ քարերին ափին տալով,  
Որտեղ թաղեմ ես իմ գարդը,  
Ձոր գլուխս տափին տալով:

Ա՛յ, իմ Արազ, ջուրդ վարար,  
Սիրուն եարիս եարաբ տեսար,  
Ես չը հասայ իմ մուրազին,  
Արազ, եարաբ կարօտս առար:

Ամպերն ընկան Մասիս սարին,  
Կարօտ մնացի ես իմ եարին,  
Ասուած սիրես էրւած սրտիս,  
Ջուղաբ բերես էկող տարին:

Գիշերն անքուն գիր կը գրեմ,  
Արտասուքս թանաք շինեմ,  
Արազ ծէգը ջրիդ չառած,  
Իմ սև դարդը քեզ կը բերեմ:

Կասես շողքը քարին ընկաւ,  
Կրակն իմ սրտիս մէջն ընկաւ,  
Կամար ունքից, թուխ աչքերից,  
Յաւն իմ ջիւան ջանիս ընկաւ:



ԳՈՂ ԿԱՏՈՒ

Ախ գող կատու, քո երեսդ լինի սև,  
Քանի մէկ փասս տաս իմ խեղճ ձագերուս,  
Հիմա եկել դէմս ես կանգնել դու կազ դև,  
Մոմուտով ման ես գալիս իբրև կոյս:

Ձւեր դրի, ձագ հանեցի, խեղդեցիր,  
Խղճուկ փիւնիկ հաւիս ձագից զրկեցիր,  
Որտեղ մի բան տեսար յափշտակեցիր,  
Լւացւեցար, յետ քաշւեցար սուս ու փուս:

Քո աչքերըդ քոռ են, չես ճանաչեր տէրըդ,  
Ջգւելի գարշելի բո պիղծ պատկերդ,  
Գող ու աւազակ էր անառակ մէրըդ,  
Նա էլ քեզ պէս հարւած տւեց ձագերուս:

Վերեն ասի, գող ես դու չար ու դաժան,  
Աղ ու հացը չը ճանաչող կեղտոտ անպիտան,

Վաս հօրըդ ես բաշել, գարշելի գաղան,  
Յուսահատուած թողիր երգիչ Սիրաթուս:



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱԻԱԶԱԿ

Ազգդ գորացնելու համար  
Ապրիս շատ տարի, աւագակ,  
Այլոց հանգցնելու համար  
Արի համբուրեմ, աւագակ:

Ջարթիր, խղճութիւնըդ բաւ է,  
Քու արիւնդ թշնամուն ցաւ է,  
Ինչպէս ազգիդ համար լաւ է,  
Այնպէս գործիր, աւագակ:

Սովածութիւնից նեղացիր,  
Այդքան գործը կարողացիր,  
Ազգիդ օգուտ բան գողացիր,  
Վարձքիդ համարիր, աւագակ:

Որտեղ ունիս թշնամիներ,  
Արիւնը խմէ, միսը կեր,  
Քեզպէս էլ բաջ կտրիչ ընկեր  
Ուրիշ էլ ճարիր, աւագակ:

Չեռքըդ չը վերցնես սրէն,  
Մինչև վիզըդ չը կտրեն,

Սորւածի պէս սրիդ վրէն  
Շարիր թշնամուդ, աւագակ:

Իու ես քո ազգիդ մշակը,  
Պատրաստ է թուր ու նիզակը,  
Մխէ քիւրդի թեկ տակը,  
Թող խաւարի կեանքն, աւագակ:

Երբ դու, պատրաստել կը սիրես,  
Ձէնքըդ ազգիդ կը նւիրես,  
Հայրենիքիդ հողը տիրես,  
Սուրբ զինուոր բարի, աւագակ:

Այս կատարէ սրով, նետով,  
Հազիրուս սպանն է փայտով,  
Ազգըս ազատէ տեսնեմ, յետոյ  
Թող մարի մուխս, աւագակ:



Մ Օ Ր Ս Ո Ւ Գ Ը

Սարի լանջին ընկած որդիս,  
Կրճքիդ վարդին ես մեռնեմ.  
Մէկ ճար գաիր արուն դարդիս,  
Ախ, քո դարդին ես մեռնեմ:

Արնաշաղախ, մենակ ընկած,  
Կանաչէ քեզ անկողին.

Անուշ քնով լուռ-մունջ քնած,  
Չես լսում քո ծնողին:

Բաց, բայ՛ն ջան, աչքդ մէկ բաց,  
Մէկ ինձ նայիր, այ անսիրտ.  
Ա՛խ, իմ սրտին՝ էրևած, վառւած,  
Մէկ ճար գտիր, քարասիրտ...

Յար. Պետրոսեան



ՀՐԱՇԱԼԻ ՏԱՓԻ ԹԱՂ

Հրաշալի Տափի թագ, որ կոչուում ես եարմուկայ,  
Անտանելի հարւածի, ցաւի եղար ենթակայ,  
Տփխիսու սիրան ու հոգին, առևարի մեծ շողկայ,  
Անգութ դաժան ձմեռը սև սուգ բերին քեզ վրայ:

Տխրահոչակ դեկտեմբեր ամսի քսաներկուսին,  
Կէս օրւանից քիչ անցած, համարեա ժամի մէկին,  
Պայթուցիկ ձու գլորեց իժի ծնունդ սև հոգին,  
Վիրաւորեց չորս կազակ և մի անտէր երեխայ:


Տրաքւեց հրանիւթը, չը քաշեց շատ ժամանակ,  
Անմիջապէս զօրքը եկաւ, ձիաւոր ու հետևակ.  
Հրաձիգ, վաշտ թնգանօթ մի ահագին գուժարաակ,  
Գարձել է խեղճ եարմուրկան մի տեսակ նոր Մանջուրիա:

Հայոց վանքի կալւածքը զօրքով շրջապատեցին,  
Թնդանօթով, հրացանով անդադար կրակեցին,

Ասորոց թէյատունը սկիզբը կրակեցին,  
Փորձութիւնը նոյն տեղից դուրս էր եկել այդ օրւայ:

Մի անպիտան մեղք գործեց, շատ անմեղներ գոհեցան,  
Հարիւր մարդուց աւելի ի դուր տեղը փչացան,  
Որը անգութ գնդակով, որը կրակով մեռան,  
Ինչո՞ւ եղաւ այս բանը, հարցնող, քննող չը կայ:

Զիւան, մեծ գործի տէրը մի օրում աղքատացաւ,  
Օր հացի կարօտ մնաց, ցաւալի թշւառ եղաւ,  
Կէս միլիօն արժեցող կալւածքը մոխիր դառաւ,  
Անբախտ Ներսիսեան դարոց, դու արտասուէ, դու ողբայ:



ՀԱՂԱՐ ԻՆՆ ՀԱՐԻԻՐ

Հազար ինը հարիւր տխուր հինգ թւին,  
Դեկտեմբերի տասներեօթին լուր եկաւ,  
Չարը մտաւ մէջները հային ու թուրքին,  
Գանձակի մէջ նոր կոտորած սկսաւ:

Մեր պարզ հորիզոնը նորից միջեց,  
Խաղացած սրտերը վրդովեց, ցնցեց.

Կովկասու հայերուն նոր հարած տեց,  
Չախորդութեան չար շրջանը վատ անցաւ:

Կազմակերպութիւնը իբրև օժանդակ  
Հայոց կտրիչներից զինեց մի տասնեակ,  
Ամսի տասն ութին ուղարկեց Գանձակ,  
Խմբին ղեկավարող Բարսեղը եղաւ:

Տխուր մութ գիշեր էր, ցաւալի վայրկեան,  
Տխուր երկինք, գետին դարձել էր լալկան-  
ժամը տասերկուսին հասան կայարան,  
Գանձակի մօտ երկաթուղին կանգ առաւ:

Կայարանից մինչև քաղաք շատ երկար,  
Տանջւեցին չը գիտնալով ճանապարհ.  
Ընկան ցեխ արտերը, ընկան սար ու քար,  
Առաջնորդող ծանօթ մարդ չը պատահաւ:

Չարչարելով անվախ կտրիչները մեր,  
Լուսը բացւեց հասան Գանձակ տասն ընկեր,  
Օգնութեան են եկել զինուած հայ քաջեր,  
Քաղաքում տարածւեց ցնծութեան համբաւ:

Գանձակի հայերը շատ ուրախացան,  
Սրանց համար տներուց դուրս թափւեցան.  
Առաջնորդարանում սարքեցին սեղան,  
Ճաշ տւին, յարգեցին, խումբն ուրախացաւ:

Թուրք խուժանի կողմից կէս օրւան մօտիկ  
Հրացանաձգութիւն սկսեց սաստիկ.

Դուրս թռաւ Բարսեղը վեհ քաջամարտիկ,  
Տղերք, դէպ առանջ, գոռաց, ձայն տուաւ:

Ափսոս, մեր տղերքը վարժ չէին շիտակ,  
Դիրքերին անծանօթ, գործին անտեղեակ.  
Ճանապարհ ցոյց տւող եղաւ մի համբակ,  
Դէպի այգիները քաջերին տարաւ:

Հանգիպեցին զինուած թիւրքաց մի խմբի,  
Հայոց կորիւնները բռնւան կուլի.  
Տասն էլ մահը անարգող, նման քաջ արծւի,  
Թռչող արագաշարժ, վագող սրառչաւ:

Բարսեղի մօտ Արտաշէսը Գալստեան,  
Կուռւմ էր անվեհեր առիւծի նման.  
Սարի-Բէկը Տէր Սիւքիասեանց անխափան  
Նշանին խփում էր գնդակը շատ լաւ:

Վարդան Յարութիւնեան քաջը անմոռաց  
Դարձել էր սարերու այժեամ սըրնթաց.  
Տիգրան Սարգսեանը, ուղիղը սասած,  
Թռչում էր բազէի նման նա իրաւ:

Ախալցխայի Գրիգորը թանկագին  
Տապալում էր գողեաթներ անագին.  
Տասն էլ անձնուրացներ զոհեր գլխովին,  
Ազգի համար իրանց միշտ դնող գրաւ:

Հայոց կտրիչները անսասան, անվախ  
Գնդակ թափում էին սաստիկ աջ ձախ.

Վախկոտ ոչխարի պէս թշնամին խարդախ  
Փախուստ տալով գետի այն կողմը անցաւ:

Թշնամու հետ մերոնք երկար կուեցան,  
Ժամը տասներկուսը մինչև գիշերւան.  
Փախցրին թշնամուն, յաղթութիւն տարան,  
Նոցա առաջնորդը երկիւղից փախաւ:

Հայ ու թուրք իրար դէմ ամուր գիրք բռնած,  
Ղազախն էլ հայուն տալիս էր հարւած.  
Երեք տեսակ կրակի մէջ պաշարւած,  
Բարսեղը իւր խմբովը խիստ նեղը ընկաւ:

Վիրաւորւած քաջ Բարսեղը անդադար  
Դարձեալ ընկերներին խրախոյս կուտար.  
Գրիգորն էր խմբապետին հաւասար,  
Մեծ վերք ունէր, ցոյց չէր տալիս վիշա ու ցաւ:

Տէր Սահակեանը Մկրտիչը, Տիգրանը,  
Սարի-Բէկը, բերին կուի վախճանը.  
Երևում է խաղաղութեան նշանը,  
Թուրքը փախուստ տւեց, լոյսը բացւեցաւ:

Զիւան, մեր քաջերը դուրս եկան յաղթող  
Վերադարձան ուրախ, պարգերես, յաջող.  
Հայի պատւի համար նահատակ լինող,  
Հայոց կտրիչները շատ են, չեն սակաւ:



ԽՐԱԽՈՅՍ ՔԱՋԵՐԻՆ

Սիւնեաց աշխարհում կռիւ մղելով,  
Մեր քաջ հերոսներ յաղթութեան յոյսով  
Կարիչ, անվեհեր, վրէժով վառւած,  
Թշնամուն տւին սաստիկ կոտորած:

Ելէք, հայդուկներ, օգնութեան գնանք,  
Մեր ընկերներին խրախոյս կարգանք...  
Ազատ Սիւնիքի Վաղուաի ձորում  
Պառկած գերթ առիւծ՝ վերք առած սրտում:

Քաջ Ստեփանեանց պատանի Վահան,  
Եւ կարիչ Չաքօ ազգին զոհ եղան.  
Դէհ, գնանք ընկերներ, փունջեր պատրաստենք,  
Դրանց շիրիմները վարդով զարդարենք:

Ո՛հ, չկայ հանգիստ հայ գիւակներին.  
Մնացին նոքա թշնամու ձեռքին.  
Դրանց ամեն մի կաթիլ արիւնի  
Փոխան պիտ թափենք արիւն սոսիս:

Շուտ հասնենք, տղերք, քաջ զոհի տեղ,  
Կարմիր արիւնները ամփոփենք մէկ տեղ...  
Միթէ մենք չունինք Հայկ ու Արամին  
Ննարատ արիւն մէջ մեր երակին...

Հերիք չէ, որ մեր աչքերի առաջ  
Արեամբ պսակւին հայ տղերք քաջ-քաջ,

Դէ՛հ, գնանք առաջ մենք անկեղծ սրտով,  
Որ սուրբ նպատակ պսակւի շուտով:



Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Հազար ինը հարիւր չորս թւականին  
Տաւրոսի լեռներում ժայթքեց նոր կրակ,  
Թնդացին լեռները մայր Հայաստանին,  
Փայլեց հերոսութեան կարմիր դրօշակ:

Բանտից ու կապանքից ազատւած ոմանք,  
Անւանի Սամնոյ մէջ որոնեցին կեանք,  
Տեղական քաջերից գտնելով յարգանք,  
Հանգստանալ ուղեցին մէկ ժամանակ:

Հայ քաջերը աւելացան օր օրի,  
Նրանց թիւը հասաւ մինչև հարիւրի,  
Ամենքն էլ միասիրտ և մի հոգի,  
Զինավարժութեան մէջ հմուտ ընդունակ:

Զինւած ու պատրաստւած, ողջը ժրաջան,  
Ունէին հեռաձիգ բանուկ հրացան,  
Երգում արին սամնցոց հետ միացան,  
Կազմեցին հայկական մի փոքրիկ բանակ:

Ռազմագէտ Անդրանիկը բազմաշահ  
Եղաւ կառավարիչ հայ զօրքին անահ,

Զորս զլիսաւոր քաջեր ընտրեց թիկնապահ,  
Մուրադ, Հրայր, Վահան և Սեպուհ Սըշակ:

Փոքրիկ ընդհարումներ եղան թէպէտև,  
Գործը չը մեծացաւ, անցկացաւ թեթև,  
Ինքնապաշտպանութեան տւին ձև,  
Թուրքերի մէջ բարձրացաւ ճիչ, աղաղակ:

Այս լուրը Սուլթանի ականջին հասաւ,  
Հայոց պատրիարքի վրայ նեղացաւ,  
Սպառնալով այսպէս հրաման տւաւ.  
Խրատիր հայերիդ, ուղարկիր կոնդակ:

Պատրիարքը պատասխանեց խոր հոգուց,  
Ասաւ, ես ոչինչ եմ, այսօր թէ էքուց,  
Հեղինակութիւնս ընկել է վաղուց,  
Քաղցր խօսքս նրանց թուում է ներհակ:

Սուլթանը այլայլեց տխուր սրտմտած,  
Տակն ու վրայ եղաւ, սաստիկ ցաւ զգաց,  
Իւր նախարարներուն ասաւ բարկացած.  
Բիթլիսի վալուն տալ հրովարտակ:

Վալին տիրոջ հրովարտակը կարգաց,  
Հայերուն կոտորել հասկացաւ զգաց,  
Առաքելոց վանքի վանահօրն ասաց,  
Արի գնայ Սասուն եղիր պատւիրակ:

Գնա խրատէ քու հայ ժողովրդին,  
Վնաս չը հասցնեն թուրքին ու քրդին,

Ասա չը հետևեն այլոց խորհրդին,  
Ողջ Սասունը կը դարձնեմ աւերակ:

Վարդապետը գնաց, դատարկ հետ դարձաւ,  
Նրա բարոյներուն մի լսող չեղաւ,  
Աճապարեց վալին, շատ զօրք մօտ արաւ,  
Խառնի խուռն քիւրդ ու խուժան ելգաւ:

Մանր խոշոր թնդանօթներ մօտ քսան,  
Ռազմամթերքը առատ բաւական,  
Թուրքաց զօրքի թիւը կը լինէր այսքան,  
Քսան հազար ձիաւոր ու հետևակ:

Ասիւծ Գէորգ Չաւուշ, Կայծակ ու Վահան,  
Աւետիսը խմբով հասան օգնութեան,  
Կանգնեցին թուրք զօրքի դէմը յանդիման,  
Հայոց կտրիչները անվախ համարձակ:

Վալին ասաւ Անդրանիկին. ո՞վ տխմար,  
Անփորձ ճնճողուկի պէս թակարդն ընկար.  
Չգիտես ում դէմ ասպարէզ մտար,  
Ես բազէ եմ, դու մի չնչին կաշաղակ:

Անդրանիկն ասաւ, հոտած խելքի ծով,  
Խօսքերդ քո գլխիդ կբերեմ խռով.  
Բուրդդ բարբարը կհանեմ շուտով,  
Անեղիս մէջ կառնեմ քեզ որպէս բամբակ:

Վալին ասաւ. Ազրաիլն եմ ես հիմայ,  
Իսկապէս քո հոգիդ առնելու եկայ,

Ո՞ւմ վրայ ես դրել յոյսը, ինձ ասա,  
Ո՞վ դու անբարգաւան ըմբօստ աւազակ:

Անդրանիկն ասաւ. շատ բարձրամիտ ես,  
Գիշակեր բորենի մէկ պարագիտ ես,  
Անգէն խեղճ հայերին կոտորել գիտես,  
Քաջերու մօտ դու կը դառնաս նապաստակ:

Վալին ասաւ. արի անձնատուր եղիր,  
Լսիր թագաւորիդ, գէնքերդ վար դիր.  
Ողջիդ կղարձնեմ ես հող ու մոխիր,  
Մէկ ամիս անդադար կարձակեմ գնդակ:

Անդրանիկն ասաւ. լսիր, ո՞վ փաշայ,  
Մեզ համար մեռնել կայ, յանձնել չկայ.  
Արա, մի խնայիր ձեռքէդ ինչ կուգայ,  
Շատ ենք լսել, տեսել մենք քամու տուրակ:

Վալին ասաւ. թող գայ ամբողջ աշխարհը,  
Չի կտրի օսմանեան աղեղի լարը.  
Փոքրիկ ուժով կուգես շրջել մեծ սարը,  
Գլխիցդ անցել ես, խեղճ հայի զաւակ:

Անդրանիկն ասաւ. Դաւթի ճժերը,  
Միթէ դու չես լսել Սասնայ գժերը,  
Շատ սարեր են շրջել փոքրիկ ուժերը,  
Բռնակալին Սսուած ինքն է հակառակ:

Վալին տեսաւ, չեն խոնարհում հայերը,  
Իրենք անվախ և հատու են գէնքերը,

Խրախուսեց, առաջ մղեց քրդերը,  
Բայց հայերուց կերան կատաղի ապտակ:

Չորս ամիս շարունակ պատերազմ եղաւ,  
Դրրդաց սար ու ձոր, գոռաց թունդ ելաւ,  
Թուրքաց կողմից երկու հազար մարդ ընկաւ,  
Հայերը ունեցան քսան նահատակ:

Վային փախաւ, գորքն էլ իրան հեռուեց,  
Անարգւած, անպատիւ դէպի Մուշ չւեց.  
Իջաւ դաշտ, անդէն հայոց ջարդ տւեց,  
Տեսաւ սասնեցոց հետ չի լինի կատակ:

Հայերն էլ դիրքերը թողին հեռացան,  
Որ թուրքերը անդէն հայոց ջարդ չտան,  
Ցրւեցին ամեն մի տեղ պահւեցան,  
Մինչև որ կծագէ մի նոր արեգակ:

Հմուտ կառավարիչ, խելահաս վարպետ,  
Մահից ու կրակից նա չը կեցաւ յետ.  
Կեցցէ Անդրանիկը ընկերներու հետ,  
Բոլոր աշխարհի մէջ ստացան հռչակ:

Ջիւան, ուժեղի մօտ եթէ խեղճ լինի,  
Տկարին օգնելը դժւար կը թւի,  
Տայ Ասուած, որ հայոց թեղն էլ էրնւի,  
Անձրև չը գայ, քամին փչէ աջողակ:



ՄԵՐ ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆԸ

Ախ մեր խմած ջուրը, մեր կերած հացը  
Դառնացել են, նրանց մէջը համ չկայ,  
Մեզ բաժին է ընկել սուգը և լացը,  
Ուրախ շաբաթ, ուրախ օր ու ժամ չկայ:

Ինչու չեղանք արիւնարբու աւագակ,  
Գոռոզ գոբոզ վրիժառու էրուզակ,  
Ծով աշխարհում մնացել ենք միայնակ  
Մեզ համար սրտակից բարեկամ չկայ:

Մարդ գիտենայ ինչ ենք արել մարդկութեան,  
Որ վարւում է մեզ հետ այսպէս չար դաժան,  
Որ չի անում արդար դատ ու դատաստան,  
Կամ քնել է մեր Ասուած, կամ չկայ:

Ջիւան, մեր արևը մուծ ամպի տակ է,  
Այցելութեան դուռը մեզ համար փակ է,  
Հայը առանձնացած թռչնոց խմբակ է,  
Մօտիկ արնակից մէկ երամ չկայ:



Յ Ո Յ Ս Ե Ր

Հայի լաւ օրը մօտեցաւ, էլ մեզ բաժին լաց չկայ,  
Լացն ու թացը կանանց բանն է, տղամարդին լաց չկայ,

Քաջի համար ի՞նչ լաց, ինչ բան, դուրս է գալիս ասպարէզ,  
Թշնամու դէմ կռիւ տալով, փուռի գետին, լաց չկայ:

Ահա Սասունի քաջերը ազատ-անփախ կուեցին,  
Պատերազմի դաշտի վերայ քաջ մեռնողին լաց չկայ,  
Նրանք մեռան, նահատական, բայց կենդանի անմահ են,  
Բոլոր Եւրոպան դղրդաց, չէ առանձին լաց չկայ:

Փազան քրդին, անգութ տաճկին լաց ու սուգը ինչ կանէ,  
Նրանց դէմը պէտք է սուր-թուր, գնդակ ու ժգին, լաց չկայ,  
Արշալոյսը արդէն ծագեց, շուտ կը բացւի տառաւոտ,  
Զամալի, կըլի հայոց ազգը ազատ, կըլին լաց չկայ:



ԳԱՌՆԻԿԻ ԵՐԳԸ

Ես խնդրում եմ, տխուր մայրիկ,  
Իմ մօտիցս հեռացիր,  
Իմ վէրքերիս մուք արիւնը  
Արտասուքով լացիր:

Երկու ազնիւ քաջ որդւոցդ  
Վերջը դու չխնդացիր,  
Մի լար, մայրիկ, նպատակս  
Թերի թողած գնում եմ:

Վարժարանից ընկերներս  
Սոււմբ-խոււմբ ելած պիտի դան,

Գերեզմանիս քարի վերայ  
Տխուր ձայնով պիտի լան:

Մեծ կենդրոնի հրամանով  
Ազնիւ կերպով զինուում եմ,  
Իսլամական շար թշնամուն  
Սոտի նման հնձում եմ:

Ես խնդրում եմ, սուր-սուր զէնքս  
Այլոց ձեռքին չթողնէք,  
Իմ ուխտածս կատարեցէք,  
Իմ գործերին հետեւէք:

Սոնարհ պատմեմ իմ յանցանքս,  
Նամակներով գրելով.  
Մի լար, մայրիկ, նպատակս  
Թերի թողած գնում եմ:



1904 թ. ՍԱՍՈՒՆՈՒՄ ԸՆԿԱԾ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Լերան լանջին խոր նիրհում են ֆէտայիներ յաւիտեան.  
Ազատ ննջել միշտ սիրում են զաւակները բնութեան,  
Արիք գնանք, հայ աղջիկներ, հասնենք այնտեղ Սեմ լեռն,  
Մեզի պաշտպան ջանֆիրդաներ մեզի համար քուն մտան:

Հասնենք քաջաց սուրբ գերեզման, թափենք արցունք աչերից,  
Մեր հայրենեաց հողին պաշտպան զրկեցանք քաջերից:

Ահա հասանք, քաղէ ծաղիկ, նաև երգենք միասին,  
Բոլորելով պարենք քաղցրիկ, յարգանք նրանց սուրբ շիրիմին:

Հիւսենք պսակ իրանց գլխին վարդ, մանուշակ, մելսակից,  
Երգենք նրանց յիշատակին, էլ չի վախենանք տաճկից,  
Մեզի համար զոհ զնացին դաշնակցութեան վեհ քաջեր,  
Կողք են տւած լեռան լանջին ազատութեան փրկիչներ:

Սեպուհ



ԿՈՉ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՍՐԴԱՅ

Վրէժ են գոչում անձեղ արիւններ,  
Անհոգ մնալը քեզ չի վայելեր,  
Հասիր օգնութեան այն հերոսներին,  
Որոնք պաշտպան են մեր որբիկներին:

Աղաչում եմ քեզ, սլացիր այնտեղ,  
Այնտեղ, որ կոտորում են շատ անձեղ,  
Ազատիւր նրանց քո արեան զնով,  
Որ ես քեզանից չը մնամ խռով:

Ղուրբան կը լինեմ քեզ այն ժամանակ,  
Յաղթական տարած երբ գրես նամակ,  
Ահա այն ատեն կասեմ քեզի մարդ,  
Որ կը փարատես իմ ցաւ, վիշտ ու դարդ:

Օրեր, ամիսներ և շատ տարիներ  
Քեզ պիտի օրհնեն հազար բերաններ,  
Կամ փրկիւր ազգդ կամ ընտրիւր քեզ մահ,  
Որպէսզի մնաս յաւիտեան անմահ:



ՔԱՅԼԵՐԳ ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ

Դատէ մեր դատը գազան թուրքի դէմ,  
Մինչ չը զիջանի քաջ հայերիս դէմ,  
Ինչ կարող է վանդակից ազատւած,  
Առիւծի յառաջ կանգնել դէմ առ դէմ:

Ազատ լեռների կորիւնի նման,  
Կանգնել ենք թուրքաց դէմ յանդիման,  
Ինչքան որ կուզէ թող վառէ վառօդ,  
Ձի կարող անել մեզի ոչ մի բան:

Շատ քուրդ ու տաճիկ մեզ դէմ միացան,  
Քանիցս անգամ եղան ցիր ու ցան,  
Դաշնակցութեան դրօշակի անից  
Ձեն կարող բռնել ոչ սուր, ոչ հրացան:


Նա թող սպասէ՝ ձմեռ թէ գարուն,  
Ինչ պիտի անէ Սասնոյ սարերուն,

Գնա դէպ հարաւ քո պաշտած վայրը,  
Շահ չի բերէ քեզ քո թափած արիւնն:

Անդրանիկ ունենք մենք քաջ խմբապետ,  
Իսկ լաւ ճանաչիր թուրք սպարապետ,  
Անառիկ ամրոց մեր գլխի վերև  
Կանգնել է մեզ համար սուրբ կարապետ:

Կայծակի նման տղերք ձախ ու աջ,  
Զարնելով տանենք դրօշակն յառաջ,  
Զէնքերիս ձայնից թող լեռներ գոռայ,  
Յաղթութիւն է մերն, մերն է սլոռայ:

Տ. Պ.



ՈՎ ՈՐ ԱԶԳ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔ ԶԻ ՃԱՆԱԶՈՒՄ

Ով որ ազգ ու հայրենիք չի ճանաչում,  
Հայր ու մայրը, անյայտ ընկեցիկ է նա,  
Փողոցներում առէք-առէք է կանչում,  
Առօրեայ վարձւած մունետիկ է նա:

Մարդկութեան մէջ առաջինն է ուժեղը,  
Որ պահում է սամուր հայրական տեղը,

Անհայրենիք, թափառական թոյլ ցեղը,  
Երկրէ երկիր ընկնող մուրացիկ է նա:

Ոչ ոք յարգ ու պատիւ չի տալիս, Զիւան,  
Թէ յարգել չը գիտէ մարդը ինքն իրան,  
Ինչ ժողովուրդ երկիր չունի սեփական,  
Ուրիշներու ձեռքին խաղալիք է նա:



Խ Ն Ա Մ Ի Ն

Ախ իմ պապի տանիցը ինձ դուրս արաւ թշնամին,  
Եկաւ տեսաւ, չօգնեց իմ սիրելի խնամին,  
Ո՛չ, հաւատալ չի լինի հիմիկայ բարեկամին,  
Ինձ այսօրւան հասցրեց նրանից գալած բամին:

Խնամիս ինձ տեսնելու երբ եկաւ իմ երկիրը,  
Թշնամիս գրգռելով կուրի փոխեց խնդիրը,  
Տուն ու տեղս քանդեց, երկինք ելաւ մոխիրը,  
Խնամուս պատճառովը մատնւայ անդգամին:

Թշնամիս հին էր թէպէտ, բայց մարել էր կրակը,  
Բարեկամիս գալովը վար առաւ իւր դիմակը,  
Այսպիսի վատ դրութեան հասցրուց իմ վիճակը,  
Քիչ մնաց, որ խնամիս ինձի ուղարկէր ջամին:

Մնամիս քաջ հեռատես, ինքը հարուստ մեծ անուն,  
 Աշխոյժ մարդիկ, զրաւող, իր շահի մէջը գիտուն,  
 Որգոցս մի քանիսը թողնելով ողջ տեղ ու տուն,  
 Ետեն ընկան գնացին փափագելով զրամին:

Իմ թշնամիս դաժան է, ես նրանից խոռով եմ,  
 Ուր որ գնամ, ուր լինեմ, խեղճ եմ, անապահով եմ,  
 Թէ ուզում էք իմանալ թշուառիս, արդեօք ով եմ,  
 Հայրենեաց զոհ գնացած որդին եմ քաջ Արամին:



ԱՅՍՊԷՍ ԵՄ ՀԱՍԿԱՆՈՒՄ

Ես սիրում եմ մերձաւորիս, բայց չեմ ատում օտարին,  
 Օտարն էլ ինձ նման մարդ է, ցանկանում եմ միշտ բարին,  
 Թէ օտարը ինձ չը ճնշէ, մէկ վնաս չը հասցնէ,  
 Չեմ կամենալ մինչև անգամ ոտքը հանդիպի բարին:

Գայլի գլխին աւետարան կարդալով չի դապի,  
 Նրան պէտք է բռունցք ցոյց տալ, որ վախենայ, ընկճւի.  
 Կան այս տեսակ օտար մարդիկ, նրանց հետ չի ապրւի,  
 Բարութեան միշտ հակառակ են, սիրահարւած են չարին:

Շատ սիրեցի և յարգեցի օտարին անձիս նման,  
 Իմ այս տեսակ ընթանալս համարեց վախի նշան,

Որովհետև նա ագէտ էր, բարբարոս էր իսկական,  
 Լաւութիւնս չը հասկացաւ զաւակը խենթ յիմարին:

Տես, Զիւանի, կայ այնպիսի երկիր, այնպէս կլիմայ,  
 Մերձաւորի և օտարի մէջը խտրութիւն չը կայ,  
 Վերը որբեր են բնակւում, վարը դե ու սատանայ,  
 Երկիրը երկինք չի դառնայ՝ գործը այլ է աշխարհին:



ՏԱՃԿԱՀԱՅՈՑ ՀԱՐՅԸ

Պատկառելի հայ աշխարհ խեղճ, ապիկար մնացիր,  
 Անօգնական, առանց տէր, անմխիթար մնացիր,  
 Սիրադ վէրքերով լեցուն միշտ ցաւազար մնացիր,  
 Չունենալով քաջ բժիշկ անտեղ ու ճար մնացիր,  
 Լրիւ հինգ հարիւր տարի բազմաշարժար մնացիր,  
 Չեղաւ քեզ մի ազատող, անբարերար մնացիր:

Երբ Բերլինում կայացաւ ղեսպանաց վեհաժողով,  
 Բուլղարները ունեցան իրենց հզօր ջատագով,  
 Տէր ունեցող ազգերը դարձան ուրախ անխոով,  
 Ազատեցին Մահմեդի լծից, եղան ապահով,  
 Իբր քեզ էլ օգնեցին վաթսուն ու մէկ յօգւածով.  
 Մի մեծ օգուտ չը տալով՝ նորէն տկար մնացիր:

Անգլիայի թագուհին դառնալով երաշխաւոր,  
 Խոստացաւ քեզի տալու արտօնութիւն նորինոր,  
 Պայմանիդ ձեռք քաշեցին եօթը անկախ թագաւոր,

Քու ամեն քաղաքներդ գնել հայից գլխաւոր,  
Վերջը մի բան դուրս չեկաւ, նորից դու թաւազոր,  
Պատառող գայլերու մէջ իբր ոչխար մնացիր:

Ճիշտ երեսուն տարի է, որ քեզ բարիք խոստացան,  
Բարի նորոգումներու դեռ չէ երևում նշան,  
Կիլիկիայի կողմերում Զէյթունին տրեց մի բան,  
Այն էլ սրի ուժով էր, Պապիկին ես պարտական,  
Համբերելով մաշկեցիր փնտուելով մի օգնական,  
Վերջապէս մինչև հիմայ աննախարար մնացիր:

Ձիւանուս քաջ յայտնի է, թէ դու որքան խնդրեցիր,  
Փոքր ինքնավարութեան մէկ հրաման խնդրեցիր,  
Հայերուդ կառավարիչ, բարի իշխան խնդրեցիր,  
Օրինաց արդարութիւն, սուրբ դատաստան խնդրեցիր,  
Այլոց նման գէնք չառար, գրաւոր բան խնդրեցիր,  
Կարծում են անիրաւունք նրա համար մնացիր:



ԽԱՅԻԱԾ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Խղճուկ թուրք ժողովուրդ, ինչու խաբւեցիր,  
Ուրիշների ձեռքին խաղալիք դառար.  
Հայերի հեա կոպիտ ոյժով չափւեցիր,  
Կուելովդ ասա ինչ օգուտ տարար:

Հային վրասելով, չունեցար վաստակ,  
Քու էլ տուն ու տեղդ եղաւ աւերակ.

Ջարդեցիր, Ջարդեցար միշտ աննպատակ  
Մէկին՝ տասը գնաց, դեռ խելքի չեկար:

Բարոյական մի մեծ ոյժ կայ հայի մէջ,  
Ձի հանգչի յաւիտեան այդ կայծը անչէջ,  
Ջամալիս յոյս ունի, որ կապրի անվերջ,  
Ինչ ազգ ունի կուլտուրայ ու գաղափար:



ԱՐՄԷՆ ՂԱԶԱՐԵԱՆԻ (Դժոխիս կամ Հրայր) ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գերեզմանիս թող արձանին վերայ  
Գրեն. յողթութիւն, թէ՛ կոթող է սա,  
Թող տեսնէ Հայաստան, թող կարգան հայ քաջեր,  
Տեսնեն զիրենց ընկեր,  
Նահատակ է պառկեր  
Ծոց Հայաստանի:

Անձուէր և քաջ Ղազարեանի պէս,  
Յուցնեն գերեզման քաջ Արմէնի պէս,  
Գալարի աղիքներ, թափեն արցունքներ,  
Տեսնեն զիրենց ընկեր,  
Նահատակ է պառկեր,  
Ծոց Հայաստանին:

Յուսով եմ կնքած աչացս վերջին քուն,  
Տեսնայ Հայաստան իւր ազատութիւն,  
Իմ գերեզմանիս քով թող կայնեն ու ձայնեն,

Ահա ազատութիւն,  
Ահա փրկութիւն  
Քաղցր Հայաստանի:

Հանգչին ոսկորներ մէջ իմ տապանին,  
Տեսնեմ փրկութիւն մայր Հայաստանին,  
Այն օրն թող կնքեն իմ գերեզմանիս վէժ  
Ազատ դրօշակներով,  
Հայ զինւորներով,  
Ու քահանաներով:



Խ Ր Ա Խ Ո Յ Ս

Ձան ֆիդայի քաջ տղերք,  
Կուեցէք միշտ անդադար.  
Մինչև խեղճ հայի ցաւին  
Գտնւի մէկը դեղ ու ճար:

Անդրանիկ քեզ օրինակ,  
Առիւծի պէս համարձակ.  
Դիմում էր դէպ թշնամին՝  
Պարզած հայի դրօշակ:

Առաջնորդ հայ խմբերին,  
Խրախոյս ձեզ ամենին.  
Յուսանք զուք էլ կունենաք  
Նրա անվեհեր հողին:

Գոյութեան մէջ կուողը,  
Կեանք կունենայ յաղթողը.  
Երկաթի դար է, կասեն,  
Ձէնքն է բաղդի վճռողը:

Արդար դատը հայ ազգի  
Սրով պէտք է որ լուծւի,  
Էլ ուրիշ միջոց չկայ,  
Միջոցն այս է, Չամալի:



ՆԵՐԿԱՅԻ ՊԱՀԱՆՁԸ

Հայը շատ բաներ սորուեցաւ,  
Դեռ շատ բան էլ պիտ սորւի.  
Ձէնքով խաղալ վարժեցաւ,  
Պատրաստել էլ պիտ սորւի:

Դառն փորձը մեզ ցոյց տւեց,  
Առանց զէնքի մենք մարդ չենք.  
Վատ հարևանը ստիպեց,  
Որ մենք էլ զէնք վեր առնենք:

Մեր պատիւը, գոյքը, կեանքը  
Միայն զէնքն է փրկողը.  
Թէ ոչ մեր խեղճ աշխատանքը  
Կը փախցնէ զրկողը:

Ի՞նչներու է պէտք արօր-գութան,  
Հաց աշխատել քրտինքով.  
Երբ մեր շուրջը ալան թալան,  
Մեզնից խլում են գօռով:

Հայն էլ պէտք է այնպէս վարւի,  
Ինչպէս վարւում են մեզ հետ,  
Այսպէս կեանքը էլ չի տարւի,  
Պէտք է կուել այսուհետ:

Իբրև ստրուկ ամբողջ վեց դար  
Համնողը մեզ կեղեքեց,  
Մենք տանջւեցանք չարաշար,  
Իսկ ուրիշը վայելեց:

Ուրեմն ձեզ պէտք է յուսալ,  
Փրկիչ սուր ու հրացան.  
Առանց զէնքի, երգիչ Չամալ,  
Կեանքն է խախուտ, անպաշտպան:



ՆԻԷՐ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Փոքր խմբով հազարների դէմ ելաւ,  
Քաջ առիւծի նման, քաջ Անդրանիկը.  
Եօթը ամիս հերոսաբար կուեցաւ  
Տաճկի դէմ յանդիման քաջ Անդրանիկը:

Թնդանօթների դէմ անվեհեր կանգնած,  
Հազարաւոր բրդեր գետին տապալեց,  
Իւր քաջ ընկերներով հրաշքներ գործեց,  
Շատ գովեստի արժան քաջ Անդրանիկը:

Մամնոյ լեռներիցը մինչև Վան հասաւ,  
Օսմանեան բանակի գլխին ցաւ դառաւ,  
Տարածեց աշխարհում քաջութեան համբաւ,  
Մեծ պարծանք հայութեան քաջ Անդրանիկը:

Պատերազմի հմուտ ունի գաղափար  
Չինւորներ պահելու դիրքերում յարմար.  
Չամալ, քիչ կը ձարւի այդպէս ղեկավար,  
Կուի մէջ անսասան քաջ Անդրանիկը:



ԱՆՎԵՐՉ ԴՍԻՆՐ

Հայութեան դէմ դաւ են լարում անդադար  
Մեր չորս կողմը շրջապատող ազգերը,  
Թակարդներ են սարքում անթիւ անհամար,  
Մեզ նախանձող, մեզի ատող ազգերը:

Ուզում են աշխարհից ջնջել հայերին,  
Կամ թէ հեռացել, ցրւել հայերին.  
Կաշխատեն իրանց մէջ ձուլել հայերին,  
Հայի հոգին չճանաչող ազգերը:

Չամալի, հայ ազգը իրան պահել է,  
 Սրանից էլ շատ վատ օրեր տեսել է.  
 Քառասուն դար դիմացել է, ապրել է,  
 Ջրացել են մեզի ջնջող ազգերը:



ԱՆՆՊԱՏԱԿ ԿՈՒԻԻ

Հայ թուրքական ընդհարումը Կովկասում  
 Ոչինչ տեղը, աննպատակ դուրս եկաւ.  
 Տգէտ ժողովուրդը թուրքաց անուսում,  
 Չը հասկացած, մեզ հակառակ դուրս եկաւ:

Հազարներ կարծեցին իրանց մէկերը,  
 Գուգուցին, ոտքի հանեցին բէկերը.  
 Գաղանի յոյս կտային նրանց շէկերը,  
 Ափսոս նրանց յոյսը, դատարկ դուրս եկաւ:

Հայը չէր ցանկանում աւեր, կոտորած,  
 Ինքնապաշտպանութեան դիմեց ստիպւած.  
 Հայ կտրիչը մէյդան ելաւ զէնք առած,  
 Թշնամու զէմ նա համարձակ դուրս եկաւ:

Սկզբում վատ թուրքը օրինակ աւեց,  
 Հայերուն սպանեց, թալանեց, այրեց.  
 Չամալ, վերջն էլ հայը նոյն բանը արեց,  
 Չարդեց, այրեց և աջողակ դուրս եկաւ:



Ե Ր Ր Ո Ր Դ Ո Ի Թ Ի Ի Ն

Ո՛վ սուրբ երրորդութիւն, դու օգնիր հային,  
 Չօրաւոր հրացան, վառօդ ու գնդակ.  
 Ամեն փորձանքներից պաշտպանիր հային,  
 Մեր յոյս ապաւէնը ամեն ժամանակ:

Քեզի մեղայ կուգան ողջ հայկազունքը,  
 Երկար տարիք գործած այս սխալմունքը,  
 Դու պէտք է լինէիր մեր պաշտամունքը,  
 Մենք գործել ենք զօրութեանդ հակառակ:

Ո՛վ հայր ամենազօր, մօսին հրացան,  
 Որդիդ գնդակը մեզ լինի պահապան,  
 Քո հողիդ վառօդը հասնի օգնութեան,  
 Շնորհդ անպակաս լինի շարունակ:

Դու ես այս աշխարհում մեզ կեանք պարգևիչ,  
 Նեղեալներուն հասնող, օգնող, ազատիչ.  
 Շատ ճնշւած ազգերուն դու եղար փրկիչ,  
 Հայոց էլ ողորմեա, տուր բարի վիճակ:

Չամալի



ԹՈՒՄԱՆԻ ԵՐԳԸ

Թորդեց յըմէն իր արքն ու փառք,  
 Կիզեր մըզիկ օգնութեան,

Խոզին ի խոց ուր սիրտ կրակ,  
Կտրիչներ խեթ քաջ Թուման:

Տուման պատեց մըր երկրին  
Օր թէ յիմցանք սև խաբար.  
էն կտրիչները յըմէն ընկան,  
Վախ մըր արևն էր խաւար:

Որսորդն ընկաւ, արիւն քամեց,  
Մըր աչերէն, մըր սրտէն,  
էն Տէր-Ղազար կրակ ցանեց,  
Վառեց մըզիկ էն օրէն:

Խայու խաչնի, խայու խաւատ,  
Տորա մացել ձեր գօրքնի.  
Որ յամեն ազգ կիտան մըզ շարդ,  
Դուք հաւարի չէք խամի:

Խայ կտրիչներ օր թէ մոռնար,  
Դուշմանի այդ արարքներ,  
Թող յաւիտեան էսիր դառնան,  
Սև անցնի ուրենց օրնի:



Ա Ձ Ա Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Ազատութեան այն վառ սէրը  
Թունդ որտաց իմ սրտում.

Իմ հայրենեաց սուրբ արիւնը  
Ինձ պատերազմ է կանչում, տրայլալալամ:

Ելէք, ելէք հայկազունք, (կրկնել)  
Ելէք Հայկայ գաւակունք,  
Ելէք, ելէք հայ եղբայրներ,  
Առնենք մեր սուր նիզակներ, տրայլալալամ:

Այս օրերը մեր քաջ կեանքին,  
Նւիրական թող լինի,  
Ով սիրում է ազատութիւն,  
Թող չմոռնայ հայ անուն, տրայլալալամ:

Ելէք, ելէք հայկազունք... և այլն:

Ահա եղբայրք, հայ եղբայրներ,  
Միրէք զրահ, սուր գէներեր.  
Մահի դաշտում Շաւարշանայ,  
Մեզի հրաւէր կը կարգայ, տրայլալալամ:

Ելէք, ելէք հայկազունք... և այլն:



ՉԱԽՈՐԳ ՕՐԵՐԸ

Չախորդ օրերը ձմրայ նման կուգան ու կերթան,  
Վհատելու չէ, վերջ կունենան կուգան ու կերթան,  
Դառն ցաւերը մարդու վերայ չեն մնայ երկար,  
Որպէս յաճախորդ շարւեշարան կուգան ու կերթան:

Փորձանք, հալածանք և նեղութիւն ազգերի զլիւից,  
Ինչպէս ճանապարհի կարաւան կուգան ու կերթան,  
Աշխարհը բուրաստան է յառուկ, մարդիկը ծաղիկ,  
Որքան մանուշակ, վարդ, բալասան կուգան ու կերթան:

Ոչ ուժեղը թող պարծենայ, ոչ տկարը տխրի,  
Փոփոխակի անցքեր զանազան կուգան ու կերթան,  
Արևը առանց վախենալու ցայտում է լոյսը:  
Ամպերը դէպի աղօթարան կուգան ու կերթան:

Երկիրը ուսեալ գաւակին է փայփայում մօր պէս,  
Անկիրթ ցեղերը թափառական կուգան ու կերթան  
Աշխարհը հիւրանոց է, Զիւան, մարդիկը հիւր են,  
Այսպէս է կանոնը բնական, կուգան ու կերթան:



**ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋԸ ԶՈՒՐ ԱՆՑԱԻ ԶԱՆՔՍ**

Օտարութեան մէջը զուր անցաւ ջանքս,  
Կարօտդ քաշելով մաշեցի կեանքս,  
Կրկին դէպի քեզ է սիրտս, բողձանքս.  
Ա՛խ, իմ երկիր, անուշ երկիր հայրական,  
Պապիս, մամիս, նախնիքներուս օթևան:

Ծննդավայր, երբ քեզանից հեռացայ,  
Կարծես թէ դրախտիցը դժոխքը ընկայ,  
Համըդ ու արժէքդ ես նոր իմացայ.  
Ա՛խ, իմ երկիր և այլն:

Տկարներուն թէ չը ճնշէ հօրը,  
Կարելի է որդին մոռանայ հօրը,  
Մանաւանդ քեզ նման հարագատ մօրը.  
Ա՛խ, իմ երկիր և այլն:

Օտարութեան հացը ասացին մեծկակ,  
Բայց գնացի տեսայ փոքր նկանակ,  
Դառնահամ անաճուն սպասող քսակ.  
Ա՛խ, իմ երկիր և այլն:



**Բ Լ Բ ՈՒ Լ**

Գնա բլբուլ մեր աշխարհից, էլ դու այստեղ մի երգիր,  
Մեր օրը սև, մեր կեանքը ցաւ, էլ այս երկրում մի երգիր:

Տանջած սիրտը անուշիկ երգից բրբրում է, խորանում,  
Սրտի վիշտը քո երգերից փրփրում է, լեռնանում:

Գնա բլբուլ մեր աշխարհից, գնա երգիր այլ երկրում,  
Ասա այնտեղ, որ մեր վարդից արեան թարմ հոտ է բուրում:

Որ ողբաձայն մրմնջացող վտակների հոսանքին  
Միանում են արեան շիթեր, առաջ շարժում մոլեգին,

Որ ծաղկազարդ հովիտներից մահւան ցուրտ հոտ է փչում,  
Որ մեր երկրում կանաչ դաշտերն իսկոյն կարմիր են ներկում:

Գնա, պատմիր, որ դու տեսար այրիացած մի երկիր,  
Սարեր, ձորեր կարմիր հագած արիւնագարդ մի երկիր:

Ախ ջան բլբուլ, էլ մի կանգնիր, գնա պատմիր աշխարհին  
Մեր ցաւ ու հոգան, վիշտն ու թախիժ, մեր օրերը դառնագին,  
Ժիրայր



ՆԻՔԻ ՀՆՁՍԱԿԵԱՆ ԶԻՆԻՈՐՆԵՐԻՆ

Հնչակեան զինուոր ուժգին համարձակ  
Շողացուր միշտ սուր, սուլեցուր գնդակ,  
Սուսնց տատանման անվեհեր թափով  
Դիմիր ու դիմիր դէպ վեհ նպատակ:

Նւիրիր կեանքդ քո եղբայրներին,  
Զոն բեր թշնամուդ քո կարուկ սուրին,  
Հակառակորդից դու մի երկնչիր,  
Դեղ դարման եղիր արնոտ վերքերին:

Չարութեան ոգու թոյնը սպանիչ,  
Թող հեռու կենայ սրտիցդ, ով կարիչ,  
Իբրև դրօշակին հարազատ պաշտպան,  
Ատիր միշտ ոխը, քէսը ու քայքայիչ:

Անխարդախ ոգով միշտ յառաջ գնա,  
Բռնակալ ուժը ջնջելու ջանա,  
Յեղափոխութեան թշնամու հանգէպ  
Եղիր անողորմ անգութ անխնայ:

Կարիչ հնչակեան ուժգին, համարձակ  
Շողացուր միշտ սուր, սուլեցուր գնդակ,  
Յեղափոխութեան սրբազան դաշտում  
Միայն այդ լինի քո վեհ նպատակ:

Վ. Տ.



ԿԱՐՆԵՑԻ ՔԵՌԻ ԱՐՇԱԿԻ ԵՐԳԸ

Երդումլած սուրբ դրօշակին,  
Քաջը կանգնած հաստատուն,  
Ծնւել է կարին քաղաքում,  
Ֆէրհատ քեռի անւանում:

Սլացաւ արծիւի նման,  
Հասաւ Սասունի դաշտը,  
Կոտորեց թշնամու զօրքին,  
Քաջը հասաւ փափագին:

Ուրախ էր քաջ Անդրանիկը,  
Զեռք-ձեռքի բռնած քաջերը,  
Կարգ են պահում զինուորները,  
Թնդաց Սասնոյ լեռները:

Հրահանգ կուտար Անդրանիկը,  
Պաշարեցին դիրքերը,  
Քաջ քեռիի գնդակիցը  
Գլորւում են թիւրղերը:

Հանգիստ չէ քեռիի սիրտը,  
Սպասում է նոր գարնան,

Հայեր, հասէք շուտ օգնութեան,  
Միջազն յիշէ յաւիտեան:



ՀՐԱԺԵՇՏ ՊԱՆԴՈՒԽՏԻ

Մնաս բարեաւ, իմ հայրենիք,  
Իմ մանկութեան օրօրան,  
Քեզ պաշտել եմ ես վառ սրտով,  
Եւ կպաշտեմ յաւիտեան:

Թէև բազրս խլում է ինձ  
Նւիրական քո գրկից:  
Բայց երբէք չէ կարող ջնջել  
Սուրբ անունդ իմ սրտից:

Ուր որ երթամ, ուր որ ապրիմ,  
Թէկուզ օտար երկրի մէջ,  
Սիրել եմ քեզ և այդ սէրը,  
Կը մնայ անխախտ ու անվերջ:

Մնաս բարեաւ, իմ հայրենիք,  
Ինձ կեանք, արև պարգևող,  
Մնաս բարեաւ, վերջին անգամ  
Համբուրում եմ քո սուրբ հող:



ՔԱՆԻ ՈՒՇ ԶԷ

Սթափւեցէք, եղբայրք, բաւական է քուն,  
Ոչ հայրենիք մնաց, ոչ էլ գերդաստուն:

Թշնամիք միացած կուղեն վերջացնել,  
Հայեր, մեզի մնաց շուտ գէնքի դիմել:

Երթանք, արիւն թափենք,  
Թուրջից վրէժ առնենք,  
Տառապեալ հայ ազգին  
Ընդ միշտ ազատենք:

Այսքան գարեր եղանք հլու հպատակ,  
Անվերջ համբերել էր հայի նպատակ:  
Ինչ շահ բերեց մեզի համբերութիւնը,  
Միթէ վիճակւած է մեզ գերութիւնը:

Հերիք անհող մնանք,  
Եթէ քիչ ուշանանք,  
Ժամանակը կանցնի,  
Յետոյ կը գղջանք:

Ազգերի անցեալը թէ լաւ ըմբռնենք,  
Յանկալի սուրբ օրին շուտով կըհասնենք,  
Միանանք մի ուժով, յառաջ ընթանանք,  
Ազագայ սերունդին ասպարէզ բանանք:

Տղերք, յառաջ յառաջ,  
Բաւ է լաց ու հառաչ,  
Յաղթութիւն մերն է,  
Զարնենք ձախ ու աջ:

Տ. Պ.



ՇՈՒՇԻԱՅ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Շուշայ լեռներում, հսկայ լեռներում  
Մուրեր են խաղում, հրացան պայթում,  
Մի օր չի անցնում առանց արիւնի,  
Առանց մի քանի տամնեակ դիակի:

Հանգիստ օրերը անցան վաղ շուտով,  
Մարդիկ ապրում են ցաւով, տանջանքով,  
Ամեն մի դաշտում, ամեն մի ձորում,  
Յորենի փոխան մարդիկ են հնձում:

Գիշերւայ խաւար մթութեան միջից  
Մընէ են գոչում մի քանի ձայներ,  
Եւ այդ ձայներից բորբոքած քաջեր  
Վրէժ են կրկնում հայ քաջ զինւորներ:

Վատթար խաւարին լոյսը փոխարինեց,  
Կուռ խումբերը մի կողմ հաւաքեց,  
Երևում էին քարուքանդ շէնքեր,  
Կրակի ձարակ դարձած տնակներ:

Թուրքի արիւնից գետակներ հոսում,  
Անթիւ դիակներ ընկած են դաշտում.  
Բազմաթիւ թուրքի զազիր ամբոխից  
Չազատեց մէկը քաջ հայի ձեռքից:

Տ. Պ.



ԱՆՎԵՀԵՐ ՔԱՁԸ

Նայւացքդ կրակ է, դէմքդ յաղթանդամ,  
Քեզի տեսնող մարդուն սարսափ կը ազդէ.

Արժանի ես ազգիդ լինելու անդամ,  
Քոյր ու եղբայրքդ թշնամուց ազատէ:

Քեզ ասում են չար թշնամու կործանող,  
Պողպատեայ շինութիւնները դու քանդող,  
Յաղթութեան դրօշակը առաջ տանող,  
Բռնակալիդ դու քո ձեռքովդ դատէ:

Հինգ դար է, որ թշնամին մեր քասակից,  
Որպէս տգրուկ ծծում է մեր արիւնից,  
Օգնեցէք թշնամու սպառնալիքից,  
Քանի որ մեր հետեանքը շատ վատ է:

Մի կեանք ունիս ազգիդ զոհելու համար,  
Յիշէ քաջ Վարդանին սուրբ գործի համար,  
Եղիր սուրբն Ղևոնդ, բանակ առաջ տար,  
Գառը գայլերի առաջիցը դու գատէ:

Մաղթում ենք քեզի Աստուծով երկար կեանք,  
Պէտք է Հայաստանին փառք ու պատիւ տանք.  
Կամ քեզի հետ մեռնենք, քեզի հետ խնդանք,  
Տէր Աստուած քո նպատակդ կատարէ:  
Միհրանեան



# Ց Ա Ն Կ.

1. Եկան ու անցան . . . . .	5.
2. Գարուն . . . . .	5.
3. Երկուսը մէկ են . . . . .	6.
4. Հպարտ տիկին . . . . .	7.
5. Բազու . . . . .	8.
6. Թուրքը և հայը . . . . .	10.
7. Հաշտութեան հրեշտակ . . . . .	11.
8. Չար դեր . . . . .	12.
9. Տրտունջ . . . . .	12.
10. Մեր գրութիւնը . . . . .	13.
11. Մէկ է . . . . .	15.
12. Նախագգացում . . . . .	15.
13. Ի՞նչ ասին . . . . .	16.
14. Միաբանութիւն . . . . .	17.
15. Էլ չունիմ . . . . .	19.
16. Յոյս . . . . .	19.
17. Լաւ գուշակութիւն . . . . .	20.
18. Խանասորի մարտը (1897 թ.) . . . . .	21.
19. Պէտոյի յիշատակին . . . . .	22.
20. Քայլէնք . . . . .	22.
21. Հայդուկի նշանածի երգը . . . . .	23.
22. Տուր ձեռքդ, եղբայր . . . . .	24.
23. Հայդուկի երգերից . . . . .	25.
24. Սամնոյ ձորերում . . . . .	26.
25. Ձան հայրենիք . . . . .	28.
26. Հայդուկ, մի վախենար . . . . .	28.
27. Կուեցէք տղերք . . . . .	29.
28. Գուրգէնի անմահ յիշատակին . . . . .	30.

29. Աւետիք Մալոյեանի յիշատակին . . . . .	31.
30. Հայդուկի երգերից . . . . .	32.
31. Շխալու մասին . . . . .	33.
32. Ղազախեցի Սարգիսը . . . . .	34.
33. Մօտիկ ցաւերից . . . . .	35.
34. Հին երգ . . . . .	36.
35. Արեգակ . . . . .	37.
36. Սէմայի . . . . .	38.
37. Արիստ. Արք. Սեդրակեանի մասին . . . . .	39.
38. Անիրագործելի երազ . . . . .	39.
39. Ահն, մայրիկ, ես գնում եմ . . . . .	41.
40. Չայն տուր, սիլ ֆիդայ . . . . .	42.
41. Չինւած, պատրաստւած . . . . .	43.
42. Ազատութեան հրաւէր . . . . .	44.
43. Հայդուկի երգերից . . . . .	45.
44. Երգ քաջարի հայդուկի . . . . .	46.
45. Քրիստափորին . . . . .	47.
46. Հայդուկի երգը . . . . .	48.
47. Հայրենեաց սիրոյ համար . . . . .	49.
48. Անդրանիկին . . . . .	51.
49. Նոր կեանք . . . . .	51.
50. Անկեղծ խորհուրդ ընկերիս . . . . .	52.
51. Ջրի ազգասէրներին . . . . .	53.
52. Միութիւն . . . . .	54.
53. Ուղերձ Մուրադին Ղափանում . . . . .	55.
54. Ներկայ կեանքից . . . . .	57.
55. Անփորձութիւն . . . . .	58.
56. Որբի վիճակը . . . . .	59.
57. Տաճկահայի թշւառութիւնը . . . . .	60.
58. Անմեղ հալածանք . . . . .	61.
59. Հայ աշուղ . . . . .	62.
60. Խեղճի օրը . . . . .	62.
61. Հայաստանի անկախ Սասուն . . . . .	63.
62. Թումանեանի յիշատակին . . . . .	64.

63. Աւդալի յիշատակին . . . . .	65.
64. Հայդուկի երգերից . . . . .	67.
65. Որսկան ախպէր . . . . .	68.
66. Մերօր փառայի երգը . . . . .	68.
67. Գուրգէնի երգը . . . . .	70.
68. Բաւ է, եղբայրք . . . . .	71.
69. Դանակը ոսկորին հասաւ . . . . .	72.
70. Կողոպտւած եկեղեցի . . . . .	73.
71. Անէծք . . . . .	75.
72. Խաղաղ դաշտի որդիք . . . . .	76.
73. Հայդուկի վերջին ուխտը . . . . .	77.
74. Խանասորի կուռուժը ընկածներէ յիշատակին . . . . .	79.
75. Թիկունքդ լայն . . . . .	81.
76. Կռունկ Հայաստանի . . . . .	82.
77. Հայդուկի երգերից . . . . .	83.
78. Երբ ես մեծացայ . . . . .	84.
79. Լաւ, մէրիկ ջան . . . . .	85.
80. Կուի կարօտը (Հ. Ա. Վ. Քեանին) . . . . .	86.
81. Երկրի ձայնը . . . . .	87.
82. Հոգ չէ թէ մեռնեմ . . . . .	88.
83. Չայն տուր ամենքին . . . . .	90.
84. Ազատութեան մարտիկներին (Ա. Խ-ի յիշատակին) . . . . .	91.
85. Ի շառ ժողովուրդ . . . . .	91.
86. Կը հիւսեմ երգեր . . . . .	92.
87. Կեցցեն շարքերը . . . . .	93.
88. Թումանին և իւր ընկերներին . . . . .	94.
89. Շէխալու երգը . . . . .	95.
90. Շէխալու Ղազարի երգը . . . . .	96.
91. Հնչակեաններէ մարշը . . . . .	97.
92. Կոչ միութեան . . . . .	98.
93. Բաւական է քուն . . . . .	99.
94. Հրաժեշտ . . . . .	99.
95. Ոչ յոյս, այլ գործ . . . . .	100.
96. Թիֆլիզի երգը . . . . .	101.

97. Մշեցու մօր աղաչանքը . . . . .	103.
98. Մենք պէտք է կուենք . . . . .	104.
99. Ես հանեցի սուրս պատեանից . . . . .	105.
100. Հերիք է, մայրիկ, դու ինձ փայփայես . . . . .	107.
101. Եթէ կամիք փրկել թշառ հայրենիք . . . . .	108.
102. Նւէր . . . . .	109.
103. Սերօրի անմահ յիշատակին . . . . .	110.
104. Դերոյեանի յիշատակին . . . . .	112.
105. Երգ Աշոտ Թաթուլի . . . . .	113.
106. Անթիւ դարեր թափառեցինք . . . . .	113.
107. Անխղճօրէն . . . . .	114.
108. Սիրուն ծիծեռնակ . . . . .	115.
109. Որսորդի խմբի յիշատակին . . . . .	116.
110. Խանի և Մուրադի երգը . . . . .	119.
111. Տուրբախի երգը . . . . .	120.
112. Երբ Կարնեցի Գարեգինի . . . . .	121.
113. Սասունցիք . . . . .	122.
114. Հայկական մարշը . . . . .	123.
115. Անդրանիկին . . . . .	124.
116. Մենք անկեղծ զինուոր ենք . . . . .	125.
117. Քաջ անդրանիկին . . . . .	126.
118. Դաշնակցականներէ մարշը . . . . .	127.
119. Սերեմջեանի յիշատակին . . . . .	128.
120. Թող երգէ բլբուլ . . . . .	129.
121. Հայդուկի երգերից . . . . .	130.
122. Մուշեղի երգը . . . . .	131.
123. Թող . . . . .	132.
124. Թող կորչեն տաճիկները . . . . .	133.
125. Խանի երգը . . . . .	134.
126. Զինուորին . . . . .	136.
127. Սասունայ սար . . . . .	137.
128. Երգ զինուորի . . . . .	138.
129. Նաւրուզի երգը . . . . .	139.
130. Զմեռն անց կացաւ . . . . .	140.

131. Անտէր կուլայ Հայաստան . . . . .	141.
132. Նպատակիս գէթ մի մասը կատարէր	142.
133. Մի գեղեցիկ պարզ գիշեր էր . . . . .	143.
134. Դու զո՞վ խնդրես . . . . .	143.
135. Երազ . . . . .	145.
136. Ահա բացւեցաւ մի նոր ասպարէզ . . . . .	145.
137. Մայրիկիս . . . . .	146.
138. Դարդս լացէք, սարի սմբուլ . . . . .	147.
139. Երբ հեռացայ հայրենիքէս . . . . .	148.
140. Շուշուայ երգը . . . . .	149.
141. Աքսորականի երգը . . . . .	150.
142. Գէորգ Չաւուշի երգը . . . . .	152.
143. Երգ Ալագեազի . . . . .	153.
144. Երգ սոխակի . . . . .	154.
145. Կովկասի երկինք . . . . .	155.
146. Արարատ մեծ սար . . . . .	156.
147. Պարզիւր աղբիւր . . . . .	157.
148. Զէյթունի երգը . . . . .	158.
149. Մշեցու երգը . . . . .	159.
150. Մուշեղի երգը . . . . .	159.
151. Հայրենիք . . . . .	161.
152. Համազասպի երգը . . . . .	163.
153. Ոչ որ մեզ այնպէս չէ հարւածեր	164.
154. Մշեցու գանգատը . . . . .	165.
155. Երեք ձայն . . . . .	166.
156. Իրաւունք . . . . .	167.
157. Ազգ իմ, որքան նկուն մնաս, . . . . .	168.
158. Խաւարել եմ ինչպէս գիշեր	169.
159. Ալիւրի մէյդան . . . . .	170.
160. Տաճկահայաստան . . . . .	172.
161. Մօրս վերջին համբոյրը . . . . .	173.
162. Հայ ազգի որդիք . . . . .	174.
163. Անիրաւ ձկնորսը . . . . .	175.
164. Արագն եկաւ լափին տալով . . . . .	176.

165. Գող կատու . . . . .	177.
166. Բարոյական աւաղակ . . . . .	178.
167. Մօր սուղը . . . . .	179.
168. Հրաշալի Տափի թաղ . . . . .	180.
169. Հազար ինը հարիւր . . . . .	181.
170. Խրախոյս քաջերին . . . . .	185.
171. Պատմական . . . . .	186.
172. Մեր այժմէութիւնը . . . . .	191.
173. Յոյսեր . . . . .	191.
174. Գառնիկի երգը . . . . .	192.
175. 1904 թ. Սասունում ընկած ընկերներին	193.
176. Կոչ հայ երիտասարդաց . . . . .	194.
177. Քայլերդ Իաշնակցութեան . . . . .	195.
178. Ով որ ազգ ու հայրենիք չի ճանաչում	196.
179. Խնամին . . . . .	197.
180. Այսպէս եմ հասկանում . . . . .	198.
181. Տաճկահայոց հարցը . . . . .	199.
182. Խարած ժողովրդին . . . . .	200.
183. Արմէն Ղազարեանի (Իժուք կամ Հրայր) յիշատակին.	201.
184. Խրախոյս . . . . .	202.
185. Ներկայի պահանջը . . . . .	203.
186. Նւէր Անդրանիկին . . . . .	204.
187. Անվերջ դաւեր . . . . .	205.
188. Աննպատակ կռիւ . . . . .	206.
189. Երրորդութիւն . . . . .	207.
190. Թումանի երգը . . . . .	207.
191. Ազատութիւն . . . . .	208.
192. Չախորդ օրերը . . . . .	209.
193. Օտարութեան մէջը զուր անցաւ ջանքս	210.
194. Բլբուլ . . . . .	211.
195. Նւէր հնչական գինւորներին . . . . .	212.
196. Կարնեցի բեռի Արշակի երգը . . . . .	213.
197. Հրաժեշտ պանդուխտի . . . . .	214.
198. Քանի ուշ չէ . . . . .	214.
199. Շուշուայ լեռներում . . . . .	215.
200. Անվեհեր քաջը . . . . .	216.

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Երես	112	վերջին երեք սողերը աւելորդ են:
»	169	4 սող վերևից պէտք է լինի—խաւարել
»	»	7 » ներքևից » » » —չատ
»	171	1 » » » » —չարի
»	171	9 » » » » —Բորչալուխ
»	171	14 » վերևից » » » —մենք

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

Գրվածք՝ Թիֆլիս, Սուքիասի տարածքի № 3, Տեփան  
Մելիք-Յոգոմոյանի կողմից՝ Կնիճայնի մագ. «Գուտենբերգ»  
և Կնիճայնի մագ. «Փարոս» Ն. Մատինյանի.  
Երևան. Կնիճայնի մագ. Ս. Օգանճանյանի.

«Ազգային գրադարան»



NL0389506

72.783